

# ԵԶՄԻԱԾԻՆ



1964

ԱՆԺԳ  
RUSURH  
Յովանոս

# ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ  
Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ

Ա  
1964



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԻԱԳՐԱԿԱՆ—Անցնող տարին	3
ՄԱՅՐ ԱԲՈՈՈՒՄ	5
Հ. Ճ. ՄԻՐՈՒՆԻ—Պոլիս և իր դերը	7
Ա. ԱԼԳՈՅԱԶՅԱՆ—Պուրագակ և Հայտառան	17
Հ. ԽԱԼՓԱԽԵՑԱՆ—Դպրոցներ ու գրատեղը միջնադարյան Հայտառանում	25
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏէՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ—Բազմավէպ	32
Մ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ—Հայոց Նովի կարսղիկոսանիստը	39
Հանգիստ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանի	51
Կ. Ք.—Հանգիստ Հ. Ներսոս վարդապետ Ակինյանի	53
Վաշինգտոնի հայոց նորակառույց Սուրբ Աստվածածին եկեղեցու օծումը	57
Սփյուռքանայ կոմպոզիտոր Համբարձում Թերթերյանի նողինակային համերգը Եյու-Ցուրենում	57
Առաջնորդ նոգենորհ Տ. Տիրայր վարդապետի այցելուրյունը	58
Սայար-Նովայի ծենյան 250-ամյակի Սոփիայի մեջ	58
Բոլղարանայ «Երևան» մշակութային միուրյան Կոլարովգրադի երգի և պարի անսամբլի այցելուրյունը	58
Սայար-Նովայի ծենյան 250-ամյակի տոնակատարուրյունը Բոխարեստի մեջ	59
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	60



Խմբագրության հասցեն՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ, ԷԶՄԻԱՆԻՆ

«ԷԶՄԻԱՆԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմանական ԽՍՀ, Էջմիածնի Շահումյան պատմական համալիրում գործում։

Rédaction de la revue „Etchmiadzine”, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աքոս Ս. Էջմիածնի տպարան, 1964 թ.

ՀՐԱՄԱՆԱԴԻ

S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ  
ՎԵՀԱՓՈԽ ԵՒ ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



## ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ

### ԱՆՑՆՈՂ ՏԱՐԻՆ

Պատմության գիրկն անցավ 1963 թվականը, ողջ աշխարհի համար իրադարձություններով հարուստ մի տարի:

Այսանորի և հրաշափառ Ս. Ծննդյան տոների խորհուրդը, ժամանակի և կյանքի մեծ տոնը, մի անգամ ևս իր վրա է բևեռում քրիստոնեական աշխարհի ուշադրությունը, մեր խոհերն ու զգացմունքները:

Նոր տարի է: Հուկումով, լավատեսությամբ բաց ենք անում Գալիքի՝ նոր կյանքի, նոր հնարավորությունների դռները, մաղթելով, որ «ժամուց և ժամանակաց» Արարիչը, «զմիս ամս որ գալոց է, խաղաղութեամբ և պարագալց ամօք պահեսցէ»:

Վաղվա նկատմամբ վառ հույսի, անկոտուայ հավատի մեջ է, որ է՛լ ավելի է գեղեցկանում կյանքը և զգացվում է նրա վեհությունը, նպատակալացությունը, ժամանակի հավիտենականությունն ու բերկանքը:

Այն անգամ հրաժեշտ տալով անցնող տարվան և ողջունելով նորը, մարդիկ սիրելի սովորություն են դարձրել խորհրդածել ժամանակի և կյանքի մասին, որպեսի գալիք օրերը լինեն, թե՛ իրենց և թե՛ մարդու շրջապատի համար, բարիքներով լեցուն և օրինություններով բեղմնավոր օրեր:

«Տուր զիամար տնտեսութեան բռ» (Ղուկ. ԺԶ 2):

Անցնող ժամանակն ստիպում է մեզ անսալ մեր խոճմտանքի ծալին և պատասխանատվության խորունկ զգացումով խորհրդածել, հանրագումարի բերել մեր կյանքից խլված օրերի հաշիվը:

Նոր տարին բացվում է մեր նախածքի և գործունեության առաջ որպես նոր կյանքի, նոր

հնարավորությունների մատյան, և մեր գերագույն կոչումն է ժամանակի և կյանքի այդ մատյանը լցնել աստվածահաճո, ժողովրդանվեր, մարդասիրական ազնիվ գործերով և աշխատանքներով:

Սաղմոսերգուն, կյանքի իր սեփական փորձառությամբ, շնչում է մարդկային սովորական կյանքի վաղանցիկ բնույթը և փառաքանում է Աստուծու և ժամանակի հավիտենականությունը: Արդարն, մարդու կյանքի օրերը «ընդ առաւտու որպէս դաշարի վուարճասցին և ծաղկեսցին, ընդ երեկոյս թարշամեսցին, չորասցին և անկցին» (Սաղմ. ԺԹ 6—7):

Կարևորը, էականը ոչ թե ժամանակի փոփոխությունն է մարդու համար, այլ կյանքի և մարդու փոփոխությունը, զարգացումը, կատարելագործումը անփոփոխ և հավերժական ժամանակի մեջ:

«Ամենայն կեանք մեր անկայուն են, շարժական է և ոչ մնացական: Ո՛չ մեծութիւն, ո՛չ փառք, ո՛չ ուրախութիւն, ո՛չ հեշտութիւն և ո՛չ այլ ինչ, այլ ամենայն ինչ փոփոխի և գնայ որպէս հին տարին գնաց» (Գրիգոր Տաթևացի):

Նոր տարվա առաջին տոնը Քրիստոսի Ծննդյան տոնն է, որը մի տեսակ սրտագին կոչ է կամ ազդարարություն, ուղղված քրիստոնյա աշխարհին, հասկանալու համար, թե մարդիկ ի՞նչ կերպերով, ինչպիսի ներշնչումներով և ի՞նչ պարտականությունների կատարումով պիտի կարենան արժեքավորել իրենց կյանքն ու ժամանակը:

Ահա այսպիսի սրտագին խոհերով և զգացումներով, քրիստոնեական վառ հավատով է դիմավորում հայ ժողովուրդը նոր տարին թե՛ իր

Մայր Հայրենիքում Սովետական Հայաստանում և թէ՝ Սփյուռքի տարածքի վրա:

Անցնող տարին մեր հայրենիքի, մեր ժողովրդի և Հայ Եկեղեցու համար նորանոր հաջողություններով հարուստ տարի հանդիսացավ:

Ազգային-Եկեղեցական տեսակետից 1963 թվականը պատմական տարի հանդիսացավ մեր Եկեղեցական տարեգրության մեջ նրանով, որ Ամենայն Հայոց Գեհափառ Հայրապետը անձամբ իր օրինությունները և հայրենի աշխարհի ողջունը տարավ Լոնդոնի, Երուսաղեմի, Կահինի, Ալեքսանդրիայի և Հնդկաստանի մեջ ապրող իր պավակներին և վերահաստատեց մեր Եկեղեցական միությունը, հոկտեմբերի 26-ին, Երուսաղեմում, ողջագորվելով Մեծի Տանն Կիլիկիի Գեհափառ Խորեն Կաթողիկոսի հետ:

Ամենայն Հայոց Գեհափառ Հայրապետի արտասահման կատարած հովվապետական երրորդ ուղևորությունը մի անգամ ևս վերածվեց հայ հավատացալ ժողովրդի, Հայ Եկեղեցու միության անխպելի ցնծատոնի և հանդիսացավ մեր ժողովրդի սիրո և երախտագիտության վառ արտահայտությունը դեպի նրա անձնվեր և զոհաբերվող Հայրապետը և դեպի մեր վերածընված Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստան:

Անցնող տարին ապնիվ հպարտության զգացումներով լցրեց ճշմարտապես հայրենասեր յուրաքանչյուր հայ մարդու սիրությունը:

Հայ ժողովուրդը, իր հայրենի սրբազն հողի վրա, իր հայրենի պետականության ազատության հաղաղ պայմաններում, ստեղծագործ և շինարար աշխատանքի նորանոր հաջողություններով է դիմավորում իր նոր տարին, բառացիութեն հրաշքի հավասար վիթխարի փոփոխություններ արձանագրելով մշակույթի, արքսատի, գիտության, գրականության, ժողովրդական տնտեսության, լուսավորության, առողջապահության և զյուղատնտեսության բնագավառներում և հայ ժողովրդի հոգևոր և բարոյական նոր կյանքի կերտման ասպարեզում:

Նոր տարվա սեմին, պայծառ է մեր վերածընված համար հայրենիքի ներկան, էլ ավելի հուսալից, խոստումնալից է մեր ապագան, մեր լուսե գալիքը:

Անցնող տարին մասամբ արդարացրեց նաև համայն մարդկության հոկյուրը և եղավ, արդարն, պատմական մի ժամանակաշրջան, որի ընթացքում հետևողական և համառ շանքեր թափվեցին պետական ղեկավար գործիչների, քաղաքական, կրոնական տարբեր համոզմունքների տեր միլիոնավոր մարդկանց կողմից, մեղմելու միջազգային լարվածությունը, վերացնելու «սա-

ռը» պատերազմի հոգեբանությունը, փակելու նոր պատերազմի ճանապարհը, ամրապնդելու ժողովուրդների անվտանգությունը և բարելավելու պետական տարբեր սիստեմ ունեցող կառավարությունների փոխմարաբերությունները:

Մարդկության վերև, այս նոր ժամանակների հորիզոնի վրա, փայլում է արդեն հույսի աստղը, մոտ է առավոտը խաղաղության:

Անցնող տարում, օգոստոսի 5-ին, Մոսկվայում, Կրեմլի մեծ պալատում, Սովետական Միության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի կառավարությունները ստորագրեցին մթնոլորտում, տիեզերական տարածության մեջ և ջրի տակ միջուկային փորձարկումների արգելման պայմանագիրը:

Միջուկային փորձարկումների արգելման Մոսկվայի պայմանագիրը անցնող տարվա միջազգային մեծագույն իրադարձությունն էր, որն ընդունվեց հսկայական գոհունակությամբ և խորին բերկրանքով:

1963 թվականին կայուն խաղաղության՝ մարդկության վերջնական և վեր նպատակին՝ հասնելու գործի մեծ սկիզբը դրվեց:

Նոր տարվա սեմին, ողջ մարդկությունը խորապես հասկանում է և գնահատում Մոսկվայում ստորագրված պայմանագիրի աստվածահան և մարդասիրական նշանակությունը և հոգու խորքից աղոթում:

«Զի լուսցին պատերազմունք,  
Դադարեսցին յարձակմունք թշնամեաց,  
Տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի»:

Թո՞՛ 1964 թվականը խաղաղության վերջնական հաղանակի տարին լինի բովանդակ մարդկության համար:

Թո՞՛ 1964 թվականը մեր վերածնված հայրենիքի և հայ ժողովրդի համար լինի նոր նվաճումների և հաղանակների տարի իր հայրենի օջախում, խաղաղ և ապահով:

Թո՞՛ 1964 թվականը Քրիստոսի հրաշափառ և Ս. Ծննդյան երկնատուր չնորիներով լինի մեր Եկեղեցու համար ճշմարիտ միության, հոգևոր և ազգային համագործակցության նվիրական և բեղմնավոր տարի:

Այս բարեմաղյություններով, նոր տարվա հասուկ այս խորենով և Ս. Ծննդյան տոնի հոգենորոգ ներշնչումներով և պետիսով դիմավորենք հույսի և կյանքի կրկնակ տոները՝ հայկական ամանորը և Ս. Ծնունդը:

Ծնորհավոր նոր տարի, մեր սիրելի՝ եղբայրներ և քույրեր, որ ի Հայաստան աշխարհ և ի սիրուս:

Ծնորհավոր նոր տարի:  
«Քրիստոս ծնաւ և յայտնեցա՛ւ»:





## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1963 թվականի նոյեմբերի 17-ին, կիրակի, «Բարեկենդան Յիսոնակաց պահոց» Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Նարեկ Վարդապետ Շաքարյանը:

\* \*

Նոյեմբերի 17-ին, կիրակի, եկեղեցական գործերով Մոսկվա մեկնեց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը:

Նոյեմբերի 23-ին, շաբաթ, Հոգեշնորհ Հայր սուրբը եղավ Թբիլիսիում և պատարագեց Ս. Գևորգ եկեղեցում, եկեղեցու նավակատիքի առթիվ, և քարոզեց «Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր զքոյ սուրբ զեկեղեցի, զսա պահեա ի խաղաղութեանը բնարանով!»

Նոյեմբերի 24-ին, կիրակի, և դեկտեմբերի 1-ին, կիրակի, Հայր սուրբը պատարագեց Մոսկվայի Հայոց Ս. Զարություն եկեղեցում և քարոզեց «Դու պահեա զառաջնորդս և զեղբայրութիւնս մեր ամբողջ և անխոռվ ի կամս ողորմութեան քոյ բնարանով!»

Դեկտեմբերի 2-ին Հոգեշնորհ Հայր սուրբը վերաբարաձավ Մայր Աթոռը:

\* \*

Նոյեմբերի 21-ին, հինգշաբթի, «Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճարն» Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիկ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:

\* \*

Նոյեմբերի 24-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Տեսէք և զգոյշ լեռուք ի խմորոյ փարիսեցւոց» (Մատթ. ծԶ 6) բնարանով:

\* \*

Նոյեմբերի 27-ին, չորեքշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Մայր Աթոռ ժամանեցին Գրագուն, Հոգեւոր Խորհրդի անդամներ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արքահամբե-

նը և ճարտարապետ պր. Միքայել Մազմանյանը, որոնք Վեհափառ Հայրապետին էին ընկերակցել Լոնդոն, Երուսաղեմ և Ալեքսանդրիա ուղարկության ժամանակ:

Երևանի օդանավակայանում ժամանողներին դիմավորեցին Մայր Աթոռի միարաններ և հարազատներ:

\* \*

Նոյեմբերի 29-ին, ուրբար, Մայր Տաճարում կատարվեց գոհարանական աղոթք և կառավարական մաղթանք՝ Հայաստանում սովորական կարգերի հաստատման քառասուներեքերորդ տարեդարձի առթիվ:

\* \*

Նոյեմբերի 30-ին, շաբաթ, «Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորշացն մերոց թաղէսուի և Բարթողմէսուի» Մայր Տաճարում պատարագեց արժանապատիկ Տ. Հովհաննես քահանա Մարուբյանը և քարոզեց հավուր պատշաճի:

\* \*

Նոյեմբերի 30-ին, շաբաթ, Հոգեւոր Ճեմարանում հանդիսավոր նիստով նշվեց Նոյեմբերի 29-ը՝ Հայաստանում սովորական կարգերի հաստատման քառասուներեքերորդ տարեդարձը: Նշանավոր տարեթվի մասին զեկուցումով հանդես եկավ Ճեմարանի ուսաց լեզվի զասատու Գ. Գեորգյանը և շեշտեց Սովորական Հայաստանի կատարած նշանաւումները ուսման, գիտության, արդյունաբերության բնագավառներում: Հանդեսի գեղարվառական բաժնում Ճեմարանի ուսանողները կատարեցին երգեր և արտասանություններ:

\* \*

Դեկտեմբերի 1-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիկ Տ. Հովհաննես քահանա Մարուբյանը:

\* \* \*

Դեկտեմբերի 7-ին, շաբաթ, Հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ՝ Տ. Հայկազուն արքապիսկոպոս Արքահամբանը մեկնեց Ենինական՝ տեղի Ս. Աստվածածին եկեղեցում պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ միխթարելու հավատացյալներին:

Սրբազն հայրը Մայր Աթոռ վերադարձավ դեկտեմբերի 10-ին, երեքարթի օր:

\* \* \*

Դեկտեմբերի 8-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:

«Հայր մեր»-ից առաջ գերաշնորհ՝ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը դամբանական խոսեց եղերաբախտ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանի մահվան առթիվ, ծանրանալով հանգուցյալի կյանքի և գործունեության վրա: Այսուհետեւ, գերաշնորհ Տ. Սահակ արքապիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի նախագահությամբ, կատարվեց հոգեհանդիսություն արքապանի հիշատակին:

\* \* \*

Դեկտեմբերի 9-ին, երկուշաբթի, «Յղութիւն Ս. Աստուածածին յԱննայէ», Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը:

\* \* \*

Դեկտեմբերի 9-ին, երկուշաբթի, Մայր Աթոռ ժամանեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պր. Գրիգոր Բեքմելյանը, որը Մուշեղի հայոց հոգեւոր հովիվ գերաշնորհ՝ Տ. Պարգև եպիսկոպոսի հետ ներկա էր եղել Վատիկանի ժողովին, որպես դիտորդ Հայատանյայց Առաքելական Եկեղեցու կողմից:

\* \* \*

Դեկտեմբերի 14-ին, շաբաթ, «Տօն Սրբոյն Յակովայ Մծրնայ հայրապետին», Մայր

Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը:

\* \* \*

Դեկտեմբերի 15-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ՝ Գրիգոր վարդապետ Եղիայանը և քառողից «Որ խոնարհեցուցանէ զանձն իւր բարձրացի» բնաբանով:

\* \* \*

Դեկտեմբերի 22-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Ելլուցյանը:

\* \* \*

Դեկտեմբերի 23-ին, երկուշաբթի, Երևան ժամանեցին հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արթուր Հատիոյանը, որոնք մաս էին կազմում Վեհափառ Հայրապետի շքախմբին՝ նրա Հնդկաստանում կատարած ուղեգործության ժամանակ: Օղանավակայանում դիմավորելու էին գնացել հոգեշնորհ Տ. Մհերոս վարդապետ Պալյանը, դիվանապետ պր. Հ. Առաքելյանը և Մայր Աթոռի տնտեսական բաժնի վարիչ պր. Ա. Ռոթուլյանը:

\* \* \*

Դեկտեմբերի 24-ին, երեխաբթի, «Տօն Սրբոյն Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսին»:

Մայր Տաճարում, Ս. Ստեփանոս նախավկա սարկավագի Ս. Սեղանի վրա, սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և քարողից «Տէր, մի՛ համարիր դոցա զայս մեղս» բնաբանով:

\* \* \*

Դեկտեմբերի 29-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ\*

21. ՄԱՐԴ ՄԸ ՈՐ ԿՓԲԿԵ ԻՐ ԴԱՐԸ

Մեծ անուններ շթողուցին մեզի Պոլսո հայ գաղութին առաջին չորս դարերը, բայց այս քանի մի անունները, որոնք մեզ կմնան այդ չորս դարերեն, կրնան պճնել իրենց շրջանը բացառիկ փառքով:

Տագնապի դարն ալ ունեցավ իր մխիթարանքը. հայ ժողովուրդը շթողուց, որ Պոլսո ամոթով դագաղ զնե զայն:

Երեմիա Զելեբի Քյոմյուրճյան, որ այդ դարուն ապրեցավ, կրնա սերունդի մը տեղը բռնել, և զուր չէ բացառիկ մեծարանքը, որ իր հիշատակին կընծայվի երեք դարե ի վեր, ամեն կողմէ անխսիր:

Երեմիա Զելեբի, շառավիդ Ակնեն գաղթած չին գերդաստանի մը, ծնած էր 1637 մայիս 13-ին Պոլսո մեջ, և անդրանիկ զավակն էր Մարտիրոս քահանա Քյոմյուրճյանի: Ուսման ծարավը համակած էր զինք առաջին օրեն և փոքր տարիքեն հմտացած էր ան շատ մը լիզուններու: Պաշտպանությանը տակ իր Ամբակում մորեղորոր, որ օրվան երևելիններեն էր, բազմաթիվ ճամբրություններ կատարած էր Երեմիա իր տղայության, և երբ Ամբակում կվախճաներ 1655-ին, զայն կորդեգրեր այս անդամ ժամանակին ամենեն ակա-

նավոր հայը՝ Աբրո Զելեբին: Երեմիա ոչ միայն պաշտպանյալն էր անոր, այլև խորհրդատուն, և իր թելադրությամբ է, որ Աբրոն հաճախ պիտի աշակցեր հանրօգուտ գործերու և կարիքներու, պետության մոտ իր վայելած դիրքով հայ համայնքը փրկելով նաև բարդ կացությունների:

Իր բնածին ձիրքերով, իր ամբարած պաշարով, իր տքնելու ընդունակությամբ և մանավանդ իր հայու սրտով Երեմիա աշքառու դեմք մը հանդիսացավ շուտով Պոլսո մեջ, վայելելով տակավ բացառիկ հեղինակություն մը հայուն ու օտարին մոտ:

Երեմիա Զելեբիի կյանքին և գործունեության մասին առավելապես իր երկերուն մեջ իր իսկ տված նոթերեն գիտենք: Իրմով զրադողները այնպես կարծեցին պահ մը, թե ան կպատրաստվեր հոգեռական դառնալու և թե պարագաները ետ կեցուցին զայն: Ճիշտ է որ դպրության չորս աստիճանները ստացած էր ան, ինչպես շատերը կստանային այն ժամանակ հայ պատանիներեն: Բայց ուրիշ որոշ բան մը չենք գիտեր ինչպես իր մանկության, նույնպես իր պատանեկության մասին:

«Երեմիայի վրա խոսողներուն ամենն ալ լուր են և բան մը չեն հայտներ անոր պատանեկական կյանքեն, —կգրե Թորգոմյան, — չենք գիտեր, թե ինչ եղած են անոր գլխավոր զրադուները, մանավանդ այն ազդակները, որոնք յուր թարմ ուղեղը վառեցին և հեռացուցին զինքն եկեղեցական ասպարեզնեն, առանց սակայն ատելի ընելու անոր՝

\* Շարունակված «Հշմիածին» ամսագրի 1962 թվականի Խ թ-ից, ԺԲ-ից, 1963 թվականի Խ թ Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից, Է-Ը-ից, Թ-Ժ-ից, ԺԱ-ից և ԺԲ-ից:

Հայ Եկեղեցին, որուն ամենահզոր ախոյան մը և ամենաշքրմ պաշտող մը եղավ մինչև կյանքին վերջը: ... Անոր գրածներեն այնպես կ'հետևցնեմ, թե Երեմիա շատ կանուխեն ականատես եղած ըլլալով ժամանակի եկեղեցականներու պորտարույժ, զեխ կյանքին, անոնց ամուկ կենցաղին ու ազգակործան վատթար գործերուն, զզվանք զգացած, պաղած է անոնցմե և չէ ուզած ասպարիզակից գոտիլ անոնց, բարեբախտաբար»<sup>475</sup>:

«Երեմիա էլ նշանակված էր քահանայության համար և ստացավ սարկավագության աստիճան, — կգրե Լեռն իր կարգին, — բայց դրանից հեռուն չգնաց, չնայած հոր շանքերին»<sup>476</sup>:

1659 թվականին, երբ արդեն 22 տարեկան է, զայն կատնենք իրեն խորհրդական և նոտար Մարտիրոս Կաֆայեցի պատրիարքին: Սովորական խորհրդականե ավելի բան մըն էր ան Պոլսո հայոց Պատրիարքարանին մեջ: ինքն էր, որ պահ մը տեր կանգնեցավ հայ ժողովորդի արժանապատվության, երբ հայ կյանքը թատր էր այլազան զայթակղությանց, և իր ծեռք ձգած հեղինակությամբ հեռացուց շատ մը դժնակ տափանապներ հայ ժողովորդի գլխին: Հետո, ամբողջ 35 տարի, ան հասավ հայ ժողովորդի ամեն նեղ օրին: Դիրք շահեցավ պետության մեջ, և իրեն տրվեցավ «չելեբի» տիտղոսը, զոր այն դարուն ոչ միայն մեծատունները կհափշտակեին, այլև մտքի և արվեստի մարդիկը: Ան դիրք շահեցավ և օտարներուն մեջ, որոնք նույնական հաշվի կառնեին իր հեղինակությունը:

Երեմիա Զելեբի աշխերը փակեց 1695-ին, հազիվ 58 տարեկան, բեղմնավոր կյանք մը ձգելով ետին, բայց այնպիսի պահու մը, երբ հայ ժողովորդը իր ծառայությանց կարիքը ուներ որևէ ժամանակի ավելի: Սակայն ապրած իր այդքան կյանքն ալ բավական եղավ հայ ժողովորդի պատմության մեջ աղվոր էշ մը գրելու, որ ավելի կաղվորնա քանի դարբը անցնին:

Ակինյան, որ խղճամիտ ուսումնասիրություն մը նվիրեց Երեմիայի կյանքին ու գործունելության, սապես կրնորոշ զայն.

«Միակողմանի չէր իր կրթությունը. Հմուտ էր եկեղեցական գիտություններու, ներհուն պատմագիտառության, ծանոթ բազմաթիվ լեզուներու, հատկապես հայերենի, թուրքերենի և Հունարենի, նաև ևելքոպական լեզուներու, հետաքրքիր ներքին և արտաքին, աղգային և միջազգային քաղաքական իրադարձութիւններու»

<sup>475</sup> Գոկտ. Վ. Թորգմայն, «Երեմիա Զելեպի Քէօմիրճեան, Պատմութիւն Ստամուլոյ», Ա, Վիեննա, 1913, էջ 142—143:

<sup>476</sup> Խն. «Հայոց պատմություն», էջ 367—368:

Բարեհամբույր էր բնավորությամբ, խաղաղասեր, անանձնախնդիր, ընդունակ գրավելու սրտեր, հաշտեցնելու թշնամացած ուգիներ: Դեպի ընտանիք և հարազատներ խանդաղակաթ էր իր սիրտը, և զեպի արտաքս մարդասեր և ազգասեր: Մեղմական բնության հետ ուներ կորով, հաստատամություն, աներկյուղություն, աներկյուղություն, երբ մանավանդ հասարակ շահը, ազգին օգուտը վտանգի մեջ էր:

Ուներ իրեն հիմ կրոնն և ազգը, Եկեղեցին և հայությունը, Եկեղեցվո պայծառության անձնազո՞ն էր, ազգին շահերուն նախանձախնդիր: Կատեր կուսակցական ոգին, անձնասեր, փառասեր ձգումներ: Բովանդակ անձով պաշտպան կանգնած: Էր Ազգային Եկեղեցվույն, ազգային շահերուն: ինչ կընդդմանար այս կետերուն, հոն կծառանար իշանձը. կրողոքեր ազատադեմ, աներկյուղ, անձնազո՞ն: Երիւ իրար պատառող կողմերու մեջ համոզկեր կմատչի, հաշտարար կկանգնի. թեպետ կընդունի հարվածներ, բայց հանձն կառնե ամեն վիշտ, առանց տեղին խուսելու: Ճշմարտությունն և ազգին շահը նկատի ունի, անշահախնդիր, անկաշառ, անաշառ:

Կհարդգեր Եղիազարը. բայց երբ տեսավ անոր մեջ փառասերը, ազգային միության թշնամին, բարձրացուց յուր ձայնը, և հեռացավ: Բարեկամեն որպես թշնամի:

Վայելեց հարգանք. բայց ի սեր ճշմարտության նշավակ եղավ նաև հալածանքի»<sup>477</sup>:

Երեմիա Զելեբի մեծ էր նախ մտքի իր բացառիկ պաշտօռվ: Քիշեր այդ դարերուն իր հմտությունն ունեին: Այն մեկն եղավ հաղվայուած այն աշխարհականներեն, որոնք երբեկցից զարդարած են հայ պատմությունը, վանականի համբերությամբ պաշար հավաքած են և վանականի տքնությամբ գրքերը դիզած գրքերու վրա, բայց և մաս առած կյանքի հուզումներուն և փոթորկիներուն մեջ:

Օրմանյան, ինք ևս, ակնածանքով կարտասանե Զելեբիի անունը՝ իրեն մտավորականի. «Երեմիա նշանակելի գեմք մըն է մեր աղգային գործիչներու մեջ՝ յուր ինքնատիպ և բազմակողմանի ձիքերով: Հավասարապես ներհուն ելքուպական լիզուներու, և տեղական հունարենի, և տաճիկ և արաբացի գրականության, փոխադարձաբար մեկն մյուսին թարգմանեց կարեւոր գործեր, և շատ ևս աղգայնոց համար՝ հայերենի, և օտարաց համար հայերենե փոխարկեց, հայրենական լեզվին կատարյալ հմտությամբը: Ցուր երկասիրությունները բազմաթիվ են և զարմանալի պեսպիսություն մը կներկայեն, որոնց

<sup>477</sup> Հ. Ակինյան, «Երեմիա Զելեբի Քյոմյուրճյան», Վիեննա, 1933, էջ 59—60.

մեջ Աստվածաշումշի տաճկերենի թարգմանութենան, մինչև զավեշտ ոճով և ռամկորեն բարբառով ոտանավորներ կդտնվին»<sup>478</sup>:

Երեմիա Զելերի մեծ եղավնակ իր հանրային գործունեությամբ: Եղան պահեր, երբ անգրեթ նախախնամական դեր կատարեց Պոլսու հայ համայնքը ալեկոծող դեպքերուն մեջ, որովհետև բոլոր կնճոտությանց ժամանակի իրեն կհառեին ամենուն աշքերը, սկսելով այն վայրկյանեն, երբ պաշտօնական դեր մը կհանձնվեր իրեն Պատրիարքարանի մեջ: Այդ պահերեն մեկը Մարտիրոս Կաֆայեցիի պատրիարքության տարին էր, երբ ահավոր ճնշածամ մը կանցներ ազգը:

Երեմիա Զելերի մահը աղետալի եղավ Պոլսու հայ համայնքին սպառնացող նոր ալեկոծությանց նախորյակին: Իր հաշտարար ոգին և մանավանդ իր վայելած հեղինակությունը թերևս կարենային առաջքը առնել դպվանական վեճերու ստեղծած նոր բարդությանց, որոնք պիտի բնկերին իր մահեն քիչ հետո, զարհուրելի շափերու հասնելու համար հաջորդ դարու առաջին տասնամյակներուն, և Պոլիսը թեմ գարձնելու համար մարդուրսներու նոր շահատակությանց, որոնց զոհ պիտի զառնար, ավազ, Երեմիա Զելերի իր իսկ եղբայրը՝ Կոմիտաս քահանան: Այնպես որ, շատ ճիշտ կրստ Օրմանյան, երբ կգրե, թե «Բազմարդյուն և բազմաշխատ Երեմիայի 60 տարեկան վախճանիլլ կնկատենք, ոչ միայն տարիքին կողմէ տարահաս, այլև ազգային շահերու կողմէ տարաժամ, զի անոր մահվանե ետքը, ավելի սաստկացան բուռն և խիստ ձեռնարկներ, զորս կրնար խափանել Երեմիա յուր խոհական խորհուրդներով, եթե տակավին ապրեր: Գուցե և յուր եղբոր Կոմիտաս քահանային վրա ալ կազդեր, զգուշացնելով զայն բուռն ընդդիմություններեն, որ անողակի կերպով պատճառ եղան աղետարեր դեպքերու»<sup>479</sup>:

Մեծ էր նաև հեղինակությունը, զոր Երեմիա Զելերի կվայելեր օտարներու մոտ, ըլլա պնտական շրջանակներու, ըլլա դեսպանատանց մեջ<sup>480</sup>:

Նվազ նշանակալից չէր Երեմիա Զելերի նախանձախնդրությունը՝ կանխելու վեճերը հայոց և ուրիշ տարրերու միջև: Այնպիսի դարու մը, երբ հայոց և Հունաց հարաբերությունները հաճախ կծառեին մասնավորաբար սուրբ տեղյաց շարաբաստիկ վեճերուն Երևան, Երեմիա Զելերի նման դեմքերու կարուտ էր ազգը, որպեսզի բարդությանց առաջքը առնեն<sup>481</sup>:

Պոլիս Երեմիային կպարտի նաև տպարան մը հիմնելու փորձը: 1677-ին հիմնված այդ տպարանին կյանքը կարճատև եղավ: Ան փակվեցավ հազիկ երկու գիրք տպելե հետո: Բայց ան կվկայի այն բացառիկ նախանձախնդրության մասին, որով համակված էր Երեմիա՝ Պոլիսը օժտելու համար հայ տպարանով մը, որ առաջինը պիտի ըլլար այն անդրանիկ փորձեն հետո, որուն ձեռնարկեր էր Աբգար Դպիր ավելի քան զար մը առաջ, 1567-ին, կարճ ժամանակ մը տեսելու համար լոկ, այսինքն հազիկ տարի մը<sup>482</sup>:

Երեմիա Զելերի մեծ էր մանավանդ իր հայու սրտով: Ան իսկական հայրենասեր մըն էր, այս բառին ամենեն խոր իմաստովը: Անոր շերմ սերը գեպի իր ժողովուրդը ի հայտ կուգա բոլոր այն մարդերուն վրա, ուր ան գործած է, և բոլոր այն գրությանց մեջ, որոնք ելած են իր գրչեն:

Պետք է իր ձեռագիրներուն մեջ թափառիլ, շոշափելու համար տվալտանքը, զոր զգացած է իր հոգին հայ ժողովուրդի մեծ վշտին առջև, և զայրույթը, որով համակվի ան, ակնարկելու ժամանակ հայ ժողովուրդի գողոթային հարեւան զուգ լուծերու տակ:

«Տարեգրական պատմությին»-ը, զոր հորինած է ան, պատկերն է անդոհանքին, որ իր հոգին կխռովէ հայ ժողովուրդի մարտիրոսագրության ի տես: Այդ երկը անտիպ կմնացարդ կարենալի զայն տեսած է Վենետիկի իր քավարանին մեջ»<sup>483</sup>,

Հիմնվելով ցարդ անծանոթ մնացած ձեռագիր մը ինչ-ինչ էջերուն վրա, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան մեծ կրերե հատված մը, ուր Երեմիա Զելերի իր բովանդակ ցասումը կպողթկա թուղթ սուկթաններու բռնապետության անսգորույն լուծին դեմ»<sup>484</sup>:

Երեմիա Զելերի փրկություն կհուսար եկրոպական պետություններեն, ինչպես կրեկի ներրողի մը մեջ, զոր էջմիածնի խորհրդաժողովն իր հետո, 1679-ին, ուղղեց Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկիին և ուր զայն կմեծարեր իրեր բրիստոնյա ժողովուրդներու

«Սիրող, խրեամօղ, դաստիարակօղ,

Հայր և դատաւոր, տէր և բազաւոր...

Ապստամբողաց թշնամեաց յաղթօղ...

Եղենագործից սաստօղ և տանջօղ,

Դատօղ և սպանօղ, արդար բազաւոր...

Քափի և ազատիչ, փրկիչ բազաւոր»<sup>485</sup>:

<sup>478</sup> Հ. Ակինյան, «Երեմիա Զելերի Քյոմյուրճյան», էջ 67—68:

<sup>479</sup> Ա. Հարբիանայան, «Պատմություն հայերին դարության», թ. Վենետիկ, 1905, էջ 360—362:

<sup>480</sup> Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ...», թ. էջ 22:

<sup>481</sup> Երեմիա Քեօմիւնեան, «Օրագրութիւն», Երուսաղեմ, 1939, էջ 526:

«Ավելի ուշ,— կըսե Ա. Հովհաննիսյան,— Քյոմյուրճյանը գրեց «Ուղերձ համառօտ առ կուղովիկոս ԺԴ թագաւոր Գաղղիոյ, ի պատեհառիթ գահակալութեան նորին... ի դեսպանովեան Պ. Փեթրո ժէրարդէնի, որ բնակէր ի Ղալաթիա»։ Այդ ուղերձը, ինչպես և 1682 թ. Քյոմյուրճյանի «Պատարանք իւրոյ ժամանակին» քերթվածը անտիպ են ցարդ և մեղ ծանոթ են միայն վերնագրերով»<sup>486</sup>։

Կուղովիկոս ԺԴ-ի ուղարկված այդ նամակին մասին Սրուսաղեմի վանքին թիվ 1058 ձեռագրին մեջ (էջ 65ա) հետևյալ տողերը պահպանված են սակայն։

«Ուղերձ առ թագաւորն Յուանցու։

Ի փառս Տեառն մերոյ Ցիսուսի Թրիստոսի ի վերայ աշտանակի եօթնազահեան լուսով բարձրացեալ քրիստոսասէր թագաւորն Լուդովիկոս, որ ընկալեալ է զթագաւորութիւն առ ի Հովուելոյ զրազմահոյլ ժողովուրդս Տեառն։

Չորս և արժանապէս կարգաւորեալ և զարդարեալ՝ ըստ որում և ինքն հոգեկան մասամբք պայտառացեալ, և մեղաց աղտն ի բաց բարձեալ հետի յինքենէ, և առ տէրունի զշաւեղն որ է ճշմարիտ ճանապարհ և կեանք։ Վասն որոյ խնդրեսցուք և աղօթս ծիստ տարածեսցուք առ ամենակարող բարձրեան Թրիստոս, զի զարժանաւոր ծառայն իւր զԴժ-ան Լուդովիկոս թագաւորն ի ստուգապէս ճանապարհն և ի կեանս հասցէ յանեղծն և յափտենական փառս օրէնքալ արքայութիւն։ Եւ զդիրանեծին զպայազատացեալ թագաֆառանդ զորդիսն իւր փառօք թագաւորականօք պակեսցէ յազգաց ազգս ամբողջ կենօք ի պարժանս և ի յաղթութիւն ժողովրդեան իւրոյ։ ամէն։

Դրեցեալ եղան ի թվին Քրիստոսի 1687 ի փաշաթօրութեան պարոն իշխանի Փեթրո Ճերարտինի ի Ղալաթա քաղաքին<sup>487</sup>։

Ակինյան կկարծե, թե այս ուղերձը լուգովիկոս ԺԴ-ի մատուցված է Մատթեոս Աբրո Ջելերի կողմէ։

Ակնարկելով Երեմիա Զելերի ցույց տված բննադատական վերաբերմունքին հայ հակամարտ հոսանքներու հանդեպ, ակալեմիկոս Աշոտ Հովհաննիսյան դիտել կուտա, թե ան այնուամենայնիվ սի վիճակի շգտնվեց արգասավորելու քննադատական իր հայացեները նոր որևէ ծրագրով, նախագծել հայ ազատագրական շարժման համար նոր մի ճանապարհ, մատնանշելով հայ ժողովրդին նրա երազած Ավետյաց երկրի ապահով ուղին։ Առ այժմ Քյոմյուրճյանը ևս ոտք էր դնում խարուսիկ այն արահետի վրա, որով

<sup>486</sup> Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ», էջ 222։

<sup>487</sup> Հ. Ակինյան, «Երեմիա Զելերի Քյոմյուրճյան», էջ 149—150։

իրենից առաջ ապարդյուն քայլել էին բազմաթիվ ուրիշները»<sup>488</sup>։

Տվյալներ մեզ կապական ճշտելու համար այն կապը, զոր Երեմիա Զելերի կրնա ունեցած ըլլալ այն փորձերուն հետ, որոնք եղան իր ապրած դարուն՝ հայ ժողովուրդի ազատագրության համար այս կամ այն լուծեն։

Երեմիա Զելերին չէր կրնար տեղյակ եղած ըլլալ այն խորհրդակցություններուն, որոնք Մայր Աթոռի մեջ տեղի ունեցեր էին հայ ժողովուրդի տառապանքին ճար գտնելու համար և ճամբար հաներ էին ծերունի կաթողիկոս մը, որպեսզի երթա նվրոպայի խղճմտանքը բախի։ Օրմանյան կկարծե, թե երբ 1679-ին Պոլիս կուգար Զուղայեցին պատվիրակության մը հետ, պետք է Երեմիայի ևս հաղորդված ըլլան «Էջմիածնի խորհրդակցության մեջ հաստատված զաղտնի տեսությունները, և անկե հարժարագույն խորհրդական մը չէր կրնար գտնել կաթողիկոսը, թե՛ օտարաց հետ հարաբերության մտնելու, թե՛ պետական զգուշավորությունները կարգադրելու և թե՛ ազգային կազմակերպության կետերը ճշտելու համար»<sup>489</sup>։

Ակադ. Ա. Հովհաննիսյան ևս այն կարծիքին է, որոր նշանավոր գրողն իր կյանքի այդ ժամանակամիջոցում դիմուղվում էր դեպի Հակոբ Զուղայեցու բռնած ճանապարհը։ Հիրավի տակալիին այդ կաթողիկոսի մահվան առթիվ գրած իր «Ողբ»-ի մեջ, անգուսելով նրա հակառակորդներին, Քյոմյուրճյանը բևեռում էր ազգի միտքը տեսիլներով սալարկած հին հուսակայանի վրա»<sup>490</sup>։

Իրականին մեջ Երեմիա Հակոբ Զուղայեցիի մահվան առթիվ գանձ մը և շորս տաղեր հորինած է, որոնք պահպանված են Երևանի վանքին 1042 թիվ ձեռագրին մեջ (էջ 70ա—77թ)<sup>491</sup> և որոնք կպանացնեն հանգուցյալ կաթողիկոսը իր բազմազան բարեմանությանց մեջ, հաճախակի ակնարկելով նաև անոր տագնապներուն և պայքարներուն՝ հանուն հայ ժողովուրդի բարօրության։

Հիշյալ գանձին մեջ Երեմիա, հանգուցյալ կաթողիկոսը ողբացած ժամանակ, կողքա և հայ ժողովուրդի դարավոր գերությունը։

«... Ազգին Արշակեան պայծառ քագին բարձան և նուաստացան... Օտար ազգի յարեան ի մեզ բռնացան, մեք ճառայական։ Աշխարհ մեր առան, զվաստակ մեր կերան մեզ ակն յանդիման։

<sup>488</sup> Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ», էջ 220—221։

<sup>489</sup> «Ազգապատում», թ, էջ 2612։

<sup>490</sup> Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ», էջ 222։

<sup>491</sup> Հ. Ակինյան, «Երեմիա Զելերի Քյոմյուրճյան», էջ 193—218։

Բարի աղօթիւ սուրբ հայրապետիս,  
Տէր, այց արա՝ տառապեալ ազգիս  
Աղաշեմք: Լուր Տէր...<sup>492:</sup>

Առաջին տաղին մեջ ևս նույն ցասումով  
կոգեկոչ հայ ժողովուրդի ճակատագիրը.

«Ողբամ զիեզ Հայոց աշխարհ...

Բարձան քագի ի մեր զիլոց

և եղամ ողորմ ու լալի,

Վանեալք, տարագրեալք, ցրուալք՝

ոտից կոխ ազգաց օտարի...

Վարդանաց պատերազմէն՝

մինչև ցարդ մեր թշուառելի.

Տապաստ անկեալ Երկիր մեր՝

ի պարսից, տանկաց, քարարի...

Սպառ սպուռ և ցիր և ցան՝

կոտորեալ, վարեալ և գերի...<sup>493:</sup>

Երկրորդ ողբին մեջ կավաղի հայ ժողովուրդի միւնուուն դառն ճակատագիրը.

«Արշակունիին սպառեցան,

և ոչ ունիմք թագրատունիսն,

և Ռուբինեանքն պակասեցան,

կենցաղի հայոց աւաղելի.

Տաքեացին Մովսէս չուեալ,

Փիլիպոսին մեք վերջացեալ,

Տեառն Յակոբայ հայրապետիս

ի մէջ այսօր արդ հրաժարեալ,

ի հայրեննաց իւր տարագրեալ

յօտար աշխարհ գայ վտարեալ...<sup>494:</sup>

Հաջորդ ողբը կպատմէ այն սուրգը, որով Պոլիս գերզման դրավ իր հայրապետը, իսկ վերջինը գովասանական տաղ մըն է՝ ի պատիք հանգուցյալ հայրապետին:

Այս քանի մը մեշքերուսմերն ալ բավ են վկայելու այն շերմ սիրուն մասին, որով համակած էր Երեմիա Զելերին դեպի իր ժողովուրդը, և այդ այնպիսի շրջանի մը, երբ հայ կյանքը կիրքով ու փոխադարձ տաելությամբ բռնկած, թունավոր մթնոլորտ մը ստեղծեր էր սուլթաններու մայրաքաղաքին մեջ:

Երեմիա Զելերի մեծ եղամ նաև և մանավանդ իր բեղմնավորությամբ: Քիչ հեղինակներ, մեր մեջ, կրցած են այնքան արգասարեր ընել իրենց գրիշը: Դժբախտաբար իր գրական ժառանգությունը զեռ սեփականությունը չէ դարձած հանրության և մեծ մասմբ կղզված կմնա գրադարաններու դարակներուն մեջ:

Երեմիայի Երկերն կարեռ մաս մը իրենց մոտ կպահեն Վենետիկի Մխիթարյաններու: Երեք դարեր ի վեր կօգտվին անոնցմե, նյութ կրաղեն շարադրելու համար իրենց Երկերը, ինչպիս ըրած է Հ. Մ. Զամշյան, Երբեմն

<sup>492</sup> Հ. Ակինյան, «Երեմիա Զելերի Թյուրքաբան», էջ 193—194:

<sup>493</sup> Անդ, էջ 203—204:

<sup>494</sup> Անդ, էջ 208:

փշրանքներ կնետեն անոնցմե հայ քանասերներու, ինչպիս ըրած է Հ. Հովհաննես Թորոսյան, բայց չենք գիտեր ինչո՞ւ կղզուշան զանոնք լրիվ ճանշնել գործելու սկսելի հետո. անմիջապիս կանգ կառնեն<sup>495:</sup>

Երեմիա Զելերիի երկերուն մասին առաջին տեղեկությունը Զամշյանը տվավ, որ, ըսենք ի դեպի, առաջին օգոտագրութողը եղավ Երեմիային իրենց մոտ մնացած ձեռագիրները, իր պատմության վերջին հատորը հորինած ժամանակ:

Երեմիա Զելերիի գրական ժառանգութենեն կարևոր մաս մը ի պահ կմնա Երուսաղեմի հայոց վանքին մեջ ևս Բարեբախտաբար հայ բանասիրությունը ոչ միայն ժանոթ է անոնց լրիվ ցանկին, այլ նաև սպազոված ունեցավ այդ երկերուն ամենեն կարևորներն մին, «Օրագրութիւն»-ը<sup>496</sup>, շնորհիվ Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանի, հետագային պատրիարք, որուն այլապիս ալ շատ բան պարտական է հայ բանասիրությունը:

Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի մատենադարանն ալ Երեմիայի ձեռագիրներն տասնյակ մը ունի, որոնք հետզհետե կսկսին ժանոթ գառնալ հայ բանասիրության: Ասոնց մեջ ալ թանկագին նյութեր կան անշուշտ հայ ժողովուրդի պատմության համար և հայ բանասիրությունը անհունապիս երախտապարտ պիտի մնա ակագ. Աշոյ Հովհաննիսյանին, որ վերջերս կիսուստանար հրապարակավ հանրության սեփականությունը դարձնել Քյումյուրձնանի ցարդ անծանոթ մնացած բանի մը էջերը, զորս գտած էր մատենադարանի ձեռագիրներն մեջ<sup>497:</sup>

Երեմիայի ձեռագիրներն կան նաև Վիեննայի Մխիթարյաններուն մոտ: Ըլլա այդ ձեռագիրներուն, ըլլա ուրիշներուն մեջ պահված Երեմիայի գրություններուն մասին մեջ կլուսաբանե Տաշյան ցուցակը: Բայց առավելապիս Հ. Ներսես Ակինյանին կպարտինք ոչ միայն անոնց, այլև Երեմիա Զելերիին մեջ հասած բոլոր գրությանց ամբողջական մատենախոսությունը՝ կցված մեծ հայուն կենսագրությանը<sup>498:</sup>

Վերջապիս, Երեմիային նյութեր կմնան կամ կմնային զանազան ուրիշ մատենադարաններու (Նոր-Ձուլա, Արմաշ, Ղալաթիա, Բրիտանական թանգարան) և անհատական հա-

<sup>495</sup> Հ. Սիմեոն Երեմյան, «Երեմիա Զելերի», «Բագավեպ», 1903, էջ 367, 473:

<sup>496</sup> «Օրագրութիւն» Երեմիա Զելերի Թյուրքաբանին: Հավաքած Ա՝ թուղթեր, Բ՝ ուղերձներ, Գ՝ զանձեր, 1939:

<sup>497</sup> Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ...», էջ 221:

<sup>498</sup> Հ. Ակինյան, «Երեմիա Զելերի Թյուրքաբան», Կյանքն ու գրական գործունեությունը, Վենեսա, 1933:

վաքածոներու մեջ: Հայ բանասիրությունը երախտագիտությամբ պիտի հիշե միշտ բժիշկ վահրամ թորգությանը, որ ոչ միայն հարատարակության տվակի իր մոտ գտնվող երեմիայի մեկ ձեռագիրը, այլ անոնց կցեց, հաջորդական երեք հատորներու մեջ, իր ծանոթագրությունները ևս, թանկագին ատաղձ մը հայթայինը այսպիս Պոլսո պատմությամբ գրադողներուն<sup>499</sup>:

Ու հիմա կարժե հակիրճ ակնարկ մը նետել երեմիա Զելերի Քյոլմյուրնյանի գրական ժառանգության վրա:

Երկերու առաջին շարքի մը մեջ, երեմիա Զելերի պատմական թանկագին նյութեր կուտա ժամանակակից անցրերու վրա, մանվանդ անոնց, որոնք կշահագրգուն հայ կյանքը.

ա. «Օրգորութիւն», ուր երեմիա օրը օրին արձանագրած է 1648 հունիս 11-են մինչև 1663 նոյեմբեր 11՝ տասնհինգ տարվան և վեց ամսվան քաղաքական, ազգային, ընտանեան և մասնավոր դեպքերը, մերթ համառոտ և ամփոփ և մերթ բավական ընդարձակ:

(Ինքնագիր ձեռագիրը՝ Երուսաղեմ, Ս. Հակոբյանց մատենադարան, թիվ 1893):

Հրատարակած է Մեսրոպ եպիսկոպոս Նշանյան, «Օրգորութիւն Երեմիա Զելերի Քյոլմյուրնյանի», Երուսաղեմ, 1939:

բ. «Տարեգրական պատմութիւն», կրովանդակե Պոլսո և գավառներու մեջ պատահած հրդեհներուն մանրամասն պատմությունը, ինչպես և երկրաշարժներու, ողողումներու և համաճարակներու նկարագրությունը, իր ժամանակի օմանյան պատերազմները ընդդեմ ավստրիացիներուն և հոնդարներուն, Վենետիկի, Պարսից և այլն, քաղաքական հանդեսները, գիսավորներու երկումը, սովորական և վեղիբներու նշանավոր գործերուն հիշատակությունը, պալատական դավադրությունները և այլն, Պոլսո և Երուսաղեմի պատրիարքներուն և էջմիածնի նվիրակներուն պարարները, Աթոռներուն հափշտակությունը, իրավունքներու բռնարարությունները և այլն:

(Ինքնագիր ձեռագիրը՝ Վենետիկի Մխիթարյանց մատենադարանին մեջ, թիվ 509):

գ. «Պատմական բանի իրոյ ժամանակին». 1682 թվականին Երեմիայի կողմէ էջմիածնին՝ եղիազար կաթողիկոսին զրկված թուղթն է սա, որ «Ուղիղաճեմ ճեմարանի սրբազն ժողովոյ ողջունիւ և այս յայտնեցի» բառերով կուսի և ուր 20 հատվածներով կնկարագրվին օսմանյան արքունիքին և մայրաքաղաքի կյանքին վերաբերյալ անցրեր, որոնց կարգին նաև ժողովուրդ ֆուանցոց ար-

<sup>499</sup> Դոկտ. Վ. Հ. Թուզումյան, «Երեմիա Զելերի Քյումիանեան, Մատմատուոյ պատմութիւն», Ա, Վիեննա, 1913, Բ՝ 1932, Գ՝ 1938,

քայի ընդ կայսեր Հոօմայ», «Պատրաստութիւն Տաճկաց մարտի ընդ Մաճարս», «Վասն գեսպանին Սոսկովցաց», ինչպես և հայոց կեպված գեպքեր՝ «Վասն անձարակութեան Պետրոս վարդապետին», «Անցք Մաթէոս Զէլէպոյն», «Աղջոյնք ոմանց առ Վեհա Սուրբ»:

(Զեռագիրը՝ Երուսաղեմ, Ս. Հակոբյանց մատենադարան, թիվ 1058, թ. թ. 44ա—56բ):

դ. «Պատմութիւն նորոց նահատակաց», ուր Երեմիա գրած է 1686-ին, երբ այցի գացած էր Կարրիի կուսանաց վանքը, «առանձինն և ազգային նահատակաց պատմութիւններ, թէ ի Յայսմաւուրաց և թէ յայլ գրոց, այլ և ի լոյց և ի տեսոյ քաղեալ և հաւաքեալ»<sup>500</sup>:

(Զեռագիրը՝ Վենետիկի Մխիթարյան մատենադարան, թիվ 509):

ե. «Վիպասանութիւն յԱպրո Զելէպի», ուր Երեմիա կերգի իր մեկենասին կյանքին դրվագներ, այս առթիվ նկարագրելով նաև քաղաքական ինչ-ինչ պատահարներ, որոնց հետ կապ ունեցան Արքահամ Զելերին և ազգային զանազան անցքեր: Գրված է 1666—1672 տարիներուն միջև:

(Զեռագիրը Հ. Ն. Ալիխանյան տեսած է Մյունիս, 1930-ին, Լուգլիդ Ռողենթալ գրավաճառին մոտ):

զ. «Աշխարհագրութիւն», «զոր գրեաց, կըս Զամշյան, — ի խնդրոյ գեսպանին Ալամանաց ի վերայ աշխարհաց Պարսից, Հնդկաց և Անատոլիոյ, և ընդարձակ ևս ի վերայ Հայաստանու և ի վերայ թեմից իւրաքանչիւր կաթողիկոսարանաց և վանօրէից զորս և յանդիման արար ի պատկեր աշխարհացուցի»<sup>501</sup>: Զայն կիշե նաև Սոմալյան<sup>502</sup>, ավելցնելով, որ այն այնքան կարեոր աշխատութենեն մնացած է արժմ աշխարհագրական քարտեղի հառաջարաննեն հատված մը միայն: Ալիշան և հիշատակած է զայն<sup>503</sup>, ավաղելով, որ այս կարուր երկը ղեռ չէ հայոնված որեւ տեղ:

է. «Տօմարական գիտելիքներ» խորագրով աշխատութեան մը մեջ Երեմիա աշխատած է խոտացնել Հայոց և Փրկչական թվականներու համար դանազան հանելուկներ և բառախաղեր, երկ, ուր հետինակը մեծ ճիզ վատնած է բռնագոռսիկ նախադասությանց մեջ զանազան թվականներ տալու համար, ինչպես սովորութուն ունեն ընել իր դարու թուրք հեղինակներն այ, նախադասությանց տառերուն թվական արժեքներուն գումարով կազմելով ուղարկ տարին: Ալսպիս՝ «Ի համ կակաչ ծաղկին» նախադասության տառերը կծեացնեն 1634 Թատկանու, «Զապիկի հան» 1862, «Զեկոյ ինձ ըդա»<sup>1482</sup> և այլն:

<sup>500</sup> Հ. Դ. Ալիշան, «Հայապատում», Ա, § 133:

<sup>501</sup> Հ. Մ. Զամշյան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 723:

<sup>502</sup> Սոմալիան, «Quadros», էջ 160:

<sup>503</sup> Հ. Դ. Ալիշան, «Հայապատում», Ա, էջ 133:

(Զեռագիր՝ Երուսաղեմ, Ս. Հակոբյանց Մատենագրան, թիվ 1058, թ. թ. 106ա—119բ):  
Ուրիշ խումբ մը երկասիրությանց մեջ, Երեմիա առավելապես թուղթին պատմության հետ կապված նյութեր կշռշափե, թեև տեղադրելի է հանդիպի հայ կյանքը շահագրող նյութերու ալ.

ա. «Պատմութիւն համառօտ շուեքնարիւտարայ օսմանցոց քազարացն, որ ի սովորան օսմանցոց ումեմն Երեմիա Զէլչպութէօմիւրճի ողլոյ կ. Պոլսեցոյ մերձ ի թուականին Հայոց Ոծին (1695)»:

բ. «Թագաւորութիւն օսմանցոց համառօտիւթիւն... արտագրեալ ի մատենագրացն օսմանցոց ումեմն Երեմիա Զէլչպութէօմիւրճի ողլոյ կ. Պոլսեցոյ մերձ ի թուականին Հայոց Ոծին (1695)»:

(Զեռագիր՝ Երևանի մատենադարան, թիվ 1786, Վիեննայի Միսիթարյանց մատենադարան, թիվ 786, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարան, թիվ 1176):

գ. «Ոտքի շարադրեալ անուանք քազարաց օսմանցոց»: Հավանաբար այն ոտանագլործ է, որուն համար Զամշյան կըսե, թե Եղիազար շարադրեց «ի խնդրոյ Յակոբայ կաթողիկոսի»<sup>504</sup>:

դ. «Պատմութիւն հրակիզման կ. Պոլսոյ, որ եղեւ յամի 1660 ի 14 Յուլիսի, յորում երկարործն գրէ զաղէտու և զդիմառնական երգս ողրոց յօրինեալ շափով ոտից»:

(Զեռագիր՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարան, թիվ 892, թ. թ. 172թ—270ա):

ե. «Պատմութիւն Ստամպօլոյ», զոր Երեմիա հորինած է տաղաչափյալ 8 գլուխներու մեջ և ավարտած 1689-ին: Պոլսոյ թաղերուն մեջ կատարված պտույտի մը ձևով, Երեմիա կնկարագրեալ թաղերը, տեղեկություններ տալով նաև ամեն մեկ թաղի հայության մասին:

(Զեռագիր՝ Երևանի մատենադարան, թիվ 1675, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարան, թիվ 1697, և դոկտ. Վ. Թորգոմյանի մոտ):

Հրատարակած է դոկտ. Վ. Թորգոմյան, «Երևանիա Զէլչպի Քէօմիւթեան, Ստամպօլոյ պատմութիւն», Վիեննա, Ա. 1913, էջ 1—122, կցելով ընդարձակ ժամոթագրություններ, էջ 125—412, թ. 1932, էջ 413—860 և 9, 1938, էջ 1—294):

զ. «Համառօտ ստորագրութիւն կ. Պոլսոյ նեղուցի», աշխարհիկ ոճով և ոտանագլոր:

Կըսվի, թե Երեմիա իտալերեն ևս շարադրած է այս երկը<sup>505</sup>:

Երկերու հաջորդ խումբը հիշատակարաններ են, զորս Երեմիա գրի առած է Եկեղեցիներու շինության կամ նորոգության, կամ ձեռագիրներու ընդորինակության առթիվ.

ա. «Կոնդակ Ս. Կարապետ Եկեղեցայ ի Կրեմէ կղզուց»: Հիշատակարանն է Ս. Կարապետ Եկեղեցվոր, զոր Արքահամ Զելերի 1670 թվականին կառուցել տվակ Գանտիայի մեջ: Այստեղ պատմված է կղզիին առումը Քյոփրովլու Ահմեդ փաշայի կողմէ 1669 սեպտեմբեր 6-ին, չորեքամյա պաշարումն մը հատու Կհաջորդեն 33 գովասանական երգեր:

(Զեռագիրը՝ Փարիզ, Հովհաննես Զավոյանի մոտ):

բ. «Յիշատակարան Աւետարանին Արքահամ Զէլչպությա», գրված տաղաչափյալ Երեմիայի ձեռքով 1263-ին Գուների մեջ ընդօրինակած և 1663-ին Արքահամ Զելերի կողմէ գնված Ավետարանի մը կից, անմահացնելու համար Արքոյան գերդաստանի հիշտապել:

(Զեռագիրը՝ Ղեղնդ վարդապետ Փիրուալեմյան 1879-ին տեսած է Զմյուռնիա, Մարդար Աստվածատուրյանի մոտ):

գ. «Կոնդակ յիշատակի նորոգման Ս. Գէորգ Եկեղեցայ նայոց ի Փիլիպպուպոլիս» (1677): Նկարագրությունն է հիշյալ Եկեղեցվոր նորոգության Մատթեոս Զելերիի օժանդակությամբ, Կամենիցեն գաղթող հայերու խընդրանքով:

(Կոնդակը տեսած է Հ. Քյուրտյան 1919-ին Կոստանդնուպոլիս, Արշակ Ալպոյանի մոտ):

դ. «Յիշատակարան Մաշտոցի», զոր Երեմիա նվիրած է Նիկոմիդիոյի մերձակա Ղըշլագյուղի հայ Եկեղեցվուն, երբ 1661-ին այցելած էր նույն գյուղը իր հոր՝ Մարտիրոս քահանայի հետ:

(Հիշատակարանը կպահպէր Արմաշ, մինչև մեծ սպանդը):

Երեմիա, տասնյակ մը Երկերու մեջ, զրադակած է նաև ոտանական հարցերով, ումանք կապված իրենց կյանքին մեջ տեղի ունեցող վեճերու և զայթակղությանց հետ, ուրիշներ՝ արծարծված ի պաշտպանություն Հայ Եկեղեցվոր ուրիշ զավանանքների եկած քննադատության ղեմ:

ա. «Յաղագս դերաբրիստոսին, որ կէլափի կէլտի ասի, արարեալ և շարադրեալ Երեմիայի դպրի Կոստանդնուպոլսեցւոյ, որ էր ժա-

<sup>504</sup> Տեղայ վարդապետ Պալյան, «Բյուրակն», 1897, էջ 612:

մանակակից և տեսող իրացն ի ՌՃՁԵ (1666) թուղջ»:

(Զեռագիրը՝ Երուսաղեմ, թիվ 605թ, Վենետիկ, ըստ Սոմալյանի, «Quadro», էջ 160, և Արևլցիս Լ. Բայրուրդցյանի մոտ. ըստ Ակինյանի, «Երեմիա Զելերի Քյոմյուրճյան», էջ 121):

Տպագրված Կոստանդնուպոլիս, անթվական և առանց հեղինակի անվան, հետևյալ խորագրով. «Տեարակս այս որ կոչի Սապէրայի Սևու համբաւալ ի Հրէից ոմն խարերայ Սապէրայ անուն կամէր կրկին մոլորել զմոլորեալն»:

Բ. «Վասն վերսակն խայտառակութեան Հրէից, նոյնոյ Երեմիայի է շարադրեալ ոտանաւոր»:

(Զեռագիրը՝ Արևլցիս, Լ. Բայրուրդցյանի մոտ. ըստ Ակինյանի, «Երեմիա Զելերի Քյոմյուրճի որդ հնամատ իսմայլսի մմոսո դ ցացտ մյուրճյան», էջ 123. Երուսաղեմ, թիվ 605թ և 959):

Գ. «Վասն Էմմէինի առնառա Տիմոյի ումեմն որ սիրեաց զաղշիկ մի երէի Մրգասայ տոս. և աղջիկն խոստանայ երթալ ընդ նմառ և կամիցի մանուկն»:

(Զեռագիրը՝ Արևլցիս, Լ. Բայրուրդցյանի մոտ. ըստ Ակինյանի, «Երեմիա Զելերի Քյոմյուրճյան», էջ 124. Երուսաղեմ, թիվ 605թ և 959. Երևան, թիվ 386):

Դ. «Այլ իմն բան նրէի կնոշն Քերային», որ սապես կսկսի. «Աստ քեզ բան ծիծաղելոյ սակս Հրէից ոմիմ պատմութեան»:

(Զեռագիրը՝ Երևանի մատենադարան, թիվ 1675):

Ե. «Վիճաքանութիւն ընդդէմ Հրէից». Կհիշեն Զամշյան (Դ, էջ 723) և Սոմալյան («Quadro», էջ 160). Ակինյան կենթադրե, թե մեկն է այն վիճաքանություններեն, զորս շատեր գրեցին Սաբեթայ Սկի հրեային երեան զալուն առթիվ («Երեմիա Զելերի Քյոմյուրճյան», էջ 125):

Զ. «Վիճաքանութիւն ընդդէմ Յունաց», գոր նույնինքն Երեմիա իր ձեռքով գրած և նուիրած է տիրացու կիրակոսին:

(Զեռագիր՝ Վենետիկի Միլիթարյան մատենադարան, թիվ 621):

Է. «Համառօտ Բարցմունք և պատախանիք», զոր Երեմիա և Թաղեսոս Երեց Համազասպյան Երևանցի, բազում աշխատությամբ հավաքած են «ի սուրբ գրոց կարճառոտ բանիք, ի յաստուածագանից, ի փիլիսոփայից, ի պատմագրաց և ի կերպից ինչ աղօթից, զորս առեալ ի կատինացւոց, զորս ի Յունաց և զորս ի Հայոց... ի թուին Փրկչին 1681»:

(Զեռագիրները՝ Նոր Ջուղայի Ամենափրկիլ վանք, թիվ 151 և Երևանի մատենադարան, թիվ 72):

Բ. «Պատախանի Աստուածավ և վասն Աստուծոյ (առ Սուրբիաս վարդապետ, որ արգիլեաց զեհսկ որ ասենն», զոր ասացեալ են ի վերջն Հաւատամբքին»: Խոսքը ուղղված է Սուրբիաս վարդապետի գեմ, որ փորձությունն ունեցած է արգիլելու իբրև խոտելի՝ Հավատամբքին կից բանաձեռ՝ «իսկ որ ասենն», Երեմիա 40 առարկություններով և ապացուցներով ցատագով կիանգնի ընկալյալ սովորության:

(Զեռագիր՝ Վիեննայի Միլիթարյան մատենադարան, թիվ 779, թ. թ. 1ա—4ա):

Բ. «Պատախանի զեկեղեցին Հայոց, յորում լիշտակին և Կղեմէս և գիրք մի Վահան Հաւատոյ կոշեցեալ»:

(Զեռագիր՝ Երուսաղեմ և Վենետիկ):

Ժ. ձառեր Եկեղեցական սուրբ ծովովներու վրա, զետեղված «Աստամպօլայ պատմութեան» ձեռագրին վերը: Կհիշատակի Թորգոմյան («Աստամպօլոյ պատմութիւն», Ա, էջ 185):

Ժ. «Կտակ խաշելութեան Ֆեառն մերայ Յիսուսի Քրիստոսի յաճախնալ յերեմիայի բանաստեղծէ ի խնդրոյ որդուոյն Գրիգորիսի ուստորի»: Բաժնված է 13 Հատվածներու և գրված է ուամկախառն գրաբարով:

(Զեռագիր՝ Վիեննայի Միլիթարյան մատենադարան, թիվ 407, թ. թ. 116ա—146թ):

Երեմիա Զելերի զանց չէ ըրած հանդես զալ թուրքերեն թարգմանություններով ալ, ոչ միայն նոր Կտակարանը և Հին Կտակարանն հատվածներ և «Յայոմատուրք»-են քաղվածքներ վերածելով թուրքերին, այլև թուրք լեզվի թարգմանելով Խորենացին, քաղվածարար, նույնպես և նյութեր Բագրատունյաց և Ռուբինյանց շրջաններու մասին, ինչպես նաև Հայերենն թուրքերնի փոխադրելով օտար հեղինակներ.

Զ. «Պատմութիւն Հայոց», զոր, կգրե Զամշյան (Դ, էջ 723), «Թարգմանեաց ի խնդրոյ գրագիտացն Տաճկաց ի լեզու նոցա զպատմութիւն Խորենացւոյն քաղուածով, ընդ նմին և համառօտ տեղեկութիւն ինչ ի վերայ Թագրատունեաց և Ռուբինյանց»: Զայն կհիշենակ Ալիշան իբրև «Հայոց պատմութիւն մի թէ՛ Հայերէն և թէ՛ Թուրքերէն» («Հայապատում», Ա, § 133):

Դ. «Սահման Դաւթի», թարգմանված թուրքերենի 1692-ին ի Կոստանդնուպոլիս, ի խնդրոյ Տյունկյունյան անուն բարձրաստիճան անձնավորության մը:

(Զեռագիր՝ Վենետիկ, թիվ 85, Վիեննա, թիվ 988, և Երևանի մատենադարան, թիվ 1644):

գ. «Թարգմանութիւն նոր Կտակարանի և մասանց Հին Կտակարանի». Կհշեք Զամշյան (Պ, էջ 723):

դ. «Հիմքայի Ֆարիս վէ Վէնա. թէրձէմէի Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանց»; Տպագրված է Կոստանդնուպոլիս, 1871-ին, Զարդարյան Եղբարց տպարանին մեջ, և կրաղկանա 140 էշերի; Երեմիա այս թարգմանությունը կատարած է Հովհաննես Տերզնցվո ձեռքով ֆրանսերենի թարգմանված և 1587-ին Մարտի տպագրված Հայերին Հրատարակության վրային, որ «Պատմաթիւն Փարէզ մանկան և Վէնիայու դստեր Դավիթի իշխանին Վէնեայու Շաղաքին» խորագիրը կրեր (Ակինյան, «Երեմիա Զէլէրի Քյոմյուրճյան», էջ 133—134):

Իսկ Հայատառ թուրքերն Հրատարակությունը ունի երկրորդ տիտղոս մը ևս՝ «Հիմքայի Ֆարիս վէ Վէնա. պատմութիւն Ֆարիկու և Վէնայի, շարագրեցեալ ի լատին լեզու և թարգմանեցեալ ի Հայկական բարբառ յումենէ, Հոմերական ոճիւ, և վերստին թարգմանեցեալ ի տաճկական բարբառ ոտաւոր ոճիւ, ի յերեմիայ Զէլէպույ ի Քէօմիւրճեանց զարմէ, որ և Բանասէր իսկ յորչորչի, առ ի զուարծութիւն ընթերցողաց»:

Ե. Քարոզեներ տանկերեն լեզվով. ա. «Քարոզ ի Վարդապառն», բ. «Կտակ ի աշշելութեան»:

(Զեռագիր՝ Վիեննայի Միխթարյան մատենագրան, թիվ 407, թ. թ. 94ա—115թ):

գ. «Համառուս Յայսմատուք ի լեզու Տանկաց, գրեալ յէջմիածին ի բուփն Ռձէ՛՛ (1685). բաժնված է 13 գուխներու և կպարունակի 175 վկայաբանություն:

(Զեռագիր՝ Երուսաղեմ, թիվ 1076, թ. թ. 5ա—139ա):

է. «Պատմութիւն Մեծին Աղեքսանդրի», Հայերեն թարգմանված թուրքերենի ոտանակոր շափով. Խակական խորագիրն է «Քիրապ նէլեայի Ճիմանկիր Խսէլսաւէր Գուրլգային»։ Լիսան էրմէիանաւէն լիսան բռմբնէ թէրենումէի էսք էնազգիր Խրէմիա։ Կհշեք Զամշյան (Պ, էջ 723), Սոմալլան, («Quadro», էջ 160) և այլն։

(Զեռագիր՝ Երուսաղեմ, թիվ 988, թ. թ. 6ա—178ա):

Ել վերջապես Երեմիային Կհշեքին կարևոր թվով զանձեր, ողբեր, գովքեր և տաղեր, զորս ան Հորինած է զանազան առիթներով և որոնցմբ կմնան՝

ա. «Ողբ ասացեալ Երեմիայի ի մանն մանտեսի Ամրակումի, որ էր Կ (60) ամաց, ի բուփն Ռձէ՛՛ (1658):

բ. «Ներբողեան ասացեալ Երեմիայի առ ի բաղումն Արքանամ Զէլէպու դստեր փոքր որ ի բուականն Հայոց Ռձէ՛՛ (1661):

գ. «Ազուկեցի խօնայ Խօսրովի մահուան նառ ի սկզբանէ մինչև ի նորին վաղեան, ասացեալ ի խեղրոյ ամուսնոյ նորին»։

դ. «Գանձ ասացեալ Երեմիայի ի վերայ մօրն իւրոյ. Ռձմբ (1663) թվին Հայոց»։

ե. «Գանձ և ողբ ի վերայ հօրն (Տէր Մարտիրոսի Քէօմիւրճեան)»։

զ. «Գանձ և ողբ ի վերայ Յակոբ կարողիոսի. Ռձմիթ» (1680):

է. «Գանձ մանկահասակ նեղեցելոց արուաց և իգաց. Ռձմիթ» (1665):

ը. «Ողբ նեղեցելոց»։

թ. «Ողբ տպահասակի»։

ժ. «Տաղ տղայոց անմեղաց»։

ժ. «Այլ [ողբ] տղայոց մահուան»։

ժ. «Տաղ ի Ա. Աստուածածինն»։

ժ. «Տաղ ի վերայ ջրոյ»։

ժ. «Տաղ ի վերայ ջրոյ»։

ժ. «Տաղ Սուրբ Աստուածածինի»։

ժ. «Տաղ Սուրբ Աստուածածինի»։

ժ. «Տաղ սիրոյ և ուրախութեան»։

ժ. «Տաղ (Ելի արենու ծագող լուսոյ անեղին)»։

ժ. «Գովասանութիւն ի վերայ ջրոյ»։

ի. «Գովասան առ Ս. Աստուածածինն»։

ի. «Տաղ ասացեալ ի յերեմիայի ի վերայ Ս. Երուսաղէմայ տանկի բարբառով»։

ի. «Տաղ ասացեալ յերեմիայի ի վերայ Սոլոմոնի Խմասենոյ»։

ի. «Տաղ ասացեալ ի յերեմիայէ վասն անցաւրութեան աշխարհիս»։

ի. «Տաղ Յովհաննեն Մկրտչի»։

ի. «Տաղ ի վերայ Ս. Գերեզմանին Քրիստոսի. տանկի բարբառով»։

ի. «Երգ սիրոյ»։

ի. «Երգ զարիբի»։

ի. Զանազան անխորագիր տաղեր»։

Այս շարքին պետք է կցել նաև՝

ի. «Գովասանութիւն յարմարեալ ի սուրբ տօնօրինականացն Քրիստոսի», 1665-ին Երուսաղեմ կատարած այցելության առթիվ Հորինած 40 տաղերն են, զորս 1677-ին լուս ընծայեց 35 էշնոց գրուպկով մը նույն տարին իր իսկ հիմնած տպարանին մեջ, զարդարելով զայն 15 պատկերներով և հետեւյալ խորագրով. «Տեղեաց տօնօրինականաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ի Սուրբ Երուսաղէմ և ընդ գաւառն»։

Գրական ժառանգություն մը ահա, որ եզական կմնա հայ մատենագրության մեջ Հավասար շափով պատմական կամ գրական արժեք չեն ներկայացներ անշուշտ գրչի բոլոր այս արտադրությունները, ինչ որ բացառիկ է Երեմիա Զէլէրի Քյոմյուրճյանի մեջ, իր հիմնական մտահոգությունն է՝ կրերե վեր մնալ և անաշառ ըլլա՝ իր օրերու դեպքերն ու դեմքերը դատելու ժամանակ, իր զգացածն

ու մտածածք անկեղծությամբ հանձնել թուղթին, ոչ տարվիլ կողմնակի նկատումներեւ և ոչ ալ բարեկամություններեւ ազդվիլ, և շնամայել ոչ ոքի, ով ալ ըլլա ան, ինչ աստիճան ալ ան ունենա: Այսպես եղավ ան իր կյանքին ու գործունեության մեջ և այսպես մնաց իր երկերուն մեջ ևս:

Ճիշտ է, Երեմիա Զելերի տուրք տվավ հին ավանդությանց, իր երկերուն հորինման ժամանակ: Հուստորական ոճը շկրցավ թոթափել իր գորությանց մեջ և տաղաշափյալ տվավ նույնիսկ իր պատմական էջերեն ոմանք: Ճիշտ է նաև որ ան ավյուն սպառեց հումպես բառախաղերու վրա՝ թվականներ արձանագրելու համար, և իր տաղերեն շատերը բռնազրուսիկ ճիգ մը կմատնեն: Ինչպես իր ոճին, նույնպես իր լեզվին մեջ ան իր շրջանի ժամանության իր տուրքը տվավ: Հաճախ աղձաս է իր գրաբարը և իր երկերեն ոմանք հորինած է Պոլս բարբառով, ովք թրքաբանություններն իսկ կհորդին. բայց և ունի մաքուր գրաբարով շարադրված բազմաթիվ էշեր:

Այս բոլորով միասին, Երեմիա Զելերի Քյոմյուրճյան կհանդիսանա բացառիկ դեմք մը իր դարուն, ու շատ մը դարերու համար, որքան իր հանրային գործունեության, նույնքան իր գրական վաստակին մեջ, Եվ արդար էր, որ մոռացության գրկեն դուրս հանվեր ինչ որ ան ըրավ իր ժողովուրդին համար և ինչ որ թողոց իր ետին:

Ո՞ւր է: սակայն հոգածու ձեռքը, որ ի մի համախմբեր Երեմիա Զելերիի ցիրուցան աշխատանքները. և լուս ընծայեր զանոնք գիտական հրատարակության մը մեջ: Աղով մարդ մը պիտի կանգներ հայ մատենագրության պատմության մեջ իր վիթխարի հասակով և շատ բան ավելի լրիվ պիտի գիտնայինք անոր ապրած շոշանեն:

Եվ այն ժամանակ պատմությունը երկյուղածորեն բայց և հպարտությամբ պիտի արձանագրեր իր պատվանդանին վրա՝ Մարդ մը որ իր դարը փրկած է:

(Շարունակելի)



Ա. ԱԼՊՈՅԱԶՅԱՆ

## ՊՈՐՏՈՒԳԱԼ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ\*

Յ. ՀԱՅ ԵՎ ՊՈԼՏՈՒԳԱԼՅԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐՈՒ  
ՄԵջ

ինչպես տեսնվեցավ, առաջին ելրոպացիները, որոնք ծովի ճամբով ոտք դրին Հնդկաստան, պորտուգալցիներ էին: 1510-ին անոնք գրավեցին Գոա նավահանգիստը, Հնդկաստանի արևմտյան եզերը, իսկ 1538-ին անցան Հնդկաստանի հյուսիս-արևելյան ծովափը, ուր առևտրական կայան մը հաստատեցին, արդի Կալկաթայի մոտ:

Պորտուգալցիներու այդ գրավումները առևտրական նպատակով էին: Բայց այս նոր տեսակի առևտուր մըն էր Պորտուգալցի վաճառականներուն կհետևեին. Հրազենները, Հնդկիները գիմադրեցին, բայց եկավ օր մը, երբ ելրոպական թնդանոթները հարկադրեցին զանոնք լուել. Այս դինյալ վաճառականությունը կամաց-կամաց տարածվեցավ Հնդկաստանի մեջ և հեղաշրջեց Պորտուգալի առևտրական կյանքը: Ասիսկան ճոխ ապրանքներով և հարուստ արդյունաբերություններով լեցվեցավ կիզրոնը, որ սկսավ ծաղկիւ, մեծնալ և ելրոպայի ամենամեծ առևտրական կեդրուններեն մեկը դառնալ:

Ժամանակ մը պորտուգալցիները միայն իրավունք ունեին ծովային ուղիներով առևտրական առաջարկելու և այլն:

առուր ընելու Հնդկաստանի հետ և մնացյալ եվրոպական ազգերը, Հնդկական ապրանքներ գնելու համար, պետք է երթային Պորտուգալի մայրաքաղաքը՝ Լիսբոն:

Բայց երկար շտեղ պորտուգալցիներու առևտրական մենաշնորհը: ԺԶ դարու վերջերը անոնց տեղը սկսան բռնել փոքրիկ, աղքատ և անշուրասեր հոլանդացիները, որոնց նավերը տիրապետող հանդիսացան ծովերու վրա զենքի ուժով և վանեցին պորտուգալցիները շատ տեղերեւ:

1603-ին Հնդկաստանի հետ առևտուր ընող հոլանդական մանր վաճառականական ընկերությունները միացան, կազմեցին մեծ ընկերություն մը, որ ստացավ «Հնդկական» անունը: Ամբողջ Հարավային Ասիան, Արաբիային մինչև Ճապոն, հոլանդացիները կշահագործեին: Հնդկական ընկերությունը կատարյալ պետություն մըն էր, որ կամացիր զինվորական գունդեր, իրավունք ուներ պատերազմ հրատարակելու իշխողներուն գեմ, շինելու բերդեր, դաշնակցություններ կնքելու, հաշտության պայմաններ առաջարկելու և այլն:

ԺԶ դարուն կեսեն կորութեր նաև լևանդյան ընկերությունը, որ առևտուր կըներ Թուրքիո հետ: Ապա հոլանդացիներու դեմ ասպարեզ եկան անգիտացիները, նախանձելով հոլանդացիներու յաշողության վրա: Անգլիացի վաճառականները հիմնեցին Հնդկական ընկերությունը 1601-ին, նղիսարեթ Ա. թագուհիի հրովարտակով: Ֆրանսական ընկերություն

\* Նարունակված «Էջմիածին» ամսագրի 1963 թվականի մայիսից:



մըն ալ հիմնվեցավ 1624-ին՝ Հնդկական առևտրական ընկերություն աննոռով:

1612-ին Սուրաթի մեջ հիմնվեցավ առաջին շահաստանը (factory), այսինքն եվրոպացիներու ոտքի կովանը<sup>44</sup>: Ժէ դարու ընթացքին այդ շահաստաններու թիվը բազմացավ զանազան տեղեր:

Հայերը, որոնք Հնդկաստան փութացած էին Հյուսիսին ցամաքի ձամբով, ինչպես ըսկեցավ, Հնդկաստանի ներքնաշխարհի ապրանքները և բերքերը սկսան ծովեղերը փոխադրել, որպեսզի եվրոպական նավերը բեռոցնեն:

Հայ վաճառականները հետզհետե ավելի ընդարձակեցին իրենց գործառնությունները և սկսան նույնիսկ Պարսկաստան—Մոսկվա ձանապարհով Բալթիկ ծով և Հյուսիսային եվրոպա ապրանք փոխադրել կամ Կոստանդնուպոլիս, Զմյունիխ և Տրավիդոն ուղարկել:

Այս կերպով, ժէ դարուն սկիզբը նոր-Քուղա հաստատված հայերը իրենց նորահաստատ բնակավայրը դարձուցին առևտրական կարեռ կեղուն մը: Մասնավորապես նոր-Չուղայի առևտրական կարեռությունը ավելի շեշտվեցավ, երբ Շահ Արաս իր թագավորության վերջին տարիները դաշնակցություն կնքեց Հնդկաստանի անդիհական ընկերության հետ և անոր օգնությամբ գրավեց պորտուգալցիներուն ձեռքեն Հյուրմլուզի նեղուցի եղերքի գեղեցիկ նավահանգիստը, զոր իր անոնով կոչեց Բնիդեր-Արաս: Այս ճամրան Հնդկաստանի հետ հայոց առևտրական հարաբերություններուն համար շատ կարեռ դեռ կատարեց:

Հայերը Ժէ դարուն սկիզբները Հնդկաստանի մոնղոլ թագավորության մեջ առանձնաշնորհյալ վիճակ ունեին և նումիսիկ անդիհացիներեն 10 տարի առաջ հրովարտակով մասնավոր արտոնություններ ստացած էին, Ստեփանոս վարդապետի շնորհիվ: Այս վարդապետը կընկերանար Բատրշահին, անոր Քարուզեն ճամրա ելած ժամանակի: Ան Քարուզ կգտնվեր իրը հոգեոր հովիվ Աֆղանիստանի հայոց, այնտեղ դրկամա ըլլալով նոր-Չուղայի առաջնորդ Դավիթ եպիսկոպոսի կողմէ<sup>45</sup>:

Ստեփանոս վարդապետ իրը թե Պենջարի Ռովի գետին վրա հրաշք կործե և սիրելի կրտանա Բատրշահին: Օգտվելով առիթեն, Ստեփանոս կներկայացնե սա երեք խնդրանքները.

### 1. Ամեն հայ ազատ ըլլա:

<sup>44</sup> Շահաստան բար գործածած եմ իրը համապատասխան, իսկ Հ. Եղիս Փէլիկյան («Բազմավեպ», 1937, էջ 69) կործածե զարձակալատուն բարը:

<sup>45</sup> Բովման Խանմամայան, «Ազգասիր», Ա, թիվ 16, է, 125:

2. Եթե հայոց ազգեն մեկը մեռնի, անոր ինչքերը, շարժական թե անշարժ, հայոց ազգին սեփականությունը դառնան և ուրիշներ չմիջամտեն:

3. Մալ մերես, խարզի, խարզեն կես ուռփի տան, մաքս՝ հարյուրին երեք և կես, ինչ զգեստ որ ուզեն հագնին և ուր որ ուզեն երթամ<sup>46</sup>:

Այսպես, հայերը, եթե ոչ Հնդկաստանի ամեն կողմերը, գեթ զանազան կարևոր շրջաններուն մեջ ուշագրավ եղան և ունեցան առանձնահատով դիրք մը, և սերտ հարաբերություններ՝ Հնդկաստանի ծովային առևտուրի համար իրարու հետ մրցող ազգերուն հետ, որոնց նկարագրին և գաղթային գործերուն մեջ անոնց ընդգրկած ուղղության մասին գրանցի հեղինակ մը այսպես կգրե. «Սպանիական գաղութները ունեցած են նախապես իրը զիմանքոր նպատակ հանքերու շահագործումը, պորտուգալցիներ՝ առևտուր և պարտեզներու վրա դրված տուրքերու ստացումը, հոլանդացիները եղած են իսկապես առևտրական, անգլիացիները՝ միանգամայն թե՝ առևտրական և թե քաղաքակրթական»<sup>47</sup>:

Իսկ ուրիշ հեղինակ մը լսած է, թե շատ լավ հիշատակներ չեն ձգած պորտուգալցիները, որոնք բնական միջոցներով ապրանքներ ձեռք կրերեն և կեղեղեքեն ու կհարստահարեին բնակչությունը:

Հայերը պորտուգալցիներու հետ ունեցած են սերս հարաբերություններ այն շրջանին, երբ անոնք Հյուրմլուզեն մինչև հաղաղական գորավոր ուժ մը կներկայացնեին: Այդ միջոցին, հայերը Հնդկաստանի ներսերեն հավաքած ապրանքները կրերեն պորտուգալյան տիրապետության ենթակա նավահանգիստները: Դժբախտաբար հայ-պորտուգալյան հարաբերություններու վրա լիսկատար տեղեկություններ չունինք, որովհետև պորտուգալական տիրապետությունը ժամանակով հնագույնը և տևողությամբ ամեննեն կարծը եղած է:

Պորտուգալցիները, ինչպես Աֆրիկեի բնիկներուն մեջ քրիստոնեության իրը քարոզիլ աշխատած էին, նույնը փորձած են Հնդկաստանի մեջ՝ տեղացիները քրիստոնյա դարձնելու համար: Այս ուղղությամբ հայերն ալ աշխատած են և թերեւս ասոր համար է, որ պորտուգալցիները մոլեռանդ կաթոլիկներ ըլլալով հանդերձ, բարեկամական հարաբերություններ մշակած են հայերու հետ և նույնիսկ կրոնական անխորականություն ցույց տված են անոր համար, որ հայ եկեղեցականներ, և թերեւս նաև մեզի դավանակից Ասորի եկեղեցին պաշտոնյաները,

<sup>46</sup> Անդ:

<sup>47</sup> Տե՛ս վերը:

պորտուգալցի կաթոլիկ եկեղեցականներու հետ գործակցած են քրիստոնեությունը տարածելու Հնդկաստանի բնիկներուն մեջ:

Հայտնի է, որ հին ժամանակներե ի վեր Հնդկաստանի մեջ ասորիներ, նեստորականներ, ինչպես նաև Հայեր հաջողած էին քրիստոնյա դարձնել բնիկներն մաս մը: Ասոնցմե անոնք, որ Հայադաշտն եղած էին, Հնդկահայերուն կողմէ կողմէ ին «Երկրականք»: Կային նաև կաթոլիկներ, որոնք Հայականորեն պորտուգալցի կաթոլիկ կրոնավորներ քրիստոնյա դարձուցած էին: Թորգոմ պատրիարք Գուշակյան զանոնք կողչ գոացիներ և տեղացիներուն մեջ իրեն ելլուպական բարբի ընդունակներ ու ֆարսիներեն անմիջապես ետքը ամենառաջադրավ ժողովուրդը, Ասոնք, որ ծագումով բռն Հնդիկ են և Գոա բաղաքի բնիկները, պորտուգալցի միսիոնարներուն միջոցով ժջ դարձած են քրիստոնեության և այժմ ամուր կմնան իրենց կաթոլիկ Հավաքագին մեջ: Ըստ Թորգոմ պատրիարքի, «Իրենցմէ է որ Հռոմեական Եկեղեցին հետո բազմաթիվ քարոզիչներ և քահանաներ ընդունեց իր միսիոնարական շարքերուն մեջ, իր դավանանքը տարածելու համար Հնդկաստանի Հարավային և այն մասերուն մեջ, ուր Հնագույն դարերե ասորի և թերեւ Հայ քարոզիչներ Արևելյան Եկեղեցվոն ճյուղերը հաստատած էին: Թիսագույն կերպարանքով, Հնդկատիկ դիմագծությամբ՝ նրբամիտ և աշխուլժ տեղացիներ են ասոնք, որոնք ընդհանրապես բարձրագույն և խոնարհ ծառայության ասպարեզներու կնվիրվին, իրեւ պետական պաշտոնատարներ, կամ դրամատանց, վաճառանոցներու և շղթաներու պաշտոնյաներ կամ սպասավորներ: Ճեմ են իրենց կրոնքին մեջ, կիսուին Հնդկերեն, պորտուգալերեն և անգլիերեն, ինքիննին կողչեն պորտուգալցի (պորտուգեզ), թունդ պաշտպան են անգլիական քաղաքականության: Ունին բազմաթիվ Եկեղեցիներուն<sup>48</sup>:

Պորտուգալցիներու հետ Հայերու ալ գործակցությունը և համերաշխ գործունեությունը անտարակուսելի է, հետևեցներով կարգ մը իրողություններե: Այսպես, Հ. Պողոս (ՊարՊողոս) Պորտուգալցի (1521) կպատմե, թե ժե դարուն վերը կամ ժջ-ի սկիզբը Հայ եպիսկոպոս մը և երեք քահանաներ եկած են Մալարարի Գուշամ քաղաքը, ուր քարոզած և մկրտած են շատեր: Ան կըսե, թե որովհետե գինի չկար, շամիչը թրչած և պատարագած է<sup>49</sup>:

<sup>48</sup> Թուզում պատրիարք Գուշակյան, «Հնդկահայք», էջ 21:

<sup>49</sup> Հ. Ալիշան, «Սիսական», էջ 475:

Նոյնպես 1561-ին կհիշվի Գոշին հայ եպիսկոպոս մը, որ կմաքառեր լատին ճիզվիտներու հետ և 1589-ին Գրիգոր անոն հայ սարկավագ մը, որ ծանոթ էր Լահորի Եքբեր շահի արքունիքին մեջ: Այս սարկավագը Գոա կուգա, ինդրելու համար Պորտուգալի փոխարայնն հիսուսյան քարոզիչներ<sup>50</sup>:

Ամեն պարագայի մեջ ստույգ և վավերական է, որ հայ կրոնավորներ ալ հաջողած են, եթե ոչ շատ, գեթ քիլ թվով Հնդիկներ հայագավան դարձնել, ինչպես կհաստատե Թաղիադյան իր «Ազգասեր» հանդեսին զանազան շշերուն մեջ:

Հայերը, իրու անզեն գործողներ Հնդկաստանի մեջ, բնիկ իշխանություններեն բարյացակամությամբ ընդունված էին և արտոնություններ ստացած իրենց կրոնքը ազատությամբ պաշտելու: Ասոր համար Հնդկաստանի մոնղոլ կայսրության մեջ արտոնված էին 1562-ին Եկեղեցի մը կառուցանելու<sup>51</sup>, երբ զեռ պորտուգալցիներ նույնիսկ հարաբերության մեջ չեին մոնղոլ կայսրության հետ:

Կաթոլիկ քարոզիչներ հայերու գործակցեցան, օգտվելու համար անոնց գրաված դիրքերեն: Այսպէս, եթե 1571-ին Գոա կուգա Հ. Ժերոմ Քսավիի և անկե 1594-ին պորտուգալյան դեսպանության իրեւ անդամ կերթա Աքրարի արքունիքը, Եքբերի երկրին մեջ կտնե Հայ բնակիչներ<sup>52</sup> և կիսուի եղայրական հարաբերությանց և համերաշխ գործակցությանց մասին հայ և պորտուգալյան Հոգևորականության միջն, այդ Հեթանոս երկրին մեջ<sup>53</sup>, որոնց մայրաքաղաքին՝ Ակրայի մեջ Հայ Եկեղեցինեն ետք պորտուգալցիներ կառուցած են իրենց սեփական Եկեղեցին<sup>54</sup>:

Որչափ կառելի է մակաբերել ինչ-ինչ երևույթներե, միշտ կրոնական համերաշխ և խաղաղ Հարաբերություններ ունեցած են Հնդկաստանի մեջ հայ և Պորտուգալեն Եկած կաթոլիկ Եկեղեցականները: Շատ մը Հայեր նույնիսկ պորտուգալցի կաթոլիկ Եկեղեցականներուն աշակցած են և անոնց գործունեության նպաստած են:

Այսպես, Ժ. Դարտում կեսերուն, ականավոր Հայ մը՝ Նիկողոս Ազայլարյան իր տիկնոց՝

<sup>50</sup> Անդ: Հ. Դ. Ալիշան այս և նախորդ հիշատակությունները առաջ է հիսուսյաններու արձանագրություններն (անդ, էջ 425):

<sup>51</sup> Ա. Ալպոյանյան, «Պատմություն հայ գաղթականության», Գ, Ա Ճաս, էջ 300:

<sup>52</sup> Տե՛ս «Journal of the Asiatic society of Bengal», 1888, թիվ 1, ուր Հ. Biveridge հրատարակած է Xavier -ի նամակները:

<sup>53</sup> Ա. Ալպոյանյան, «Պատմություն հայ գաղթականության», Գ, Ա Ճաս, էջ 313:

<sup>54</sup> Անդ:

Մարգարիտի հետ Սիրխամի մեջ կաթոլիկ պորտուգալցիներուն համար եկեղեցի մը կառուցած է: Ազայլարյան ասով շրավականանալով, եկեղեցին մոտ դպրոց և եկեղեցականներու համար բնակարան կառուցած է<sup>55</sup>:

Մինչև ԺԹ դարը այս բարեկամական հարաբերությունները պահված են, որովհետև 1840-ին կհիշվի, թե Բասին քաղաքին եկեղեցիի արտոնագիրը կհանե Հովհանիսան անոնվ հայ մը, որ նույն քաղաքին մաքսապետն էր<sup>56</sup>:

Նույնպես ԺԹ դպրու առաջին կիսուն, Սիխնդիա բանակին սպարապետն էր երևանցի Հակոբ Պետրոսյան, որ մեծ ծառայություն մատուց Կվալիոռի մահարացային, և որ պատճառ եղավ, որ հոն հավաքվին երեսունի շափ հայ ընտանիքներ, որոնցմբ շատերուն պետքը ծառայեցին իր սպա իր բանակին մեց: Անոնցմբ ոմանք ձեռք բերին մեծ հարըստություններ, ինչպես մայոր Հովհաննես, որ 500 000 ոռփիի հարստություն դիմեց: Ուրիշ մը, երևանցի Ոսկան, այնտեղ անցուց պերճ ու շրայլ կյանք մը: Երրորդ մը՝ Հովհաննես Մկրտիչ անոնվ, կառուցանել տափակ «Վայելուշ եկեղեցի» մը և մեծ դպրոց մը Ակրայի մեջ հատուկ պորտուգալներուն, որոն ապա թողուց մեծագույն մասը իր ահագին հարստության, չի գիտցվիր, թե ի՞նչ պատճառով<sup>57</sup>:

Այս նշանակին երևույթներն դուրս հայոց պորտուգալյան ստավագծեներուն մեջ հաստափած ըլլալը և առանց որևէ առանձնաշնորհում վայելու առևտուրով զրադիլը ամեն տարակուս վեր է ԺԶ դարուն հաստափած է, որ հայեր կրնակին Գոայի մեջ, ինչպես նաև Դիլու կղզին<sup>58</sup>: Խորայել Սահրատի Գոայի մեջ հատուկ գործակալ մը ունենալու ապացուց կրնա համարվիլ Պորտուգալի արտածության կայաններուն մեջ հայերու գործունյա դեր մը կատարելուն:

Պորտուգալի և հայ կրոնավորներու գործակցությունը հսդիկներու մեջ բրիստոնեթյուն քարոզելու համար, երկու ազգերու համար տարբեր հարաբերություններու ալ ստեղծվելու առիթ եղած է:

Հայերը, որոնք սաստիկ կտառապետին պարսկական լուծին տակ, օգտվելով եվրոպական պետություններու այն ձեռնարկներն, որոնք կատարվելին Պարսկաստանը զինակից ունենալու համար ընդդեմ թուրքիո, դիմումներ կատարած են Եվրոպայի կառավարություններուն և մասնավորապես Հոռմի

<sup>55</sup> Դերենիկ Եպիսկոպոս Փոլատյան, «Սիխն ամսագիր», 1959, էջ 169.

<sup>56</sup> Անդ, էջ 168:

<sup>57</sup> Մ. Սերյանց, «History of Armenians in India», էջ 79:

<sup>58</sup> Հ. Պ. Ալիշան, «Սիխան», էջ 466.

պապերուն, որպեսզի բարեխոսեն իրենց համար: Այս տեսակ դիմումի մը հետևանքով է, որ Կղեմես Ը պապը (1592—1605) Սպանիո Փիլիպոս թագավորին, որ կտիրեր նաև Պորտուգալի, 23 սեպտեմբեր 1602-ին թուղթ մը կդրե և կինդրե, որ սպանիացի պաշտոնյաները հայերու հետ անհավատներու պես վլարվին Պարսից ծոցի Հյուրմուզ նավահանգիստին մեջ, որ պորտուգալցիներ գրաված էին: Ան հանձնարարե, որ հայերն լրիկին մաքս շաբանցանցվի, ինչպես կառնվի անհավատներն: Այս բոլոր բրիստոնյաներուն համար կինդրե այս շնորհը, ըստով որ պապին պետության Անկոնա նավահանգիստին մեջ հայերը հավասար իրավունք կվայելի են<sup>59</sup>:

Կղեմես պապը հայերու համար հավասար իրավունք խնդրելու համար Սպանիո թագավորին կղրկե Հովհաննես եպիսկոպոս Դիրքինցին, որպեսզի Փիլիպոս թագավորին խնամքին հանձնի հայ ազգը և շուղայեցի հայ վաճառականները, կաթոլիկ զավանության շահելու համար զանոնք: Այս կիրապով Հոռմի պապը հայ վաճառականներու շահասիրությունը քաջարերելով, կուղեր զանոնք կաթոլիկ դարձնել, «վասն մեծի փառացն Աստուծոյ»:

Հոռմի պապերը հայերը կաթոլիկության առաջնորդելու համար ուրիշ առիթներ ալ շահագործած են: Այսպես պապերը, ոչ բրիստոնական և ոչ ալ մարդասիրական նպատակներով, այլ նեղը մնացած հայերուն իրենց լուծք պարտադրելու համար, ներկայացող առիթները շահագործելու մեջ անդերազանցելու էին և բնավ չէին փախցներ որևէ պատեհություն:

Այդ առիթներն մին եղավ այն բռնագաղթը, որ Շահ Աբաս գործադրեց 1604 նոյեմբեր—գեկտեմբեր ամիսներուն Արարատյան դաշտեն մինչև Դավթեմբ բնակչությունը փոխարկելով անողոք խստությամբ Պարսկաստանի խորերը, ճղակիղադե Սինան փաշայի հրամանատարությամբ, Շահ Աբասի գեմ զացող օսմանյան բանակին առչե անբնակ անապատ մը ձգելու համար:

Այս սոսկալի ծրագիրը առիթ մըն էր, որ Հոռմի կօգուտագործեր ի նպաստ կաթոլիկ կրոնական քարոզության Արդարե, ան շթերացակ այս առիթը շահագործելու, իր գործականները այնտեղ զրկելով:

Սպահանի օգոստինյան կարգեն միաբան մը կփութա Պողոս Ե պապին (1605—1621) 1607 հունիս 27-ին նկարագրել հայոց ենթարկված աղետը և անմիջապես կավելինե, թե հայերը պատարազը Հոռմի կայական Ս. Եկեղեցվոր ծեսով չեն կատարեր, բայց իր համակը, էջ 210:

չողություն կավելցնե նաև, թե «Դավիթ կաթողիկոսը»<sup>60</sup> 25 կամ 26 եպիսկոպոսներու և 300 քահանաներու ներկայության ընդհանուր ժողով մը գումարած է Սպահանի պորտուգալցի օգոստինյաններու եկեղեցին մեջ, ուր համախորհուրդ որոշված էր պապին նամակ մը գրել, որպեսզի այս կողմերը հոռմեական ծեսով նշանափոր և հոգելից անձեր ուղարկե, որովհետև կուգեն հպատակի Կաթոլիկ Եկեղեցին և հոժքար են ընդունիլ և կատարել այն ամեն հրամանները, որոնք Հռոմեական Եկեղեցին կասմանն և կպատվիր պաշտամանց համար<sup>61</sup>:

Այս տեղեկությունը շատ կասկածելի է, որովհետև 25—26 եպիսկոպոսներու և 300 քահանաներու մասնակցությամբ ժողովի մը գումարումը, ան ալ Սպահանի մեջ, ընավ հավանական չէր և հավանորեն դիտումնավոր կերպով գրված էին այս շափականցված թիվերը՝ տպագործություն ձեելու համար:

Արդարն, շտավով կլուսաբանվի ակնկալվածը, երբ նամակին շարումակության մեջ կրացատրվին Դավիթ կաթողիկոսին նյութական անձկությունը և անոր պորտուգալցի կրոնավորներն ստացած նյութական օգնությունը և մասնավոր իր հոտին համար պաշտամանություն ստանալու հույսերը:

Այս նպատակով Դավիթ կաթողիկոս ինքն ալ դիմած է Պողոս Եպապին 1607 մայիս 13 թվակիր գրով մը, որպեսզի յանձնարար Շահ Արասին, որ «շնորհէ իրենց իրենց հին կրոնական ազատությունը և եկեղեցական և քաղաքական ինքնավարությունը»:

Դավիթ կաթողիկոսը այս քայլը առնելու հորդորած էին Սպահանի օգոստինյանները, որոնցմ եղբայր Օգոստինոս պորտուգալցի 1608 փետրվար 8-ին իր մեկ տեղեկագրին մեջ կիսուի Պարսկաստանի հայոց կրած աղեսին վրա և կավելցնե, թե «անոնք իրենց տեղը կուսան գտնել Հռոմի պապին»<sup>62</sup>:

Դավիթ կաթողիկոս այս տեսակ պաշտպանություն մը խնդրելու մղված կրնա ըլլալ՝ անել վիճակի մը իր անձը փրկելու համար: Արդարն, կաթողիկ պաշտամանությունը դեր մը կատարած է Պարսկաստանի մեջ այն շրջանին, երբ պապերու բարոյական հովանավորության տակ Թուրքիո դեմ զինակցություններ կազմած են, Պարսկաստանն ալ միասին ունենալու:

Արդարն, Նախիջևանի ունիտոռներեն Օգոստինոս Բաշենցի այն կարեոր վկայությունը, թե Շահ Արաս, ճամրա հանելե ետք 1604-ի մեծ գաղթին ժամանակ նույն գավա-

ռին կաթողիկության հարած բնակիչները, ետ զարձուցած է զանոնք, ապահովաբար ճնշումին տակ պահովի կենդեցվո անդրանիկ դուստրա Ֆրանսայի դեսպանին, որուն համար դարձյալ Բաշենց կվկայի, թե կդանվեր պարսիկ բանակին մեջ<sup>63</sup>: Այս բնական է մեծ հաջողություն մըն էր, քանի որ կաթողիկները կունենային պաշտպանյալի վիճակ մը, որ կրնար հայերը հրապուրել, որպեսզի կաթողիկ դավանանքը ընդունեին, այս պաշտպանությունը ունենալու համար:

Եվ արդարն, այս պատճառով էր, որ Սպահանի մեջ հայոց կաթողիկոսը կըներ ձեռնարկներ, անսալով այնտեղ հաստատված կաթողիկ կերպին խորհուրդին: Ասոր նման դիմումներ շատ կատարած են հայերը, որոնք միշտ իրաված են, որովհետև ոչ մեկ իրական օգուտ տեսած չեն: Սակայն միշտ կաթողիկ հոգևորականությունը չէ դադրած այս տեսակ դիմումներ թելադրել, հայթայթելու համար հպատակության և հնազանդության ապացուցներ, և միամիտ հայերն ալ չեն դադրած այդ ապարագուն կամ շատ ժամանակավոր բարեփոխությանները նկատել հաջողություններ և միշտ դիմումներ ըրած են:

Կաթողիկ միաբանությանց պորտուգալցի անդամները, ինչպես տեսնվեցավ, խառնված են այս ձեռնարկներուն, բայց դժբախտաբար անոնց անունները չեն հիշված:

Նորջուղակցիցները, որոնք առևտրականներ էին մեծ մասամբ և եկրոպական շուկաներու հետ հարաբերության մեջ էին շարունակ, ուղած են օգտվի պապերու բարյացակամութենն և մոտիկություն ցույց տված են կաթողիկության: Մյուս կողմեն, խնդրամատուց եղած են, որ պապերը միջնորդեն՝ իրենց առևտրական դյուրություններ ձեռք բերելու համար Սպահանին և պորտուգալին<sup>64</sup>, ինչպես բացատրվեցավ: Նույնպես, անոնք աշխատած են ուսում ստանալու, որովհետև իրը առևտրական, լեզուներու և հաշվի ծանոթություն ունենալու պետք զգացած են: Հետևաբար, իրենց տղաքը անվարան որկած են կաթողիկ միաբանություններուն Սպահանի մեջ հաստատած դպրոցները<sup>65</sup>,

Հավանորեն նոր-Զուղայի հայերը Պողոս Եպապին 1615-ին պարսից Շահ Արաս թագավորին զրկած դեսպանին՝ Պողոս Զիտադին Պոլունիացիին պետք է դիմում ըրած ըլլան, որ իրենց համար զպրոց մը հաստատվի: Պողոս Զիտադին այս խնդրանքը Գրիգոր ԺԵ պապին (1621—1623) ներկայացուցած է և խնդրած, որ հայ տղոց կրթության համար

<sup>60</sup> «Բանասեր», 1899, էջ 224:

<sup>61</sup> Հ. Ակինյան, հիշված աշխատությունը, էջ 295—

298:

<sup>62</sup> Անդ, էջ 306:

դպրոց մը հաստատե (1622): Պապը այս առաջարկը ընդունած է և Մինվերայի վանքեն գիտնական Գրիգոր Ուլուսենոս անձի մը հանձնած է այդ վարժարանին հիմնարկությունը և տեսչությունը, բայց անհիմա կողագույնը է նամբան ու չէ կրցած երթայ նախիշեան: Ասոր վրա, իր տեղը դրված է հայակի ունիտոռ Հովհաննես Դոմինիկոս նազարյան, որ հաջողած է դպրոցը բանալ 1630-ին Պրոպագանդայի տարեկան 3 000 ֆրանկ նպաստով<sup>66</sup>: Սակայն հայերը, կաթոլիկության հարողները և Մայրենի Եկեղեցին ըրաժնվողները միասին, ավելիին ձգտելով, Հոռմի մեջ ուղած են հայոց հատուկ բարձր վարժարան մը ունենալ, ուր հայ տղաք ծանոթանան օտար լեզուներու և արևմտյան գիտություններու<sup>67</sup>:

Պրոպագանդան, ընդունելով այս առաջարկը, 1623-ին որոշած է հայոց համար դպրոց մը բանալ, բայց փոխանակ Հոռմի, կծրագրե զայն հաստատել Արևելքի մեջ այնպիսի տեղ մը, որ թե՛ եվրոպական իշխանության տակ ըլլա և թե՛ մոտ հայարնակ վայրերու, որովհետ Արևելքին պատանիներ Հոռմ բերելը դժվարություններ կներկայացներ: Եվ զարմանալի է, որ հարմարագույն կնկատվի Արևմտյան Հնդկաստանի ծովեզերքին վրա, Պրոտոգալյան Հնդկաստանի կեդրոն Գոռարդաքը:

Դպրոցին մատակարարության համար Պրոպագանդան կհատկացներ իր կողմէ 150 սկուլտի նպաստ մը<sup>68</sup>, որ սակայն անբավական էր, ուստի պետք էր ուրիշ հասուլիններ ալ ապահովել՝ հանգանակությամբ և այլ միջոցներով:

Այս նպատակով Պողոս Զիտադինո Պոլոնիացի՝ Միրայի արքեպիսկոպոսը և նախիշեվանի հայ կաթոլիկ եպիսկոպոսին օգնականը<sup>69</sup>, պապին հանձնարարականով 1624-ին կղրկին նախ Սպանիա, որպեսզի սեղվոյն պապական նվիրակին միջնորդությամբ Սպանիո թագավորեն նյութական նպաստ մը ստանա դպրոցին համար, ապա Արևմտյան Հնդկաստանի ճամբով վերադառնա իր Արքոր:

Պողոս Զիտադինո, որ կերպի, թե մեծ եռանդ ուներ և կհավատար Գոայի այս դպրոցին արդյունավորման, մինչև հեռավոր աշ-

խարբներ՝ Ամերիկա և Հնդկաստան<sup>70</sup> ճամբորդեց հանգանակության համար<sup>71</sup>, սակայ առանց իր նպատակին հասնելու, դարձի Սպանիո մեջ վախճանեցավ 1627-ին, իշխանքերով հայոց համար հավաքած գումարը<sup>72</sup> Հոռմի մեջ հատուկ վարժարան մը բանալու հատկացնելու կտակով:

Պրոպագանդան այս առթիվ կրկին 1627 հոկտեմբեր 9-ի իր ժողովին մեջ կպարզ Հոռմի մեջ դպրոց մը հաստատելու խնդրով՝ և պաշտոն կուտա իր քարտուղարին, որ հայոց պաշտպան Բորբեղի կարդինալին հայտն է ժողովին մտադրությունը և «հարցնե, թթ [հայոց] հյուրանոցի և անոր պաշտոնյաններուն համար եղած ծախսեն դուրս կավելնս գումար մը, զոր հնար ըլլա գործածել այս դպրոցին համար, որ սուլր ժողովը գիտակից իր պարտականության, կիսորճ գեթ այժմ բանալ քանի մը հայ պատանիներու համար՝ փոքր դպրանոցի սահմանին մեջ տուն մը, մինչև որ Աստուծո օգնությամբ ավելի լայն շափով միջոցներ գոյանան ամսության և կատարյալ դպրանոց մը շինելու համար»:

Կարդինալ Բորբեղիոյի հետ բանակցությանց արդյունքը նպաստավոր կը լլա:

1628 փետրվար 4-ի նիստին մեջ կարդինալ Ուրալտեն կհայտնե, թե հայոց դպրոցին համար կարելի պիտի ըլլա հյուրանոցին եկամուտեն 150 սկուլտ ստանալ, 150 սկուլտ ար պիտի տրամադրեր Պրոպագանդան այն գումարեն, որ նախիշեանի դպրոցին հատկացված էր: Այսպիսով, կորոշվի նոր բացվելիք դպրոցին մեջ այնքան աշակերտ ընդունիլ, որքան կարելի է հոգալ 300 սկուլտ նպաստով:

Պրոպագանդան հազիվ այս որոշման հանդած էր, երբ 1629-ին Հոռմ հասավ Հ. Հովհաննես Թագեռու թոկոտն կարմելյան մեծավորը և խնդրագիր մը ներկայացնեց Չուղայեցի վաճառականներու կողմէն, որոնք կփափակեին ի միջի այլոց ունենալ Հոռմի մեջ՝

70 Կղեմես Գալանու «Եւեմետեն Հեղիկո» բացարությունը կողման կողման կողման, ինչ որ ժամանակ մը Ամերիկայի համապատասխաներ: Հավանական է, որ, ինչպես Գամշան ալ հասկցած է («Պատմութիւն Հայոց», 4, էջ 527—528) Զիտադինո գացած ըլլա Ամերիկա Սպանիո ճամբով և դարձի մեռած Սպանիո մեջ, օրեւ Հնդկաստան գացած ըլլար, Սպանիո ճամբով գառաջ պիտի շոնենար: Հետեւարար Գոա գացած և հոն արգելքի հանդիպած ըլլալը (ըստ Հ. Ակինյանի, «Մովսես կաթողիկոս», էջ 396) հավանական չէ:

71 Կղեմես Գալանու, «Միհրանեութիւն Հայոց...», էջ 525:

72 Այդ գումարը 2212 սիալ էր, զոր Հոռմ բերավ Խոան Baptista Dumali (Հ. Ակինյան, հիշված աշխատությունը, էջ 398):

73 Անդ, էջ 397:

<sup>66</sup> Հ. Գ. Զարբանալյան, «Պատմություն հայ դպրության», Բ, էջ 169, և Հ. Ն. Ակինյան, հիշված աշխատությունը, էջ 371:

<sup>67</sup> Հ. Ն. Ակինյան, հիշված աշխատությունը, էջ 306:

<sup>68</sup> Անդ, էջ 397:

<sup>69</sup> 1621-ին նշանակված էր այս պաշտոնին: Ան ճանշած էր հայերը և սորված հայերենը, 1615-ին նաև Արասի մոտ գնապան դրված ժամանակ:

հայկական դպրոց մը, Այս առաջարկին կլսվի, թե Մովսես կաթողիկոս Տաթևացի ալ ուժ տված ըլլա, ըստ Հոռմի պապական դիվանի արձանագրությանց<sup>74</sup>:

Պրոպագանդայի ժողովը 1630 հուլիս 23-ի սիստին, նկատի առնելով Հայոց առաջարկը, կորոշեց գրասանոցը բանալ Հոռմի մեջ, եթե Հոռմայի հայ երևելիները հանձն առնեն դպրանոցին շենքը և կարասիները հոգալ:

Այս գումարը, որ Պրոպագանդան և Հոռմի հայոց հոգությունը կարող էին տալ, միայն չինդ ուսանող, անոնց վերակացուն և ծառա մը կրնար ապրեցնել:

Երկար բանակցություններ կատարվին և զանազան կարգադրություններ կը լլան, սահայն դպրոցը կարելի լըլլար բանալ<sup>75</sup>, որովհետեւ ջուղայիցիները սպասված օգնությունը շեն ըներ Հետեւարար Հոռմ կորոշե սահմանափակ թվով աշակերտներուն համար միայն բանալ դպրոց մը, իր կարողության սահմանին մեջ: Բայց, ինչպես կերպի, կարելի ըլլար Հոռմի մեջ հաստատել հայ նոր դպրոց մը և կորոշվի Ուգրանյան վարժարանին մեջ պահճությալ թվով հայ աշակերտներ, որոնք, բնական է, պիտի պատրաստվեին հավատքի տարածման՝ պրոպագանդի գործին:

Ասկէ բավական ետքը, Աղեքսանդր է պապը (1655—1667) վերջապես Հայողեցավ Հոռմի մեջ բանալ հայոց հատուկ կոլեջ (collegium) մը, Կղեմենս Գալանոս հայագետ լատին վարդապետին տեսչության տակ:

Բայց, որչափ կերպի, այս կարգադրությամբ ջուրը ինկած է Գոյայի մեջ հատուկ հայոց դպրոց մը բանալու ծրագիրը և Պորտուգալ չէ կրցած դեր մը կատարել հայոց, թեն կաթոլիկ, կրթության գործին մեջ:

#### 4. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՂԵՐ ՀԱՅԵՐՈՒ ԵՎ ՊՈՐՏՈՒԳԱԼՅԻՆԵՐՈՒ ՄԻջնական

Հայերը առհասարակ հետամուս եղած են օգտվելու մշակութային մարզի մեջ բոլոր այն ազգերեն, որոնց հետ ուղղակի կամ անողողակի շփում և հարաբերություն ունեցած են:

Պորտուգալիցիները, իրը լատինական մշակութով սնած ժողովուրդ, տեսակ մը խնամություն ունեցած են մեզի հետ, որ եվրոպական գրականությամբ սնած և անկե մեծ լափով օգտված ենք:

Մեր եկեղեցին օգտված է հույն հեղինակներու գործերնեն: Բազմաթիվ են հունարեն կատարված թարգմանությունները:

Արևելյան և արևմտյան եկեղեցիներու բաժանումն ետք, պապերն ալ աշխատած են հայերը լատին մշակութիւն ենթարկելի

<sup>74</sup> Հ. Ակինյան, հշշված աշխատություն, էջ 352:

<sup>75</sup> Ա. Աղպայանյան, «Պատմություն հայ դպրոցի», էջ 414:

ԺԲ դարեն ետք կաթոլիկ ունիտոռ (միաբանող, միաբար) քարոզիչներ Հայաստան եկած են և յաջողած են նույնիսկ կրոնական համայնք մը կազմել նախիջևանի, Ազուլիսի և Գողթան գավառներու մեջ, Մասնավորապես ուսումնական մարզի մեջ անոնք կարելոր գործունեություն ունեցած են հայ պատանիներ կրոնական քարոզիչներ: Այս առթիվ կատարված են կարողությունը լատինական լեզվով կրոնական գրքերու թարգմանություններ, որոնցմեջ օգտված են մեր դպրեվանքները:

Այդ պրանոցներեն լավագույն նմուշն էր Հովհաննես Կոլոստ պատրիարքին Հայ Եկեղեցիի վերականումին համար Կոստանդնուպոլսու մեջ հաստատած կրոնական վարժարանը, որուն համար Պրոպագանդայի վարժարանի աշակերտներեն Ղուկաս վարդապետ Խարբերդցին<sup>76</sup> վարձած էր և անոր կատարել տված էր բազմաթիվ լատիներեն և երբեմ իտալերեն գրքերու թարգմանություններ: Թերևս ֆրանսերենն և սպաներենն ալ թարգմանություններ կատարված են: Այս կարգին, պրոտուղալերենն ալ թերևս թարգմանություններ կատարված են, որոնց ձեռադրերը չեն հասած մեզի:

Նոր ժամանակներու մեջ, իրեն հազվագյուտ նմուշներ, պրոտուղալ լեզվեն թարգմանված քանի մը գործեր ունինք տպագրված:

Այսպիսս, 1809-ին տպագրված է «Բելիսարիոս», յարացուց անյիշալարութեան» գործը, որ առաջին հայ լրագրի հիմնադիր Հարություն քահանա Շմավոնյանի տպարանին մեջ տպված էր ի Մադրաս: Այս գործին տպագրության ժամանակի, Հարություն քահանա Շմավոնյան ուրիշներուն թողած էր իր արդյունավոր տպարանը և քաշված:

Տպարանին նոր վարիչները, որոնք կգտնըլ կաթոլիկ աղեցության տակ, տպած են այս գործը, «յօրինեալ նախի ի գաղղիական բարբառ, ի ներհուն Մարմատելայ Գաղղիացոյ և անտի թարգմանեալ ի լեզու լուսիտանիացոց»: այն լեզվեն «անդր ածեալ եղալ յարամեան բարբառ ի վերապատուելի Տեան Պետրոս վրդ: Պուլանազեան կարնեցոյ, յաշակերտէն Պրոպագանդի», որ կատարված էր այս թարգմանությունը ոչ թե իր սեփական բնտրողությամբ, այլ Սամվել Մուրագի<sup>77</sup>, որ գործին սկիզբը, այս գործը տպա-

<sup>76</sup> «Որդի Արրահամու ի տումէն Գասպարեան, յորշնեալ բարգմանի պատարագի:

<sup>77</sup> Գրքին ճակատը կկարդանք, «Տպագրեալ արդեամբ և զանիք քաջատումիկ պայազատի Տեան Սամուէլ Մկրտչ Մուրատիան Եւոպկիացոյ, ի յիշատակ ծնողաց իրոց»: Ավելորդ է դիտել տալ, թե Սամվել Մուրագի բարերարն է Մուրատիան վարժարանին, կաթոլիկ էր և կաթոլիկ կրթություն էր ստացած:

գրել տալու պատճառները կրացատրեն: Ան կհայտնեն, թե ինք, մղված ազգին «պայտառափալության և լուսավորության» փափագեն, որոն համար միշտ կշանար, սորված էր անգլիերեն և փնտուած էր իմաստալից գործեր, այս նպատակով ժանոթացած էր Մարդանդեմի թելիսարիոսի գործին և շատ սիրած: Ուստի փափագած էր հայերենի թարգմանել տալ, բայց հարմար մեկը չգտնելով, հետաձած էր գործը, որոն համար նույնիսկ 1788-ին, իր ջինաստան ճամբորդության ժամանակ, եղվարդ Ռափայել Ղարայանին (ապագա իր աները) հանձնարած էր, որ եթե ինք մեռնի, իր դրամով կատարեր իր այս փափագը: Ջինաստանին դառնալեն ետք, թարգմանությունը կատարել տված էր Պրոպագանդայի աշակերտ Բուռնազյան Պետրոս Վարդապետին<sup>78</sup>:

<sup>78</sup> Կարնեգի Բուռնազյան Պետրոս Վարդապետը Մադրաս եկած է Հավանարար իր ճմուտ այնալ լեզուներու Կրաշալերվի տեղացի հայերեն և օգտակար թարգմանություններ կկատարեր ու գործ հայեայթե Հարություն քահանա Շմավոնյանի տպարանին: Սամվել Մուրադ, Աղայալանցի բարեկամը, պատեհութենեն առաջին օգտվող կըլլա իր նախասիրած գիրքը՝ «Թելիսարիոս»-ը թարգմանել տալով, իսկ երկրորդը հանդիսանա Աղայալանցի, որ թարգմանել տված է երկհատոր «Թանգարան բարեզրադ կամ համարում զուարձալի և քաղցրաւոր բարոյական պատմութեանց» (1809) անոն գործը, իտալերենն թարգմանված (տե՛ս Հ. Ա. Ղազիկյան, «Նոր մատենագիտություն», էջ 725—726): Այս գիրքը երկրորդ տպագրություն մըն ալ ունեցած է 1872-ին Երևանուանք (անդ, էջ 324), անվան ֆոփիսությամբ մը: Բուռնազյան թարգմանած է նաև Ֆլորիանի «Հոմապիլիոս»-ը, որ տպված է 1812-ին Մարդասի մեջ, սակայն Պրոպագանդայի աշակերտը վարանած է զնիւու այնտեղ իր անունը, որ մատենեն ավելի պետք էր հայտներ, որովհետու իր կատարած թարգմանություններուն մէջ Ֆլորիանի պես հանրածանի հեղինակի մը գործը միակն է, որ տիեզերական անոն մը ունի և ապրելու ահճամանված գործ մըն է, թեև ան մարդկային բարուական նվիրված գործ մըն էր, սակայն անոր հեթանոսական ժագումը վերապահումի պատճառ պետք է եղած ըլլա Պրոպագանդայի այս հու աշակերտին, որ գուցէ ասով իր կոչումին զեմ դրած ըլլալ կկարծեր, բրիստոնեական բարոյականեն զուս ուրիշ բարոյական մը մատնանիշ ընկելով մարդոց: Նկատելի է, որ Արքահամ Աղանուր, տարիներ հետո, ֆրանսացի տիկին ժումարի գրած «Թելիսարիոս»-ը (1853-ին) և Ֆլորիանի «Նորման Պոմփիլիոս»-ը (1853 և 1860) թարգմանել տված է Հ. Ա. Հյուրմյուզի:

Պորտուգալ լեզվեն ուրիշ թարգմանություններ, ուղղակի կամ թելիսարիոսի պես անուղղակի կատարված, հիշված չեմ գտած: Կամիայն Անտոնիո (Antonio Epnes) պորտուգալցիի «Ապահարզան» անուն մեկ արարվածով ողբերգության թարգմանությունը, որ նույնպես թելիսարիոսի պես կատարված է ֆրանսերեն թարգմանության վրային, «Արձագանք»-ի խմբագիր Աբգար Հովհաննեսյանի կողմէ<sup>79</sup>:

1914—1918 աղետալի տարիներին ետք, դեպի արտասահման ապաստանող հայերը, որ Հայ Սփյուռքը կազմեցին և աշխարհի ամեն կողմ ցրկեցան, ապաստան փնտուեցին նաև Հարավային Ամերիկայի հանրապետություններում մեջ, որոնց ընդարձակագույնն է Բրազիլիա, ուր հաստատված են և կապին բավական թվով հայեր, մասնավորապես Ռիո Շի Յանեյրո և Սան Պաուլո քաղաքներուն և անոնց շրջակայրին մեջ:

Բրազիլիա հաստատված այս գաղթականները, 40 տարվան համեմատաբար շատ կարծ շրջանին մեջ, բավական բարգավաճ վիճակի մը հասած են տնտեսապես և ունին բրազիլյան համալսարաններե՝ վկայալ բազմաթիվ բժիշկներ, փաստաբաններ և այլ մասնագետներ, Բրազիլիո հայերը ընտելացած են երկրի լեզվին, որ պորտուգալերինն է, Դպրոցականները այս լեզուն կուսանին դպրոցներուն մեջ իր երկրին լեզուն և կհմտանան, և նույնիսկ նորահամ սերունդը պորտուգալերինն լավ յուրացուցած է, և շատ լավ կհմտանա:

Բրազիլիո մեջ հրատարակվող հայերեն թերթերն ալ պարտավորված կզգան իրենց էջերեն մեկը հատկացնել պորտուգալերեն հոգվածներու Ռմանք հրատարակած են պորտուգալերեն:

Այսօր ուրեմն շատ ավելի բեղմնավոր և ընդարձակ են մշակութային հարաբերությունները ոչ թե Պորտուգալի և Հայաստանի միջև, այլ պորտուգալյան և հայ մտքին միջև, քանի որ կան բավական թվով հայեր, որ այսօր մտավոր մոնունդ կատանան պորտուգալերեն լեզվով և ուրիշներ, որ նույնիսկ իրենց մտքի արտադրություններով կձոխացնեն պորտուգալերեն լեզվով մշակված գրականությունը:

Կամիրե, 1961 նոյեմբեր:

<sup>79</sup> Տե՛ս «Թատրոն», 1895, թիվ 3.



## ԴՊՐՈՑՆԵՐՆ ՈՒ ԳՐԱՏՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ\*

### 2. ԳՐԱՏՆԵՐԸ

Վանքերում ծավալված լուսավորչական լայն գործունեությունը, որ կապված է ոչ միայն ուսուցման, այլ նաև զանազան գիտական երկերի ստեղծման հետ, նպաստեց բազմաթիվ ձեռագրերի կուտակմանը: Այդ պատճառով բնական է, որ վանքերն ու գպրոցները ունեն գրատուն-մատենադարաններ, որոնց մասին հիշատակություններ կան ժթ-ժդ դարերի մատենագիրների մոտ: Սեփական գրատուններ ունեն նաև թագավորները, իշխանները և բարձր հոգուրականության ներկայացուցիչները: Հայտնի է ևսոն Բ թագավորի մատենագրանը նրա Դարրաս պալատում, Սիս քաղաքում (Կիլիկիա):

Միջին դարերում ձեռագրերը ավելի մեծ արժեք էին ներկայացնում, քան որևէ այլ գուլք: Թշնամինների հարձակումների ժամանակ առաջին հերթին փրկում էին ձեռագրերը, թաքցնելով ամրոցներում և քարանձավներում: Այսպես, օրինակ, Կիրակոս Դանձակեցին ասում է, որ 1105 և 1151 թվականների սեղուկյան արշավանքների ժամանակ, Սանահնի և Հաղպատի ձեռագրերի հարուստ հավաքածուն թաքցել է դժվարամատչելի քարանձավներում:

Սակայն, շնայած դրան, հաղարավոր ձեռագրեր ոչնչացվել են Հունական, պարսկական, արարական, սեղուկյան, թուրքական կործանարար արշավանքների ժամանակ, աշխարհանշակ լենկ-թեմուրի և այլ նվաճողների կողմից: Հայ մշակութի համար ամենամեծ աղետը հանդիսացավ սեղուկների

արշավանքը Սյունիք 1170 թվականին, երբ նրանք կողոպտեցին Բաղարերդ ամրոցը և այրեցին ավելի քան 10 000 ձեռագիր, որոնք ապահովության համար Տաթևից ամրոց էին փոխադրվել այլ թանկարժեք սպասեղենի հետ միասին: Մի քանի հազար ձեռագիր ոչնչացվեց Կիրանանի Բաալբեկ քաղաքում, որը հրիմատներում թուրքերի կողմից: ԺՈ գարի վերջում քարանձավներում հայտնաբերված Հաղպատի և Սանահնի ձեռագրերի մի մասը բոլորվին փտել էր կամ քարացել: Հաղբատի ձեռագրերի մի զգալի մասը այրեց անգետ Պետրոս սարկավագը, որ ձեռագրերից խարուցկ էր կազմել 12 ոտնաշափ բարձրությամբ<sup>18</sup>:

Հաշվի առնելով ձեռագրերի մեծ արժեքը, օտարազգինները կողոպուտների ժամանակ հաճախ իրենց հետ տանում էին նաև ձեռագրերը: Նշանակալից է այդ տեսակետից Մշանաբնակիր՝ մոտ 40 կղ. քաշ ունեցող ամենամեծ մագաղաթյա ձեռագրի ճակատագիրը, որի մագաղաթը պատրաստելու համար օգտագործված է մոտ 700 հորթի կաշի: 1204 թվականի Մուշ քաղաքի կողոպուտի ժամանակ նա զերի ընկավ սեղուկների ձեռքը, իսկ հետո զերությունից ետ զնվեց 4 000 դրամ (1 դրամը հավասար է 4,65 գրամ արծաթի) փրկագին վճարելուց հետո միայն, որը հանդիսական միջոցով հավաքել էր Մուշ քաղաքի և մերձակա գյուղերի հայ բնակչությունը: 1915 թվականի զաղթի ժամանակ ձեռագրեր երկու մասի բաժանվելով, Մուշ քաղաքից զանազան ճանապարհներով և մեծ գմբարություններով գալիս հասնում է էջ-

<sup>18</sup> Հ. Ղ. Խենինյան, «Աշխարհագրութիւն շորից մասնակի աշխարհն», Վենետիկ, 1835, Ա, էջ 279.

միաժին, ուր նրա երկու մասերը վերջնականապես միանում են իրար:

Արձանագրական տվյալներով ձեռագրատները զանազան անուններ են ունեցել — գրատուն, նշխարատուն, նշխարախուց: Արձանագրությունների մեծ մասն ունի գրատուն, այդպես է Հաղպատի արձանագրության մեջ 1179 թ., ինչպես նաև Հոռոմայրի 1201 թ., Հոռոմոսավանքի 1229, 1277 թ. թ., Սաղմոսավանքի 1235 թ., Սանահնի 1214, 1259, 1274, 1275 թ. թ. արձանագրությունների մեջ, սակավ է նշխարատուն՝ Դաղիվանքի 1241 թ., Հոռոմոսավանքի 1229 և 1277 թ. թ., Սանահնի 1063 թ. արձանագրությունների մեջ և մեկ անգամ էլ նշխարախուց՝ Սանահնի 1652 թ. արձանագրության մեջ: Հոռոմոսավանքի 1229 թվականի արձանագրության մեջ միաժամանակ օգտագործված է երկու տերմին՝ գրատուն և նշխարատուն, որոնք վերաբերում են տարրեր շենքերի: Նրանցից մեկում պահպատ էին միայն ձեռագիր մատյաններ, իսկ մյուսում՝ վանքի թանկարժեք գույքը: Ինչպես հին, այնպես էլ արդի հետազոտողների ու գրողների մեծամասնությունն օգտագործում է գրատուն տերմինը:

Գրատների շինարարության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկզբում նրանց համար օգտագործվել են եկեղեցիների խորանները, որտեղ եկեղեցական թանկարժեք սպասքի հետ միասին պահվելիս են եղել ոչ պակաս թանկարժեք ձեռագրերը: Ձեռագրերի համար հատուկ գրատներ կառուցել սկսել են համեմատաբար ուշ ժամանակներում, ոչ վաղ ժարից, գիտության րուն զարգացման շրջանում, երբ դրա հետ կապված, ծավալվեց դպրոցական շենքերի շինարարությունը:

Առաջին գրատների շինարարական աշխատանքների որակը համեմատաբար բարձր չէր: Պատերը շարվում էին լեռ քարերից, ծածկը՝ փայտաշեն: Սակայն շուտով գրատները կառուցվում են նույնքան հիմնավոր, որքան և վանքի մյուս հիմնական կառուցումները՝ եկեղեցիները, զավիթները, սեղանատները, զանգակատները: Հայտնի են դեպքեր, երբ գրատները հիմնավորապես վերակառուցվել են, ինչպես նոր Գետիկում և Հաղպատում, որը փոփոխել է ներքնամասերի կոմպոզիցիան:

Գրատների կառուցումներն ընդհատվում են հավանաբար ժամանում գարում, Հայաստանը հափշտակած օտարազգի զանազան թշնամական ցեղերի հարյուրամյակներ տևող անընդհատ պատերազմների հետևանքով: Միայն ժէ դարի կեսին, պատերազմների միջև ընկերությունը գամարել է մատան, Մ. Բարիսուլարյանը նոր Գետիկի գրատունը պահեստ է համարել, իսկ Ա. Թումյանը՝ դամբարան<sup>21</sup>:

Վում են նոր շենքեր և վերականգնվում են հները, որոնց թվում և Սանահնի գրատունը:

1652 թվականին:  
ԺԼ—ԺԹ դարերում որպես գրատուն օգտագործվում էին վանքերի զանազան մասերը: Ժէ դարի վերջում, Հաղպատի մոտ, բարանձավներում գտնված ձեռագրերը տեղափորկեցին Ս. Գրիգոր եկեղեցու վերին խորաններում և զանգակատան միջին հարկի շրութամբունքներում, իսկ ժթ դարի վերջում, 278 ձեռագրերը պահելու համար գրատուն դարձրին ներքին Վարագավանքի Ս. համար եկեղեցին<sup>19</sup>:

Հայտնի են դեպքեր, երբ գրատան են վերացվել բնակելի սենյակները: Էջմիածնի վանքում ժթ դարում վեհապահնի շենքից երեք սենյակ առանձնացվեց, որոնցից մեկում պահվում էին ձեռագրերը, մյուսում՝ տպագիր գրքերը, իսկ երրորդը ծառայում էր որպես ընթերցասրաց<sup>20</sup>: Այս դարասկզբին էջմիածնի ձեռագրերը փոխադրվեցին նրանց համար հատուկ կառուցված երկհարկանի մի շենք: Այն գտնվում է Կաթողիկե Մայր Տաճարից հյուսիս-արևելք, ոմնի բազմաթիվ սենյակներ, որոնք հարմարեցված են եղել ձեռագրերի պահպատման և ուսումնասիրության համար:

Անցյալում միշտ չէ, որ գրատները օգտագործվել են իրենց ուղղակի նշանակությամբ: Օտարերկրյա դաժան տիրապետությունների ժամանակաշրջանում, երբ ձեռագրերը երկար տարիներ, նույնիսկ հարյուրամյակներ պահվելիս են եղել թաքստարաններում, զրատներն օգտագործվել են որպես մթերանոցներ: Օրինակ, Հաղպատի գրատանը, գետնի մեջ թաղված կարասներում գինի էր պահվում: Ինչպես այդ, այնպես էլ շատ շենքերի վրա արձանագրությունների բացակայության պատճառով հնարավոր է, որ ժթ և ի դարերի հետազոտողների կողմից սխալ է որոշված նրանց նշանակությունը: Հովհաննես Ղրիմեցին Հաղպատի գրատունը համարել է մատան, Մ. Բարիսուլարյանը նոր Գետիկի գրատունը պահեստ է համարել, իսկ Ա. Թումյանը՝ դամբարան<sup>21</sup>:

<sup>19</sup> Ս. Վ. Տեր-Ավելիսիսյան, «Հաղպատի և Սանահնի բարանձավների հնագիտական հետազոտության կարելությունը», Թիֆլիս, 1915: — Ե. Լալյալյան, «Վասպուրական», Թիֆլիս, 1912, էջ 49:

<sup>20</sup> Ա. Ս. Ռվարով, «Էջմիածնի գրադարանը, Հնագիտական 5-րդ համագումարը Թիֆլիսում, Արձանագրություններ», Մոսկվա, 1882, էջ 351 (ուսիրեն):


<sup>21</sup> Կ. Ղաֆարարյան, «Հաղպատի ճարտարապետական մի քանի կառուցվածքները», էջ 134: — Մ. Բարիսուլարյան, «Արցախ», Բաքու, 1895, էջ 353: — Ա. Թումյան, նշված աշխատությունը, էջ 17:

Այժմ կա հինգ գրատում, որոնք հիշատակված են արձանագրությունների մեջ և պատմիչների տեղեկություններում: Նրանց ուսումնասիրությամբ կարելի է բավական որոշ գաղափար կազմել այդ կառույցների կոմպոզիցիոն առանձնահատկությունների մասին: Նրանց մեծ մասը, Սանահնի, Հաղրատի և նոր Գետիկի գրատները գտնվում են վանքի սահմաններում, տաճարից ոչ շատ հեռու, հյուսիսակողմում: Ենթերը խստորեն դիրքորոշված են աշխարհի կողմերին համապատասխան: Միակ մուտքը՝ եկեղեցիների հետ հարմար կապի համար, բացված է հարավային կամ արևմտյան կողմից: Բացառություն են կազմում Սաղմոսանվանքի և Հոռոմոսավանքի գրատները, որոնք գտնվում են եկեղեցու և նրա գավիթի հարավային կողմում: Սաղմոսավանքի գրատումը բնորոշ է իր յուրօրինակ առանձնահատկություններով:

Գրատները բաղկացած են լինում մի սենյակից և որպես կանոն բառակուսի հատակագիծ ունեն: Մածկը վրանանման է, բազմազան ձևի, որն առանձին շենքերի յուրօրինակ առանձնահատկություններ է տալիս: Դուռը մեկն է: Պատերի մեջ կան զանազան մեծության և ձևի որմնախորշեր՝ ձեռագրեր և թանկարժեք իրեր պահելու համար: Հիմնական լուսավորությունը ստանում են երդիկից, լրցուցիլ լույսը պատերի մեջ բացված փոքրիկ, նեղ լուսամուտներից:

Նոր Գետիկի գրատումը, որն ըստ Կիրակոս Գանձակեցու կառուցվել է վերևում արդեն քննված գավիթի հետ միաժամանակ ԺԴ գարբի առաջին քառորդում, պահպանել է այդ տիպի համեմատաբար վաղ կառույցների յուրահատուկ գծերը: Սկզբնապես այն իրենից ներկայացնում էր գեղնապուն, լեռ-կրաքարից շարված ոչ բարձր մի շենք: Փառակուսի հասակագիծ ունեցող այդ սենյակը ( $7 \times 7,2$  մ.) ընդարձակված է արևելյան և արևմտյան պատերի մեջ խոր որմնախորշերով, որից շենքը արտաքուստ ստացել է ուղղանկյուն ձև: Նրա, ինչպես և Հարեան գավիթի ծածկը, փայտաշեն է, Հայաստանի ժողովրդական բնակարանների հազարաշեն ծածկի ձևով, որ միանգամայն թույլ էին տալիս շենքի շափերը:

Ծուռով գրատան գլխին սկսեցին կառուցել երկհարկանի զանգակատումը, որի շինարարությունը կատարվեց երկու հերթով: Առաջին հերթին, խաչաձև հատակագիծ ունեցող ավելացվող հարկը կառուցելու համար, գրատան պատերին կից շարվեցին ութը որմնասյուներ (Եկար 6): Փայտաշեն ծածկը փոխարինվեց քարե ծածկով, որ կազմված էր երկու զույգ խաչաձև կամարներից, որոնք իրենց կենտրոնում պահում են վրանը: Երկրորդ հարկը



Նկար 6.—Նոր Գետիկի: Գրատան հարավարևմտյան որմնախուները:

բարձրացվեց միայն երկու շարք քարե շարվածքի բարձրությամբ, որ պատված է սրբատաշ և տուֆով: Այդ հաստատվում է ճակատների վրա տեղավորված անավարտ կիսասյուների առկայությամբ: Երկրորդ հարկի հատակի և գրատունը ծածկող կամարների միջև ստեղծված դատարկ տարածությունները թշնամիների արշավանքների ժամանակ ծառայում էին որպես զաղտնարաններ վանքի ձեռագրերը և թանկարժեք իրերը թաքցնելու համար: Երկրորդ հերթին ավարտվեց վերին մասի կառուցումը՝ երկու բեմ ունեցող փոքրիկ եկեղեցու կառուցումը: Եկեղեցին պսակվում էր բազմայուն ոստոնդազանգակատու: Վերին մասի կառուցումը ավարտված է 1291 թվականին, Դասապետ վարդապետի և նրա եղբայր Կարապետի ծախքերով<sup>22</sup>:

Վերակառուցման հետևանքով գրատան մեջ պատերից նկատելիորեն դուրս ընկնող հենարանները որոշ շափով մասնատում են սրահը: Սենյակի որոշ մասը փաստորեն վեր է ածկել խոր ընկած խավար՝ որմնախորշերի: Լույսի պակասը լրացնելու նպատակով, որ ներս էր

22 Հ. Զանգովայան, նշված աշխատությունը, էջ 123—124:—Կ. Կոստանյան, նշված աշխատությունը, էջ 131.

թափանցում միայն վերին հարկից և երդիկից, շենքի հյուսիսային, արևելյան և հարավային կողմերում զուգ-զույգ լուսամուտներ են բացվել:

Նույնանման վերակառուցման է ենթարկվել նաև Հաղբատի գրատունը, որը քառակուսի հատակագիծ ունեցող մի շենք է, ծածկված երկու զույգ խաչաձևվող կամարներով: Ամենափրկչի խաչքարի արձանագրության համաձայն, այն կառուցված է (հավանաբար վերակառուցված է) վանքի վանահոր՝ հաւանցի Հովհաննես իոնիանցի կողմից: Սակայն շենքի ներսում գտնվող 1179 թվականի արձանագրությունը, որտեղ խոսվում է գրատանը այգիներ նվիրաբերելու մասին, վկայում է, որ այդ ժամանակ Հաղբատում արդեն գոյություն ուներ գրատան առանձին շենք: Կաֆադարյանի կարծիքով, այն կառուցված է եղել ԺԱ դարի կեսերին, մոտավորապես Սահաճի գրատան հետ միաժամանակ, գույք և ավելի վաղ, իսկ ներկա տեսքն է ստացել 1258—1260 թվականների միջեւ<sup>23</sup>:

Ենքի կառուցողական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշել կառուցումների մի քանի շրջան: Դատելով հյուսիսային պատից, սկզբնական շենքն ունեցել է անփուլթ շարվածք՝ վատ տաշված տարրեր շափի քարերից: Բոլոր պատերն էլ որմնախորշեր են ունեցել: Հարթ պատերը վկայում են, որ ծածկը փայտարեն է եղել, ըստ երկութիւնի վրանաձև: Ենքը ունեցել է մեծ շափեր (8,58×8,54 մ.), որի պատճառով այն հենված է եղել ներքին սյունների վրա:

Վերակառուցման ընթացքում, արևելյան պատի որմնախորշից բացի, մյուս երեք կողմերում որմնախորշերի մի մասը շարվել է: Քարե ծածկը կառուցվելու համար պատերին կցվել են հղոր որմնայուններ, որոնք մասամբ ծածկում են մնացած կամարակապ որմնախորշերից շատերը: Այդ որմնայունները հենարան են հանդիսանում ամբողջ շենքի վրայով գցված երկու զույգ խաչաձևող կամարների համար, որոնք կենտրոնում կազմում են երդիկ ունեցող ութկողմանի մի վրան: Դրանից բացի, որմնայունները հենարան են հանդիսանում նաև պատերի վերին, որուսը ընկած մասը կրող կամարների համար, որոնք որմնախորշերի կամարների հետ միասին, արևելյան կողմում մի տեսակ երկաստիճան սյունաշարք են կազմում: Անցումը պատից դեպի կամարակապ մակերեսները ընդգծված է քիվով: Կենտրոնական մասերում քիվերը վեր են բարձրացված:

Խաչաձևող կամարների բնույթով, քիվերի դասավորությամբ, ութկողմանի վրանների

<sup>23</sup> Կ. Ղաֆադարյան, Եղած աշխատությունը, էջ 132.

ձևերով և ընդհանուր համաշափություններով: Գրատան ներքնամասը նման է Հաղբատի սեղանատան ներքնամասին, որը նույնպես կառուցված է ԺԴ դարի կեսին<sup>24</sup>: Այդ հիմք է տալիս ենթադրել, որ տվյալ շինությունները միևնույն վարպետի ստեղծագործությունն են հանդիսանում:

Վերակառուցման շնորհիվ ոչ միայն զգալիորեն վեճացավ Հաղբատի գրատան բարձրությունը, այլև զգալիորեն փոխվեց ներքնամասի կոմպոզիցիան, որով փոքրիկ փայտե ծածկ ունեցող շենքը դարձավ քարե ծածկով բարձր ու մոնումենտալ շինություն: Հետագայի միջին դարերում մահտեսի Աղիզի, իսկ վերջին անգամ 1939 թվականի վերակառուցմաները շենքի կոմպոզիցիայի մեջ փոփոխվելուներ չենքը կոմպոզիցիայի մեջ:


Հոռոմոսավանքում տարբեր ժամանակներում երկու գրատուն է եղել: 1229—1277 թվականներին գրատուն է եղել պարապմունքների դահլիճին կից, փոքրիկ սենյակը: Այն ուղղանկուն մի սենյակ է, որ մոտավորապես 20 քսուակուսի մետր տարածություն ունի: Նրա լուսը թափանցում է թաղակապ ծածկի երդիկից: Հետագայում, ըստ 1277 թվականի արձանագրության, վարպետ Ֆրեր կառուցել է նոր գրատունը, որի ներքնամասն իր ճարտարապետական ձևով նույնն է, ինչ որ Հաղբատի գրատունը Ենքի հատկագիծը քառակուսի է, տարածությունը մոտ 70 քառակուսի մետր, ծածկված է երկու զույգ խաչաձևվող կամարների միջոցով, որոնք պահպանվել են ութիր որմնայունների վրա:

Կենտրոնական մասի ծածկը վրանաձև է, որը վերևում երդիկ ունի: Արահը զարդարված է ԺԴ դարին բնորոշ եռատերեկ քանդակներով: Հոռոմոսավանքի գրատան առանձնահատկությունն է հանդիսանում երկու դռան առկայությունը ընդհանուր պատերի մեջ, որը կանազանում է նրան նմանօրինակ մյուս շինություններից: Դռներից մեկը տանում է դեպի պարապմունքների դահլիճը, մյուսը՝ դեպի եկեղեցական սպասքի պահեստը: Վերջինս կառուցված է ԺԴ դարում չորս սյուն ունեցող գավիթի ձևով, զգալի տարածություն ունի (մոտ 275 քառակուսի մետր) և աշքի է ընկնում համաշափությունների խստությամբ և զարդարանքների հարատությամբ:

Մեզ հայտնի գրատուներից հնագույնը Սահաճի գրատունն է, որ կառուցված է 1063 թվականին և պահպանվել է իր նախին սկան ձևով: Նրան տարբերող առանձնահատկությունը չորս կամարների վրա բարձրացող քիթխարի վրանն է: Կամարներն իրենց հեր-

24 Հ. Խալիքախյան, «Հայկական սեղանատաների ճարտարապետությունը», էջ 133—135.

САНАИ  
ԵՎԱԼՈՒՏԵԿ



Նկար 7—Սանիստին: Գրատան և նրա նախարարի հատակագիծը:

թին հենվում են յուրաքանչյուր պատի մեջ-  
տեղում գտնվող որմնասյուների վրա (նկար 7  
և 8): Բարդ ձև ունեցող ութկողմանի վրանը  
նստած է փոքր բարձրություն ունեցող գլանի  
վրա, որն իր հերթին հենված է շորս կամար-  
ների և առազատների վրա: Վրանը ըստ  
բարձրության կազմված է շորս մասից, որոնք  
իրարից անշատվում են գոտիներով: Վրանի  
ներքեւ մասի կողմերը ուղղահայաց են, իսկ  
վերևի մասերը թեքված են դեպի ներս և հա-  
ջորդաբար առաջ են քաշված նախորդի համե-  
մատ: Այդ հնարավորություն է տվել ոչ միայն  
կրծատել ծածկի բարձրացման սլաքը և այդ-  
պիսով իշեցնել բարձրությունը, այլև պարզ  
միշոցներով գեղարվեստական նշանակալից  
էֆեկտ ստանալ: Վրանի կոմպոզիցիան, ան-  
շուշտ, կրում է հայկական ժողովրդական  
բնակարանների փայտե ծածկի՝ հազարաշե-  
նի ճարտարապետական ձևերի ազդեցությու-  
նը, որը կազմվում է իրար վրա դարսված  
վերևում փոքրացող ութանկյուններով կամ  
ուղղանկյուններով:

Ոչ պակաս հետաքրքրական են նաև գրա-  
տան պատերը: Պատերի մեջ ամենուրեք, բա-  
ցի դռներին մոտ մասերում, որմնախորշեր  
կան, որոնք բազմազան են իրենց ձևով, մե-  
ծությամբ և քանդակներով և դրա մեջ նույն-

պես արտացոլված է ժողովրդական բնակա-  
րանների ազդեցությունը:


Երդիկից բացի, շենքը արևելյան կողմից  
լուսավորվում է նաև դրսից նեղ, իսկ ներսից  
լայն մի լուսամուտով, որ լույս էր տալիս ոչ  
միայն առավոտյան ժամերին, այլ հնարավո-  
րություն էր տալիս ձեռագրեր կարդալ նույն-  
իսկ ամպամած օրերին: Հարավային կողմում  
գտնվող զուրը շրջանակված է ուղղանկյուն  
պորտալով, որի սյուները դասավորված են  
աստիճանաբար և վերջավորվում են սլաքա-  
ծե կամարներով:

Գրատան ներքնամասը մեծ տպավորու-  
թյուն է գործում ընդհանուր մասերի և նրանց  
ստորադասված մանրամասների ներդաշնակ  
համաձայնության շնորհիվ: Կոմպոզիցիայի  
ուսումնասիրությունը բացահայտեց ներք-  
նամասի հատակագծի և բարձրության շափե-  
րի հարաբերակցության փոխադարձ կապը:

Սանահնի գրատան արտաքին ձևերը պարզ  
են ու որոշ Շենքն ունի ուղղանկյուն ծավալ,  
որն ավարտվում է ութկողմանի թմբուկի վրա  
նստած հատած բուրգով:

Գրատունը չի պահպանել իր նախնական  
արտաքին տեսքը:

Ըստ երևութին ժամանակով առաջին փո-  
փոխություններից պետք է համարել արևել-



Նկար 8.—Սանամին: Գրատան և նրա նախարարի ընդլայնական կտրվածքը և Ս. Գրիգոր Եկեղեցու արևմտյան ճակատը:


յան ճակատին մեջտեղում դարակ ունեցող երկու կրոնշտեյների երեսան գալը (նկար 9): Այդ հաստատվում է ինչպես նրանց զարդերի բնույթով, որ տարրերվում է Հիմնական շենքի և մանավանդ նրա ներքնամասի զարդերից, այնպես էլ այն խզումով, որ կա ազ կրոնշտեյնի և հնանապատից մի մետր բարձրությամբ շենքի արեւելյան և հարավային ճակատները գրկող ոլորված գոտու միջև: Այդ կրոնշտեյնների նշանակությունը վերջնականացեած որոշված չէ: Դժվար թե նրանք միայն զարդարողական լրացում լինեն, այն էլ ուզ ժամանակի, քանի որ նրանք վճռական դեր չեն խաղում ճակատի ձևավորման մեջ: Հ. Ա. Օրբելու կարծեքով, որ նա մեզ հայտնել է 1948 թվականին Սանահնի մեր շափագրական գծագրերը նայելիս, այդ կրոնշտեյնները իրենց վրա պահելիս են եղել մի փոքրիկ հարթակ, որ հոկտորական ամբիոն է հանդիսացել: Ինչպես հայտնի է, ԺԱ զարում Սանահնի և Հաղպատի հոգևորականությունը կրոնական վեճերում ուժեղ ընդդիմագրություն է ցույց տվել կենտրոնական հոգևորականությանը: Ավելի շատ համախոններ գրավելու նպատակով, Սանահնում բանավեճեր էին կազմակերպվում, որին մասնակցում էին ոչ միայն Հրավիրվածները, այլև շրջակայքի բնակչու-

թյունը: Ունկնդիրները տեղավորվում էին գրատան արևելյան ճակատի առջև փովածքով, հրապարակում, իսկ հոնտորը խոսում էր ամբիոնից, ուր կարելի էր բարձրանալ շարժական աստիճանով:

Հաջորդ լրացումը եղել է հարավային ճակատին կից, ժամանակում կառուցված թաղակապ սրահը Հավանաբար այդ ժամանակին պետք է վերագրել նաև թիվի պատրաստումը շենքի շրջագծով մեկ:

Դատելով արձանագրություններից, Սանահնի գրատառնը մյուս շենքերի հետ միաժամանակ վերանորոգվել է 1652 և 1657 թվականներին, բայց թե ի՞նչ է արվել այդ ժամանակ հայտնի չէ: Գրատան վերանորոգման աշխատանքները կատարվել են նաև քսաներորդ դարի սկզբին և 30-ական թվականներին:

Գրատան արտաքին ձևերն ու զարդաքանդակները վկայում են, որ այդ շինությունը մեզ է հասել իր նախնական ճարտարապետական տեսքով: Դատելով հյուսիս-արևմերտյան անկյունում պահպանված ճակտոնապատի հենաքարից, նույնանման հենաքարեր եղել են շենքի բոլոր չորս անկյուններում: Դրա հարավորությունը հաստատվում է նաև շենքի կոմպոզիցիայով, գմբեթի ձևով և հիմ-



Նկար 9.—Սահմանին: Գրատան արևելյան ճակատի կրոնշտելները:

նական ծավալի նկատմամբ ունեցած նրա տեղադրությամբ:

Սածկի բարձրությունը՝ նշված է ոչ միայն շենքի անկյունում պահպանված քարի տեղադրությամբ, այլև անկյունների դեկորատիվ սյուներով (հարավ-արևմտյան սյան բարձրությունը՝ 3,85 մետր է, իսկ հյուսիս-արևմտյանը՝ 3,91 մ.): Քիվի պրոֆիլի ուղղությունը՝ հարավորություն է տալիս որոշել ճակտոնապատի բարձրությունը, հետեւարար և շենքի նախնական տեսքը:

Վերականգնման ճշտությունը՝ հաստատվում է նաև համաշափ կառուցվածքով, որ համանման է թե՛ արտաքին և թե՛ ներքին մասերի համար:


Արտաքին ճակատների հարաբերությունների կառուցման հիմքում դրված է շենքի լայնությունը:

Խնձորեսկ է ճակատի և կտրվածքի հարաբերությունից, շենքի հիմնական շափերը որոշվում են երկրաշափական հասարակ կառուցվածքով, որ խիստ կարևոր նշանակություն ունի շենքի նախագծման ու կառուցման ժամանակ:

Սանահնի գրատունը՝ միջնադարյան հայակաբարպետության եզակի ստեղծագործություն է հանդիսանում: Նմանօրինակ կոմպոզիցիա ունեցող մի այլ շենք մեզ հայտնի չէ: Անկասկած է, որ Սահմանի գրատան կոմպոզիցիոն առանձնահատկությունները որոշակի գեր են խաղացել Հայաստանի քաղաքացիական շինությունների գեղարվեստական ձևերը ստեղծելու գործում: Կառուցողական առանձնահատկություններով՝ նրան մոտ մի շենք պահպանվել է Գնդեվանքում, նրա հարավ-արևմտյան անկյունում: Այդ մի քառակուսի շենք է, որ ծածկված է անկյունային սյուների վրա հենվող կամարներով: Շենքի կառուցողական առանձնահատկությունները՝ հիմք են տվել Հ. Եղիազարյանին՝ Սահմանի օրինակի վրա հենվելով այն ևս գրատուն համարել<sup>25</sup>,

25 Հ. Եղիազարյան, «Ազիզեկովի շրջանի կուտուրայի հուշարձանները», էջ 99.

(Շարունակելի)



ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏէՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ  
(Սաղկարար)

ԲԱԶՄԱՎԵՊ\*

Զր ॥ ի թուրքովենէ փախուցեալ պօլսեցի անփոխանորդ Յարութիւն անուն մէ կայր մեզ խցակից, մինչ լուսահոգի Դանիէլ սրբազնն էր թայազիդ, որ այն տղան գնաց Ղաղարապատն, յարեցաւ փաշայիցն եկեալ թաթարին և արանց նորա և փախեաւ գնաց Ուշիլիսայն, նրա պատճառամ Դաւիթ սրբազնն իր Ազամ վարդապետին հրաման արաւ թէ՝ զարկիր զարկիր վնդին որ 2 անգամ շափալախ տուին ին, թէ է՛ր չի յիմացում տուիր մեզ. նա ամէն օր ինքնազուխ շրջամ էր. ևս ի՞նչ զիտէի նրա փախչին. ասացի, որ զոր տեղն էր մեղ վայելելն այն շափալախին.

Արի տես, ո՞վ սիրելի, թէ աւագ սարկաւագութեան իմոյ ժամանակին օրպիսի կացութեան էի. լուսահոգի կենդանի նահատակ Դանիէլ սրբազն կաթողիկոսն, մինչ հրամանաւ ուրար ձգեց ինձ, յանձնեաց Պառափ տպայ անուանեալ Ցովհաննէս եպիսկոպոսին, իրը որ գնաց նուրիակ. ևս մնացի կարօս յամէն իրաց. ոչ օրինաւոր պեղաշոր, ոչ խալի, ոչ քեշայ, և ոչ կարպետ, ոչ հին և ոչ նորն ոչ ունէի. մին հատ զօշակ կայր 2 տեղ մեծ և փոքր ժակ և այն ժակ տեղի վերայ էի նստում, որ եկողքն չի տեսնուն, որ ինձ իմ արհեստին դեօրայ<sup>20</sup> ամօթ չի լինի.

Բայց սիրեր լուսահոգի Դանիէլ սրբազնն ինձ նուաստիս, ինչ տեսակ թողթ թէ մեծ, թէ փոքր, թէ մին հատ, թէ 10 հատ, որժամ տանիէ ծաղկեալ թուղթն մատուցանէի, շնորհէր ինձ մին հատ Պօլսոյ ոսկի, որ էր 4 մ. զն<sup>21</sup>:

Ցաւուր միում, լուսահոգի տեղապահ Բարսեղ արհին ոչ եթող տալ ոսկին, այլ ասաց՝ հրամայեա մին կապայ զգեցցեն որ և ըլտախեր Ցովհաննէս վարդապետի

\* Եարունակված «Եղմիածին» ամսագրի 1963 թվականի Հ ժթ.-ից:

<sup>20</sup> Համաձայն: —<sup>21</sup> 4000 դրամ:

Հնդկաց հրամի կիսաստառ հիմտաշ կապալն հագցրին և նրանով կարեցին ոսկի տաէն, բայց երբեմնապէս ժամկարար կու շահէր մեզ:

|| Ցաւուր միում, ի ձմեռային եղանակի, միայն գտի նախկին հոգեսր ծնողին իմոյ, Տեսան Դանիէլի լուսարեան կաթողիկոսին ամենայն հայոց. ինդիր արարի վասն պակասութեան սփոռոցի թէ՝ շունիմ բնաւ, ո՛չ հին և ո՛չ նոր. այնմ ժամանակին կարգեալ էին շորապահն. Ծոս անուանեալ Մարտիրոս եպիսկոպոսն, կոչեաց բազցրութեամբ թէ՝ զնա, զնա մեր ինեղն Սահակին քշայ, խալի կամ կարպետ, որի որ կու գտանես, տոր. նա սկսաւ րարձրածայն ազաղակաւ ասել՝ եօպտուր, ներտաս վերեիմ. լուսահոգին սասց՝ զնա մի բան գտիր. տուր, թող զօշակ լինի. այն ազաղակին վերայ եկն ենաս տեղապահ Բարսեղ եպիսկոպոսն սաստիկ բարկութեամբ ինձ վերայ բարկացաւ աւել պակաս ասելով թէ՝ զու ինչպէս համարձակեցար սրբազնիցն բան ինդրեցիր, է՛ր չէիր ինձ ասում, քանի՛ քանիցս ի ասել և նասցի անպատասխան, վասն որոյ ճարհանատեալ սրբազնիցն իննդրեցի, յիտոյ տարաւ ինձ շորատունն, որ էր ներսի տպարանի ներսնատնիրն, քանի մի հատ մթէ<sup>22</sup>, եօրդան<sup>23</sup>, զօշակ<sup>24</sup> կային երդիկի տակին վեր ածած, որ ձինն հալեալ ի վերայ այն շորերին սառուցեալ էր. մին զօշակ տուաւ շալակս, ճորջալու տարայ փոնատան կտուրն փոնցի, հաղիւ թէ 3 շարաթին միջումն չորացաւ. այսպիսի նեղութեամբս օրի 7 թուղթ հաշիալու ծաղիկ էի անում, որ ժաղիկն՝ 7 գրադրաց չէր յագեցուցանում:

Մինչ կամէր գալ ի վերայ նրեանու զորքն ուսաց, որոց կուսակալն էր Կուտամիչն, այնմ ժամանակին հիւանդ գոլով, լուսաւորեալ հոգի Դանիէլ սրբազնն զնաց երեան, ըստ հրամանի Ուսէին խան սրբարին և եղրու-

<sup>22</sup> Վերմակ առանց երեսին: —<sup>23</sup> Անկողին: —<sup>24</sup> Ներքնակ:

նորին՝ Աթաշի Հասան իսանին. և ի պահարանն Սրբոյ Աթոռոյն պահէին զգանձ երեւելու և միաբանիցն ես և ևս կայի ըստասու Նորին, որում ժամանակի լուսարարն էր Եղիազարեան Պօղոս նպիսկոպոսն ի վարդապետութեան իրում. այնմ միջոցի մտախոհ եղէ ես թէ մնամ ի Սուրբ Աթոռոյն, մի գուցէ զօրք պարսիցն նեղացուցանեն միաբանութեան վասն պահարանացն և ինձ յատնեցնեն. և ես երկիւրի տանշանացն շլինի՛ թէ՝ չ կարողանամ տոկալ, վասն որոյ կայի ի տարակուտի, թէ երթամ բերդն, վասն սաստիկ պատերազմին եմ կրէի երկիւդ. և մինչ այս վարանման մէջն էի, կոչեաց զիս բարձր սրբազն ներսէս արքեպիսկոպոսն և ասաց թէ՝ արի յանձն ու և զնա Երեան, ընդ տիրացու Յարութիւնին սպասարքան Պանիէլ սրբազնին. թէ ողջութեամբ զուրու ելանէի, ասաց, ի բերդէն ընդ սրբազնին, ոտքց սկսեալ մինչեւ ցցուփտ մին ձեռ լւս իսան շոր կ'անեմ վարդապետի լայեազ. Դեռ ես կարում է նաւ թէպէտ հանդերձն ոչ ետ, որ խոստացեալ էր, սակայն լաւութիւն շատ արար մեզ ժամանակ առ ժամանակ. ևս ոչ վասն հանդերձն, որ խոստացաւ, այլ վասն կրկին առնելոյ զօրհնութիւն հոգեոր ֆեոդին իմոյ ցանկացայ զնալ և զնացի ամենայն հնազանութեամբ ըստ որում սրբազն ներսէսն զանգանեաց թէ՝ յառաջ Քրդին կամհցայ լիւ, յանձն չառ և ապա յնտո զարձաւ, վասն որոյ կամիմ թեզ յղել.. և ես յանձնառու եղէ և զնացի. ի զնալն իմ լունէի բնաւ զիքը մի որ ի պարապ ժամու բնիւնում և ոչ ունէի զնակ մի որ խարճէի, վասն որոյ ինդիր արարի և ես կատարեաց այսպէս:

|| Ե գալի Կոտոռվիշին ի վերայ Երեւանու, մինչ որ կամէի զնալ, ասացի թէ՝ Խնդրեցի նարեկ կամ Աստուածաշունչ, վասն որոյ իւր Աստուածաշունչն խախտեալ ի կազմէն շնորհնաց ինձ և մին թուման փող տուալ խարճէլ. այնմ ժամանակ մին թուման էր 15 զուրուշ. և մինչ էաք մեր ի բերդն ի տան հաճի նարուզալին, նստէր Պանիէլ սրբազն հանգուցեալ կաթողիկոսն և մինչ վախճանեցաւ, սկսան կարդ թաղմանն կատարել Երեկոյեանն սահաթի 3-ին յանկարծ անկաւ զօնպարայ<sup>25</sup> թօփի զիւլլայն պարսպի մէջն մերձ դագաղին և մեր ամեներեանս թողեալ փախեաբ և մինչ իրը ամպ զուու զիւլլայն անվնաս. զարձաւ ժողովն ժողովնեաց ի ամսան կարգն կատարել. օժեցին ի մէջ զուույ<sup>26</sup> և ամէն կարգն լրացրին և չորս կուսէն մերդ մոմով, հիլ, մեխակ, զարչին, քեաֆուրի և զանազան անուշանուութեամբ մուշամպայ<sup>27</sup> արարին, պատեցին ամբացուցին. և զարձեալ եղին սարդարի մազազայն՝ ուր որ Սուրբ Աթոռոյ պարանեն կայր և մեզ անտի հանեալ տարան միաբանութեան մէջն, որք էին շարրաթիանումն: Յաւոր միում ես և Ահարօն վարդապետն Երեկոյին՝ ննջան ժամանակին, առաջի գիշերավառ կանթեղին Սաղմոս էինք ասում չերմեռանդութեամբ աղօթելով. զրդմամբ շարին՝ մեր տանհաց որմի թանձութեան տեղն անկաւ թնդանօթի վանեալ զիւլլայն. իրը թէ մարդ պտտէր կամ զլորէր, գժաւար, փախեալ ես և աստուածապաշտ Ցովսէփ եփիսկոպոսն՝ որ սա էր զիքը այնմ ժամանակին, միմեանց վերայ անկար. և Պիլիկ Ցովսէփին իրըն հայր և մայր մեզ վերայ անկաւ առ ի

պահապանել ասելով թէ՝ որդիք, եթէ վնաս պատահէ, թոր ինձ պատահէ և մեր ևս օգնութեամբ սուրբ աղօթիցն և ողորմութեամբ Տեառն Աստծոյ ամենակալին զերծար այնմ վատանգն, վասն որոյ ասեմ՝ Աստուած ողորմի Պիլիկ Ցովսէփի հոգւոյն, յաղագս այսմ լաւութեան Պիլիկ Ցովսէփին ասում եմ՝ Աստուած ողորմի նրա հոգւոյն, որ մեր բարին կամեցաւ և արար եւ մինչ խարդախութիւն անկաւ ի մէջ զօրացն ուսաց, որ մտալի էր զօրք նոցա ի մէջ բերդին և մինչ յետ շրգան վերջին եկողեն, շատ կոտորածք արարին ուսաց զօրացն. և ապա՞ հազարամիթին գտան և ելեալ ի բերդէն բերեալ ամփոփեցին հարաւային կողմն ի ներքոյ զանգակատան լուսաւորեալ հոգի Դանիէլ սրբազնին, որոյ հոգին Տէրն լուսաւորեացէ և մեզ նրա կենդանի սուրբ աղօթիւթն այց արասցէ յարբայութեան իրում, ամէն:

|| Յաւոր միում, Թուրդ Ցովշաննէս եպիսկոպոսն 11ա սկսաւ ասել ցիս թէ՝ այդ Աստուածաշնչի կէսն ինձ կու հասնի, կամ էլս զինն տուր ևս ձեռք վեր առնեմ, կամ ևս տամ՝ զու ձեռք վեր առ, ասացի թէ՝ հզրայր, նա ինձ ա րաշխալ. և զնա ասել ա թէ՝ յորժամանակ բերդիցըն զուրու զաս, բեր ինձ մօտ, աւս տամ քեզ. որ թէ այսպէս ես կամենում, զնամ հարցումն անեմ ներսէս հայր սրբազնին, թէ կամենայ տամ քեզ զգինն, ապա թէ՝ ձեռք վեր առաւ յինէն:

Նախ քան զգալն ծերունազարդ սրբազն ս ծեկլոյն Տեառն Եփրեմի, ներսէս սրբազնն տեղակալ զուլով, յանձնեան ինձ 300 թուղթ որ ծաղկեմ. ժամանակն էր ձմեռն, սաստիկ ցուրտ. Խցերումն ամէն տեղ ոչ գոյր րուխարի. և ես տաթեսացի Գոռդ եպիսկոպոսի խցումն էի նստում, ըստ որում մեր առաջին խուցն էր այն. վասն սաստիկ ցրտոյն ոչ կարէի ժուժէլ և աշխատել զեղորայքս սառում էր. ըստ որում էր շրով զանգած զամխազուր և այն. փոնատան կլզունի կրակն էի բերում, որ համ ես տաքանամ, համ զեղորայքն տաքացնեմ. մինչ որ զալամն թաթախում էի որ բանեմ, սառում էր և սնենէի առաստաղն 2 թիզ աելի պատառեալ էր՝ հողն վրաս թափում էր. Խնդրեցի որ շինել տայ, ոչ լսեց աղաշանացս. վասն որոյ Կոնդակի հին թղթերով՝ շրշտով փակցրի գժուարութեամբ, որ հողն չի թափի փրէս. շատ որ թափն էր թղթի վրայ ու իրըն տօպրակ ծանրացեալ էր, յաւոր միում, զաղկեանին վերայ նստած տեղու՝ պատուցաւ թուղթն և հողն թափեաց վրաս:

Փանձարայն փոքր լինելոյն, մութն էր լինում. զուռն թէ բաց էի թողում, ծնկներս էր սառում, որոյ պտուզն է այս, որ վայեկիմ ծնկնացաւերս զանազան, խնդրեցի որ լայնացնել տայ, ոչ լսեց, պատճառարանելով թէ՝ համ խցին վնաս է, համ վարդապետքն ես կսկսեն լայնացնել, կը խախտի խցերն, վասն որոյ ոչ յանձն չառ. յետոյ խնդրեցի որ բարձր իշունուկ շինել տայ, փանճարայի առաջի զնեմ զաղկեանի տակն որ իրըն ստօլ<sup>28</sup> լինի, որ այնմ ժամանակին ոչ գոյր ստօլ. ըստ որում չի սովորութիւն. և մին մաշակարի աթոռ խնդրեցի որ նստեմ բարձր ու շինեմ. նրա պատասխանն էլ տուալ թէ՝ տես հալայ, միտքն որտեղ աման զալիս.

25 Հրալից գունդ—26 Տուփ, զագաղ—27 Մոմլաթ:

28 Սնեղան:

Հիմքուց ցանկանում է, որ աթոռի վրայ նստի. այսպէս սաստիկ բարկութեամբ՝ է՛լ զուրս ասաց, վասն որոյ թողի մնալ մինչև ցգարումն, որ օրերն տաքանայ, ապա շինեմ:

|| Սին ողորմութեամբն Աստուծոյ բացաւ դուռն ողորմութեան և օրերն սկսան բաղրանալ. զուռն բացի սենեկիս, նստայ զաղկանին վրայ որ բանեմ, յատը միում եկան առ իս լուսանոցի աղաւաքարոյ Սիմէօն Տէր-սոսակեան, ասաց թէ՝ ինդրում եմ շնչանաս, ներսէն հայր սրբազնն յդեաց ինձ որ թղթերն տաս տանեմ, առում էր թէ՝ էլ նրա արած ժաղկին ինձ չէ հարկաւոր, ասաւ և ինքն էլ չի զայ երեսս, վասն որոյ շատ և շատ վրդովեցայ և ոչ ետո որ տարցէ. բայց նա սախակէր թէ՝ ինձ պատուէր ատուել, ես ինչպէս անեմ, եղացր չան. մեր օրնեալ ժերունի Ստեփանոս եպիսկոպոսին յաւտնեցի և խնդրեցի, որ նա զայ ինձ համար իրիքայ անէ և նրա բարկութիւնն զիշուցանէ. չնորհակալ եմ, եկել թէ՝ բայց ոչինչ չի կարաց խօսի:

Եւ մինչ մտի ներսն, տեսի որ Աստուծածատուր եպիսկոպոսն մօտն նստած էր. Ներսէս եպիսկոպոսն գիր էր գրում, բնաւ երեսին չի նայեց և այն Խէր-սօյլամազ<sup>29</sup> արհին՝ որ մօտն կայր նստած, նա ասաց. Սիմէօն, բրր տիրացու Սահակի ժաղկեալ թումբին թամաշայ անեմ. երր թօխայի<sup>30</sup> եղ նրա առաջին, բացաւ և ետք որ խաղերն բաշեալ եմ և քանի մին հատն ի կաթուղիկէն և հաշիայիր քաղուածք եմ արարել. համայ վերացրաւ ձայն թէ՝ այ հայ, հենց գիտեմ թէ օրինաւոր ժաղկարար զրագիր ունես ներսէս հայր, որ այս է սրա մարիֆաթին, Է՞ր չէիր գրում ինձ, Թօխաթ մին լաւ ծաղկարար կայր, որ օրն 1000 հատ կարէր ժաղկել ու գրել. այս շափազանց խօսակցութեան վրայ, իսկուն գրին վայր դրաւ, իրր առիծ մռնշաց, թէկ համեստութեամբ ասաց՝ զնա, այսուհետեւ այնքան քար ծգիր, որ կոներդ երկարի էլ այսուհետու քո արած ժաղկին ինձ չէ պէտք. յետոյ ժեր Ստեփանոս եպիսկոպոսն պարկետաւթեամբ փերնիքն համար համար համարի համար ապահովութեամբ համակարգաւ Աստուծածատուր եպիսկոպոսին թէ՝ ինչպէս գինը է. վերին գրեալու յայտնեաց թէ՝ պատճանն զինը է. ապա գրեալու հայտնեաց թէ՝ խուս մութն է, ասէ ցուրտ է, առաստաղին հող է թափան առում ա. այսպսն պատճաներ եւ տալիս. թող շինած մի քանի հատն շխոս բերէր ինձ մօտ որ ես տեսնէի, քան թէ այսպէս պատճաներ է տալիս. և ես լուս կայի անդ լալով. յետոյ բարեհոգին այն ասաց, որովհետու պատճանն մինութիւնն է, մին լրս տեղ տոր զնայ տասն օր՝ և ոչ աւելի աշխատի. թէ մարիֆաթն ցոյց տուաւ, այն է որ ներսն իմ խաթերն. ապա թէ ոչ ցոյց տայ կը շնորհն, թող այնմ ժամանակին զնայ քար ձգի, կաներն երկարացնի:

|| Որ ժամ է նա ինքն տէրն մեր հոգմոր որում Տէր ներեսցէ և տացէ կեանս խաղաղականս բարօրութեամբ հանդերձ:

Յետոյ ներսէս եպիսկոպոսն ասաց. Սիմէօն, զնա Գրիգոր վարդապետին ասա, Սիմէօն սրբազնի այն կողմի շաթիրանէն բանայ, տայ Սահակին, որ զնայ անդ նստի 10 օրն օր. թէ մարիֆաթ ցոյց կու տայ՝ լաւ է, ապա թէ ոչ, չէ հարկաւոր. վասն որոյ մինչ զնացի

նստայ անդ՝ օրն 10 հատ հաշիալու ժաղկեցի 100 հատ. և ի լրանալ հարիւրին եղեալ ի մէջ բողային տարեալ մատուցի նորին բարձր սրբազնութեան, այնմ ժամանակին մինչև մատուցի, նստէր նա ի թանապի անուանեալ տեղին՝ ընդ Աստուծածատուր արհույն. և մինչ ետք մտանեն իմ, զրօշայն եղի առաջի նորին հայրապետութեան. իսկոյն զական վերցրաւ, բաց արաւ բօղային և ետք զանազան ժաղկեալ թուղթն. և սկսաւ սրտի ուրախութենէն շաղ տալ չոկ թուղթն ժաղկեալ ասելով թէ՝ Աստուծածատուր հայր սուրբ, նոր իմացայ որ Սահակն մեղ յաղթեաց. յետոյ ինձ հրամայեաց ներսէս հայր սրբազնն թէ՝ ժողովիր և տար զիր Աստուծածատուր հօր առաջն և լորիր թալապ՝ արա. և ժողովեցի տարեալ մատուցի նմա. և նա՝ երեսն թերելով ենան ի ծոցոյ իւրմէ զմին հատ Պօլիս ոսկի որ 4 Ռ. զն. էր զնում, տուաւ ինձ, բեր, ասաց, տեսնեմ. երր տեսաւ ներսէս եպիսկոպոսն ասաց՝ շնորհակալ եմ մեր ինձ տիրացուին շահեցիր:

Նոյն սահմանի ներս մտաւ լուսահոգի տեղապահ թարսեկ եպիսկոպոսն. և նրան ևս ձայնեաց ասելով՝ տես տեղապահ հայր, տիրացու Սահակն ինչպէս լաւ ծաղկել է այս 10-ըն աւոր միջին՝ 100 թուղթն. երր նստաւ, նա ասաց ինձ տար զիր առաջին և նիստ թալապ արա և մինչ եղի նրա առաջին զաղկեալ թուղթն, հրամայեաց ինձ թէ՝ զնա զանաձապահ Գրիգոր վարդապետին կանչիր, և մինչ դուքս ելի, կրկին ձայն նստոն ինձ թէ՝ արի, երր մտայ ներս տեղապահն ասաց. Աստուծածատուր հայր, ևս ինձ վերայ քիսա լին պահում, թէ ունիս Պօլսոյ ոսկի 2 հատ տուր ինձ, ասաց և նա տուաւ նմա 2 հատ պօլս և մինչ ընկալաւ ևս ինձ պարզէ որ եղի 3 պօլսն, 12 Ռ. զն. նոյն օրն. Ներսէս սրբազնն նոցա ներկայութեան ասաց. բարով սրբազնն զայ Սուրբ Աթոռու, գո ծաղկեալ թղթոց վերայ որ գրութիւն առնեմք. նոյն ժամանակին թեղ մին լու ձեռք եպիսկոպոսի լայեազ<sup>31</sup> շոր կու կարեմ: Դեռ կարում էր բայց ասաց, օրնենուու մասին ևս լին խանոնիր. թէկ ասաց, բայց ինքն հոգացաւ և օրնենի ետ եպիսկոպոսի 1810, 12 10-ին:

|| 1810 զնկամերերի 8, ուրբաթ երեկոյին մինչ ծաղկեալ թուղթն տարայ յեղայիցի ներսէս հայր սրբազնին կամ կապուան առն նախ քան զապուան օրն ասի քան զապատարապի արի գիշերով, ասաւ ինձ թէ՝ ինչ ևս հրամայում, և մինչ ներկայացայ, տեսի որ գիր էր գրում, ոչինչ բան չի կարողացաւ ասել. երբորդին բաշեցին, պատարագի ժամն տուին. ապա թէ ասաց՝ զնա, պատարագի որ դուքս գայ, նախ քան զնաց ուստին եկ առ իս. զնացի պատարագին և որպէս պատուիրեաց այնպէս արարի:

Զնին սուրբ պատարագին զնացի ներկայացայ, տեսի որ զնի ևս գիր էր գրում անդադար. երր լուսահոգի տեղապահ Բարսեղ արհին ներս մտաւ, իսկոյն կանգնեաց տեղուան և մտացաւ տեղապահի ականցումն բան խօսեաց և զնաց ժերունի սրբազնի մօտն. յետոյ նստաւ տեղապահն և կոչեաց ինձ բաղդրութեամբ՝ տիրացու Սահակ, արի մօտս նիստ, բան եմ առում և ես ամօթյու և երկիրդ նորա, ոչ կամեցայ նստել. կրկին

<sup>29</sup> Բարի լիոսոող, շարախոսւ:—<sup>30</sup> Մրար, ժանրոց:

Հրամայեաց՝ նի՞սու. համեցայ որ հնոի նստեմ, մօտ մօտ արի, ասաց, մինչև տարաւ ժնկէ-ծունկ նստացրաւ, բայց յերկիւզ էի կրում, թէ ի՞նչ բանի համար է, երբ բացաւ թւրանն թէ՝ մի՞տդ է որ մին զանդ<sup>32</sup> տարաք Անդրէս եպիսկոպոսին որ գայ քեզ համար իրիմաց<sup>33</sup> անէ որ օրհնել տամ, ասացի՝ հրամայել ես. մի՞տդ է ասաց, որ համ զանդ զրել էր տօլապն, եկաւ մօտս փոխանակ իրիմայ անելու թէ՝ հրաման տուր, այն խեղճն էլ օրհնուի բացառու Ցունանին հետ, ասաց՝ եկել եմ այս ինչ բանի համար խնդիր անելու, բայց ես խնդրում եմ թէ՝ որ նրան օրհնել ես տումը, ես էլ վանքում չեմ մնալ. մի՞տդ է այս բանք. զուլու խոնարհուցեալ ասացի՝ միտս է, զարձեալ ասաց՝ մի՞տդ է որ զինի յանդիմանելոյս խոստացայ քեզ թէ՝ բարով որ Երեմ սրբազնն զայ, նրան օրհնի կու տամ. զարձեալ խոնարհուցի գուլուս և ասացի՝ միտս է. ամէն մին բանն հարցանելոս ժիմազում էր լուսահողին այն. յետոյ ասաց՝ զնա պատրաստիք, տե՛ս, որ Երեկոյն ժամն տալուցն յառաջ քեզ և տիրացու Ցարութիւնին աշ տալ կու տամ, որ վաղուեան օրն սրբազնն ձևնարդը զբեզ. բայց զգուշ լիր, ասաց, ընկերքով լի յիմանան. թէ կամիս ծնողացդ յիմաց արա, զան, ասաց. սուրբ աշն համրուրեցի, ելայ և մտի փոքր խուցն ներսի, տեսի ներսէ եպիսկոպոսին և պատմեցի թէ՝ տեղապահն այսպէս բան ասաց և նա պատասխանեալ ասաց թէ՝ համար էի կանչել քեզ. զնա, որ հրամայեալ է, այնպէս արա. և նրա սուրբ աշն ևս համրուրեալ, ելի, եկի սենեակն իմ, զսի քանաքեցի Ապօվեան Աւետիսն և նոտու նմա զիր առ մահաեսի Տէր Գրիգոր հայրն իմ թէ՝ այսպէս է սրբազն սինօթի կամքն. ժածուկ եկ. և նա՝ մինչ ճրագ վառցին ստանում է զիրն, զնում է Բարսեղ աղայիցն օգուութիւն է ուղում ձիու և այլն, և նա իր մեծ ֆանառն<sup>34</sup> տալիս է որ զիշերն հաւախօսին ձի են հեծնում մինչև հանդուցեներն ֆանառով են զալիս ընդ մօրս և եղրաց:

|| ի 1810 Փրկչին ետ ինձ հազար եռ (1500) թուղթ որ ծաղկեցի մինչև ցգալին ծերունոյն. և ի նոյն ամի յուկիս կիսոյն մինչև ցօռուսոսի ելն, զիտութեամբ Գրիգոր վարդապետ գանձապահին, կզին տուաւ ինձ որ ինքն էր Երևան, ազատ մնամ, բայց ոչ մնացի ազատ, բայց որում նոյն զանձապահն ունէր մին սպիտակ մազաղը ելփուզայ. ետ ինձ՝ թէ ծաղկեցո. և այս էր շատ գծուար, ընդ որում ծաղեալ էր. ծաղկեցի ըստ իմ կարեացն և շատ հաւանեցին տեսողքն, որովհետև ոչ հաւատայր Անդրէս եպիսկոպոսն. յաւուր միում զինի աւարտելոյն ինոյ ելփուզայն, կունեց զանձապահ Գրկդոր վարդապետն Անդրէս եպիսկոպոսին փորձեալ վասն մեր. և մինչ եկն և նստաւ ասաց՝ Պօլույ ինձ համար մին լաւ ելփուզայ են ուղարկել, Երեմ, տե՛ս. և մինչ Երբին, տեսաւ, սկսաւ զովել թէ՝ շատ օրինաւոր վարպետի շինած բան է, բայց Գրիգոր և ննովքեան և թօխաթից հանդուցեալ եպիսկոպոսունքն ի միտսին ասացին՝ լա չէ և նա պնդըր թէ՝ դուք ի՞նչ կու հասկանայթ սորանից, իմ արհեստն ա, ես լաւ կու հասկանամ բան ճեզ. յետոյ պնդեցին բանն թէ՝ այդ Սահակի շինածն է. յորժամ ստիպեցին, նա ոչ հաւատայր

<sup>32</sup> Շաբար. — <sup>33</sup> Խոնդիրք. — <sup>34</sup> Լապտեր:

թէ՝ ևս եմ շինեալ. երբ ստուգեցին, փոքր մնաց որ ղայֆայի թասն վեր ձգի, ասելով՝ զա ի՞նչ զիտէ որ այդպէս բան շինէ. յորժամ ստուգեցին, նա զնաց տրամութեամբ:

Այդ միջոցին տեղապահն այն, խոստացեալ էր որ Գրիգոր եպիսկոպոսն նրա կողմանէ պարտ էր տալ ինձ պարզե, մին շափայ հնդկաց զեղին մահրամա<sup>35</sup>. այնքան պահնեաց, մինչև զերծայ ելփուզայն և ապա 2 կապոյտ մահրամա նրա հետ ինձ պարզէ տուաւ, և այն միջոցին որ զնում էի ներսն ծաղիկ անելու ոչ քեշար, ոչ խալիչայ, ոչ կարպետ, ոչ հին և ոչ նորն շունէի և 2 երեսն պատռեալ զօշակ մի ունէի, ասացի. ամէն օր տանում էի ներսն ձգում էի տակս, որ բանում էի և ներսէն բերում էի տակս էի ձգում զիշերն. մին զարարացցի Թուանը թիւ Բարայ անուն Խորավէլ կայր, թիրդութիւն<sup>36</sup> զիտէր. նրա տակս Խորասանի խալիչայ էր ձգու Գրիգոր վարդապետն. և նա նստում էր Սիմէն սրբազնի Վեհաբանուուն և Գրիգոր վարդապետ գանձապահն միջտ զալիս էր մօտս վասն Կլփուզայի ծաղկելոյն, մինչ պատմեցի իմ աշխատանքն և լաւ վասն անբաղդութեան ինոյ, ապա թէ մին հին կարպետ տուաւ որ 2-3 տեղ մեծ մեծ ծակ լինելոյն || ծակ տեղիքն 13ք տակս էի ձգում որ եկողաց մօտս ամօթ չի կրեմ. այս նեղութեամբն մնացի անօգնական մինչև ի զալն ծերունազարդ օծելոյն Աստուծոյ. ապա թէ՝ փոխեաց և այն ի 1818. մինչ վերապարձաք զինի մեծ պատերազմին ի Թիֆլիզու, չոնէր մեր լաւ եղրայր եպիսկոպոսն կարպետ տակս ձգելու, վասն որոյ ընծայեցի, որ առաւել ևս լաւ հաւատարիմ եղրայրութիւն անէ. այն է նրա եղրայրութիւնն որպէս տեսանում էք և այլն:

Ի 1812 թուղչ հոկտեմբերի 12-ին մասնաւոր վարդապետութիւնն տուաւ մեզ սրբազնն: Բայց զինի երբորդ բառապահ աղայիցն օգուութիւն է ուղում ձիու և այլն, և նա իր մեծ ֆանառն<sup>37</sup> տալիս է որ զիշերն հաւախօսին ձի են հեծնում մինչև հանդուցեներն ֆանառով են զալիս ընդ մօրս և եղրաց:

|| ի 1814 թուղչ հոկտեմբերի 12-ին մասնաւոր վարդապետութիւնն տուաւ մեզ սրբազնն: Բայց զինի երբորդ բառապահ աղայիցն օգուութիւն է ուղում ձիու և այլն ամէն անուն աղայիցն աղայիցն կարպետի լինեմ, որ եղէ. և ձի հեծեալ ժամանակին ևս էի զաւագանակի յօրէ անտի մինչև ցգալն զինի Պատրիքիշի մեծ պատերազմին որ եկն ի Թիֆլիզու ի Սուրբ Աթոռու ձիու վրայ զաւագանակիր, և խալակիր և եկեղեցուն, թէ ի ճանապարհին ուր որ զնայր, զնայի և սու ամենայն հնազանութեամբ ժառայելով ըստ ախորժանացն նորին Սրբազն Վեհափառ Օծութեան. ուրախանայր ինքն և ուրախ առնէր զիս յամենայն սրտէ հանապագօր:

Ի 1814 թուղչ եկն է սենեակն իմ Ապավագ Միրզայ շահզարայի Միրզայ Արդլանակապ անուն բաշ պատկերանանն որ 1810 թուղչ ևս էր եկեալ սարկաւագութեամբն ժամանակին ընդ Եահզադային, ու մնաց 8 օր մեր խցումն, որովհետև ժանօթ էր մեզ յառաջազոյն. մինչ եկն տեսի և ուրախութեամբ ընկալայ. նստաւ ուրախութեամբ և սպաց՝ զնա սրբազն խալիֆին ասաշահայի այս ինչ պատկերահանն եկեալ է և կամի որ տեսութիւնն անի. ըշտապան էր որ զնացի տեսի շահապահն այս ինչ պատկերահանն անի. ըշտապան էր որ տեսի ու շուտով զնայ, բայց բախտն իմ բաննց, որ զնացի տեսի շահապահն այս ինչ պատկերահանն անի. ըշտապան էր որ տեսի ու շուտով զնայ:

<sup>35</sup> Թաշինակ: — <sup>36</sup> Դերձակություն:

զանեն դեռ քնած էր. եկի պատմեցի, մնաց մինչև ցերեկոյն ժամն. սրբազնն ուղիղ օրն շատ էր աշխատել, յետոյ վեր կացաւ ի քնոյն:

Յետոյ խնդրեցի որ ինձ համար սահմալը զ՞ե եփի. շատ հեշտութեամբ եփեաց. յետոյ թոհմաթ արարի՝ թէ թեղանից լաշիւրդ ուսկցի, է՛ր չի լոկցիր. տեսի որ մին կտոր թար հանեց իր չիքէն և ասաց. այս քարս եռոր եմ առել և բաշաշխի լաշիւրդն սրանէ կու շինեն. ևս մինչև հիմայ չէի գիտում շինեն. նոր եմ սովորել և թեղ կու սովորցնեմ ասաց. միայն թէ գնա տես խալիթային թէ՝ կարելի՞ է գնամ տեսնեմ. գնացի որ դեռ ևս ի բուն կայր, վասն որոյ մնաց թուրք վարպետն մեզ մօտ այն գիշերն:

14ա ॥ Յետոյ ցոյց տուի ինձ մօտ եղեալն՝ զսեմափայլ մեր սրբազնն ևս էր թերել տուել մեզ համար, յորժամ հաես, ասաց՝ ինձ ոսկոյ մատանի քարն է, քոն արծաթ մատանին է և տեսակէն էլ մի և նոյն բաղաժիփ լաշիւրդ կու լինի. զնա, ասաց, երկաթեայ հաւանկ<sup>37</sup> թիր, թերի, դրաւ մէջն, զարդեց, լցոյց թէօմուրի կրակին մէջն ֆնդղալափ<sup>38</sup>. երբ լաւ կարմրեց, հանեց մաշալով<sup>40</sup> ձկցից թունդ քացախի մէջն և ապա լցրաւ հաւանն, լաւ նարին արավ<sup>41</sup>. յետոյ ոսմաղի քար<sup>42</sup> ուզեց ներքին և վերին գեղ սրելու. շունէի սմաղի քարն. մառմառն կայր վերին և ներքինն. եթէ սմաղի լիներ, ասաց, շատ ազնիւ լաշիւրդ դուրս կու գայր:

Ապա սկսաւ ջովկ լուսել և ի լուսելն ազօթիւք լուսէր և ինձ պատուէր էր տալիս թէ՝ Սահակ, նէշայ քի ման աղարամ, սանդա կերար ուզ կիսն բէլայ ազարսան համ, համաղդ քի գինայ վուրասան, էլայ բիլասան քի հէլ զամ եօխտուր. ինչ և ինչէ, ինքն մին սհաթի միշին այնպէս հարեց, որ իրրէ կարագ եղն. ապա թէ ասաց՝ շօխտր սանն քամտնի. ակեար սանդալուզ եազն քի ուժասայ, լաշիւրդ հէլ օմաս յետոյ լցրաւ սանդալուզի ինզն, սկսաւ ջովկ [միացնել հարելով] և վրածգելով շինեաց մին ընկուզոյ չափ իրրէ մի գունդ մոմ. ապա՝ սաննանման գոլ ջրումն սկսաւ ճնուել, տրորել և ի տրորելն սկսաւ կապոյտ ազնիւ լաշիւրդն դուրս գալ. ուրախացաւ ինքն, և ուրախացոյց մեզ. յետոյ քամեաց միշակ կտաւով. մաքրեալ և սուզեալ չուրն լորացոյց, և լցոյց ի մէջ թթոյ:

Առանց կրակի ևս՝ սոյն արարողութեամբ շինեաց. և կալապու սապոնով լուաց զինի սանդալուզ իզն ձգելոյն և այս էր որ զեր շրոյ մէջն էր, լըղեաց սրբազնին, այնքան ուրախացաւ, որպէս թէ մին քաղաք բաշխեաց և մեզ սրբազն տէրս մեր ի ներկայութեան Աստուածատուր աւագ լուարար Ցովհաննէս արէին, որ եղեւ կաթոլիկոս և ինձ ճողովը ծնող. ժամորհնող Ալեքսան. եպիկոպոսաց ներկայութեան, խոստացաւ մեզ, թէ այդ վարպետի նման որ գոր էլ կարողանաք շինել, ամենթիդ մին մին եպիկոպոսի լայեաղ խաս շուփայ կու հագցնեմ. և մեր էլ շնորհակալութեամբ մատուցաք նորին Վեհափառութեան Սուրբ Օծութեան,

Այն անիրաւ քուրդ ևս էր ինձ հետ, յետոյ ունիւ պատմել ձեզ անիրաւութիւնն սորա. բայց սրբազնն

<sup>37</sup> Սանդալ ժառի յուղը.—<sup>38</sup> Սանդու—<sup>39</sup> Կաղինի մեծությամբ.—<sup>40</sup> Ունկիւ.—<sup>41</sup> Սանրացրեց.—<sup>42</sup> Միրանեցուն քուն քար.

պատուէր տուաւ ինձ թէ՝ գնա այն օրհնեալ վարպետին իմ կողմանէ շատ քարով արա և ասա. այս գիշեր իմ միսափիրն<sup>43</sup> ես. ողջ մնամբ առաւտան միմիանց տեսութիւնն || կանեմք և ես սարդարին վրայ գիր կու զրեմ ասաց, որ քեզ վրայ չի նեղանայ, թէ ինչո՞ւ յետացար. այն վարպետին յառաջին գալստեանն, որ ասացի, մնաց մօտոյ 8 օր և գիշեր. ամէն օր հետո սեղանի Ապորովն նույզ իր. գնեսի մին ամանում հաց էինը ուտում. և ինքն թաւրիպեցի գոլով, այնքան մեզ յօտ նատիւն զարմանեն, ընդ որում թաւրիպեցի իրրէ զահիմ կը լինեն, իլլահի անձրեային օրն, բայց ինքն ասէր թէ՝ մայրու հայի աղջիկ էր:

Յետոյ որ եկն և մնաց մին գիշեր լաշիւրդի շինելոյն, այնմ ժամանակին ոչ կերաւ ընդ մեզ հաց և պատմեաց թէ՝ շաճագային ինձանից գանգատ էամեցաւ էրարել թէ՝ հայութիւն է անում. և՝ աշճագային կամեցաւ որ եասաւ անէ ինձ, զիսովն երգում եմ արարել, որ հազի թէ զերծեալ եմ, վասն որոյ հայի հաց չեմ ուտիլ. հրամանաւն սրբազնին, միրզի տանն հաւ մի եղեալ ի վերայ փիլափ՝ թիրին, դրաւ գոլումն իր բարեինն, այնպէս կերաւ, և այլն:

Ես մինչ լուսացաւ, առեալ տարայ առ սրբազնն. երբ տեսին միմեանց, երկոցունց աստղն յարմարեցաւ միմեանց. սկսան ուրախանալ. յետոյ սրբազնն շատ ուրախութեամբ շնորհակալութիւն արաւ վասն լաշիւրդին՝ որ մեզ ուսոյց. յետոյ այն օրհնեալն իր քարն որ ունէր մէկ իստիլ, տարեալ մատոյց սրբազնին և ասաց՝ այս հազուապիւտ է և շատ լաւն է. սրբազնն ասաց՝ ինչ ինդիր ունես, հրամայեան, և նա խոնարհութեամբ խնդրեաց թէ՝ կարելի՞ է մին քանի ստամբայ պատկերներ տաս հայոց եկեղեցույ լայեալ և ծովի վերայ պատերազմի պատկերը և այլն. Հայեն գալիս են, ասաց, պատկերը են ուզում. ոչ նորա են կարողանում հասկացնել ինձ և ոչ եմ կարողանում հասկացնել. յորժամանակ որ պատկեր ուզեն հայոց ազգն, ցոյց տամ, որիցն որ կամենան, բաշնմ ու ատմ. իսկոյն մըր սրբազնն ամենայն ուրախութեամբ ասաց՝ գեօնում ուստայ, զնաց ներսն 35 հատ զանազան աեսակներն բերաւ դրաւ մօտն և ամենեցուն վերայ իւլ անունն ձեռաբն գրեաց և թուրբն նայում էր. ասաց՝ թիւրբան քի նա եավարամ. նա պատասխանեալ ասաց՝ խալիփայ, նա բիլարամ քի նա եավարասն. ասաց՝ մանում ազնի եազարամ քի, ման օզում վերմիշամ սանայ. սուղրայ սանն մուլբաթն ըսի օլըր բղում միկէրն իշնայ. այս խօսակցութեան վերայ թուրբն շատ ուզախութեամբ ծիծակուց և այս ուրախութեան վերայ իւլ անունն էր 15. Ո. զն. և այլն... որ ես ինձ, որով շինեցի. || Երբ ուսոյց մեզ լաշիւրդ շինելն վարպետն այն, ասաց՝ հազուապիւտ է և անկապին. թէ բարեկամ ոչ որ ուզէ թարազն որ է կշեռք, բիր եաննոյ լաշիւրդ, բիր եանընդայ զզը ոսկի զօյեարասն, նաղատարքի շաֆեար, դրզի գեօնիթիսան. լաշիւրդի վերըրսան օջնի քի խ-

<sup>43</sup> Հյուրու

տարլաբ, ակեր թանիշ ատամ ումասն, բիր դրամն վերաբան թէշ ոփալայ, կրակով շինելու խրատն իր ձեռամքն գրեց և ետ ինձ և ես մեր միրզա Թեալպուն թարգմանել տուի և սկսաբ շինել ընդ մեր փիս և նենդաւոր ընկեր Փուրդ Յովհաննէս գրագիր վարդապետին:

3 անգամ շինեցինք ի միասին. 3 անգամինն էլ զայ նղաւ<sup>44</sup> և ոչնչացաւ. յետոյ կաննեց տեղէն, փէշն թափ տուեց քուփ տալով ասաց... ևս էլ դորան ձեռք շնչ տալ. բայց ես այնքան սիրով վառեալ էի, որ ընաւ ոչ կամեցայ թէ նրա նման ձեռք վեր առնեմ. ի գնալն նորա ասացի. գնա դու. այս անգամ ես կու շինեմ Աստուծով. տես թէ ի՞նչպէս լաւ կու լինի. և մինչ սկսայ նոր ի նորոյ պատրաստել որ շինեմ, իմ հարազատ լուսառողի տիրացու Յարութիւն աստապատցի, նա թուրքին գիտէր և ամէն կերպ արարողութիւն ժաման ուներ:

Նա ասաց ցիս թէ՝ վարպետն ի լոսելն աղօթելով շինէր, իրեանց փեղամբաների անունն յիշելով, Աստուծոյ օգնութիւնն էր խնդրում, որ յաջողի գործն, մանաւանդ՝ ես Խայայ, ես Մելքամ անայ էր կամելում, զուր երկու վարդապետ նստել էր, նա ասում ա՝ այդպէս չէ, զու ասում ես՝ այսպէս է. մին անգամ Աստուծու անունն լը յիշեցի, Հալրաթ որ յի յաջողի. երբ այս նախատինքն ասացի, տիրացոն, ընդ որում սիրէի, վասն եարալու լինելոյ, որ ի սէր Սրբայ Աթոռոյն էր սրախողդուող եղեալ, ունէր վստահութիւն առ իս, և շատ լաւ արաւ, որ ասաց և ես զգուշացայ, որ Աստուծով եղեւ և ոչ...

Եւ մինչ պատրաստեցի նիմին ի վերայ մարմարին քարին, առի զսուրբ նարեկն ձեռս իմ և բացի ձեռնարդութեան նարեկն Զօ զլուխն, բացի և սկսայ օրհնել և ասել զաղօթն և ասացի Սրբոյն Գրիգորի նարեկացոյն. և զզործ ձեռաց մերոց ուղղ արարեա, պահպանի ի վերայ գործոյն և անձին իմոյ ասացի և համբուրեցի զուրբ նարեկն. և առի զբարն ի ձեռն իմ, սկսայ ջրով լուսել, Աստուծոյ սուրբ անունն և ամենայն սրբոց անունն յիշելով, ողորմութեամբն Աստուծոյ այնքան, այնքան ազնի լազիւրդ եղեւ, որ կարեմ ասել, թէ քան վարպետի շինեալն լաւ էր, վասն որոյ ի բերկութենէ սրտին շամբերեցի, բարձրածայն աղաղակաւ ձան տուի այն անիրաւին թէ՝ Յովհաննէս վարդապետ, արի տես, թէ ի՞նչպէս լաւ լազիւրդ եմ շինել. յերբ որ եկաւ տեսաւ, ունդ ունդ արաւ. և այնուհետեւ ի գնալն իմ ներսն միշտ հետո զայր, յերկիւցն, թէ մի գուցիք ես առանձին սրբազնին կ'ասնմ թէ ես եմ շինել միայն:

|| Եւ մինչ լուացի, ու Հանգութեացայ լաւապէ յատակ ջրոյն նստել զլազիւրդն. ծուլով ամառնն մաղղալամով<sup>45</sup> առի և ծաղիկ յօրինեցի զամխուղ<sup>46</sup>, և առաջ տարայ առ ծերունազարդ հոգեռոր ծովոն իմ, մատուցի խոնարհութեամբ և ուրախութեամբ. և նորին Սուրբ Օծութիւնն ընկալաւ սիրով, և օրհնեաց զիս ասելով. օրհնեալ լինիս դու որդեակ յԱստուծոյ, որ այդպիսի գործոց վերայ սէր ունես. սուրբ աշն Համբուրեցի և զնացի առ նորին սրբազնութիւն գանձապետ Գրիգոր եպիսկոպոսին որ յետոյ եղեւ ասագ լուսարար և մինչ մատուցի նմա ևս, կարծելով թէ ուրախ կը լինի նա

այսպիսի հազուագիւս ցանկալի արհեստիս վերայ և մինչ ետես, փոխանակ պարզ տալոյ և յորդորելոյ, որ առաւել ևս ցանկամ այսպիսի արհեստին ի վայելս և ի պարծանս Սրբոյն Աթոռոյն, այս լացի ի նմանէ թէ՝ բո՞ հօր պղինձն ընկնես, գու հենց գիտես, թէ լազիւրդն մի զատ է, առեալ ևս ընկել դռնէ դուռ թէ՝ ես լազիւրդ շինել գիտեմ. թէ լազիւրդն թէ լեզակն մինենյնն է. թէ կարող ես, ասաց, զրմէի իւղն հանելն սովորիք. և մինչ առի ի ձեռանէ նորա, բացի ու քրտինքն կոտսեաց ինձ, որպէս թէ կացնով զարկեց ինձ և ի ելանելն իմ ասացի՝ զառն զարդի զարդեար բիլըր, և թէ՝ թիւրդ նա բիլար բալրամի, զըռ զըռ իշար այրանի:

Եւ ի միւսում աւուրն շորացուցեալ լցրի ի մէշ կոկեալ թղթոյ և գրեցի ի փերայ նորա ամ բանն թէ՝ զառն զատրի զարգեար բիլըր. և մինչ առաւտեան հացի սպասաւուրութենէն զերժար, և կամէիթ գնալ ընդ սպասաւուրացն հաց մատել, ի մէշ փոքր լինի տալերաց<sup>47</sup> եղի և տարեալ մատուցի ու փութով ելի և գնացի հաց ուտելոյ. մինչդու մատել հացն հանապազրդական, շաթիր Ցակորն Զիթակերենց, աստիճանաց զլիին կանգնեալ, բարձր արանին կոչեալ զանիւ սանելով զառն զատրի զարկեար բիլըր, արի՛, կոչէ գքեզ սրբազնն. սկսան սպասաւորն նայել միմիանց, թէ ՞՞ զառն զատրին և մինչ ելի ես՝ սկսան ծիծաղել: Ցեր ներկայացայ նորին Վեհափառ Սուրբ նարեկանն, Հրամայեաց թէ 3 անգամ ասացի՝ զառն զատրի զարկեար բիլըր. սկսաւ ծիծաղել ու զուրաճանալ և օրհնել ինձ շնորհակալութեամբ հանդերձ ներկայութեամբ իւր սրբազնն սեղանակցացն և մինչկ ցայսօր ժամանակի զնու ես յորժամ միտին ընկնի այն բանն, ինքն սասէ՝ զառն զատրի զարկեար բիլըր: Իմ զիտաւորութիւնն առ հանգուցեալ Պրիգոր եպիկուուրն էր իւր թէ՝ սրա զատրին ևս գիտեմ զու ի՞նչ գիտես. բայց՝ սրբազնի զիտաւորութիւնն այն էր, որ իւր զառը ես եմ, զարկեարն ինքն է, որ միշտ ասէր թէ՝ Հալրաթ որ ես գիտեմ ձեր զատրին, և ալն, այսպան առ այս:

|| Եւ ի լինիլ յերեկոյեան հացին մինչ սպասաւորէի, 16ա օրհնեալ սրբազնն 3 անգամ հարցրաւ մինենյն բանն թէ՝ շիտակն ասս, զու միա՞յն ես շինել, թէ՝ ի միասին էր շինել, որպէս թէ Փուրդ Յովհաննէս վարդապետին հետ ես շինել. նա, այն անիրաւուն էլ ներկայ էր կանգնած, որպէստես պատուիրեալ էր նմա և ինձ թէ՝ վայն եկել ա ծեզ տարել, որ միմիանցից ինձ գանգատ էր արարել, վասն որոյ ի հարցանելն ոչ կարացի ասել թէ՝ 3 անգամ ի միասին շինեցինք ունչացաւ աշխատանք մեր. յետոյ ես միայն շինեցի. 3 հարցմամբն ևս 3 անգամ ևս ասացի ի միասին եմք շինել. զարձեալ օրհնեալ լինէր, սաաց, յերբ այն անիրաւուն թէֆ անելոյ, որ միշտ բարձր ձանիւ թասը ձեռացն ասէր՝ գեալ թէֆըմ, ես մնացի հացին եկեսցէին, որ յամէս օր, նա թէ զայր, թէ մնայր ևս միշտ մնայի ի սպասու նորին Վեհափառ Սուրբ Օծելոյն Աստուծոյ:

Յաւոր միում, յերկոցունցոյ ի միասին կոչեալ սրբազնն Մաղկեալ Վեհարանումն, զրօսնելով շնորհակալութեամբ ասացի՝ որդիք, կասեն թէ՝ էշը մատադ չէ

լինել, ամա իշագինն մատաղ կը լինի. Այս բանս ասելով, ամէնքին տուա ծ. ծ. ելատուզ ոսկի չոփալի զին և ասաց՝ եթէ ձեզ չոփատ տամ, որ խոստացեալ եմ, բոլոր ամէն գործակալցն էլ չոփալ կ'ուզեն ինձանից թէ՝ մեր էլ մեր գործին եմք մուլալիթ, և այլն Բայց Քուրտն այն չունէր իրաւունք, որ ես լաշիւրդն աշխատեմ, շինեմ, նա ինձ հաւասար բան պարզէ առնի, հաւատացէթ Աստուծոյ, որ այնպէս եմ համարում, թէ շնորհակուց, վեր ընկաւ ինձանից և ոչ պարզեատրուցն:

Հարթ իմ և եղբարք. նորա վնասակար արարքն շատ է առ իս, վասն որոյ գրեցի առանց լուլոյ, և ոչ կամի՞մ ամէն արարք նորա արձանացուցանել գրով, բայց որում եղբայր է մեզ աստիճանակից:

Ի 1815 թուին պատահեցաւ մեզ տիգրանակերտցի խարերայ մահտեսի ծեր ոմն, որ ասաց՝ գիտեմ ես զրմզի<sup>48</sup> իւզը հանելն. վասն որոյ ուրախութեամբ զնացի առ սրբազն տէրն իմ և ասաց՝ բազարումն այսինչ մզսուի կայ՝ որ ասէ՝ գիտեմ ես զրմզի իւղ հանելն. հրամայեաց թէ՝ զնա բեր. և մինչ տարեալ առ սրբազնն հարցումն արաւ թէ՝ մահտեսի, զրմզն իւղ ունի՝ թէ ու, նա ասաց՝ չունի իւղ. երբ սրբազնն լուաւ չունի, ասաց՝ ուրեմն զու կամ խարերայ ես, կամ եկեալ ես մեզանից բան սովորես. յետոյ սրբազնն ասաց՝ որովհետեւ չունի ասացիր, բերեմ իմ մեռուցեալն տե՛ս, ունի՝ թէ չունի. զնաց 2—3 տօպրակ բերաւ ցոյց տուաւ խարերայ ծերոյն այսորիկ և մինչ ետես, և հոտ էառ, զարմացաւ, թէ այս ուրիշ տեսակ իսոնակ է. ես չեմ կարծում որ սա զրմզ ինի || հրամայեց սրբանն թէ՝ ինչ որ գիտես ինձ մօտ թու ասուելիքն ու արարողութիւնդ ձեռք չի տալ. այլ Սահակ վաղդապիտն իմ հոգեծին հարազատ որդին է, առ տար դորա ինուցն. ինչ որ հարկաւոր է, ասս տամ զայ, զա բերի:

Եւ մինչ ելաթ ի ներսէն, ասաց՝ լաւ թունդ քացախ, լաւ թամուզ նոր կլայեկած պղինձ բեր և կրակ արա. արարի զինչ և ասաց. բայց այն ախմախ ծերն որ տեսնում ա թէ զրմզիցն իրրե կծուած իւղի հոտ ա զալիս, ամա լի հաւատում. երբ կրակն արարինք, քացախն եռաց սաստկապէս. լցոյց զկէսն իւղալի զրմզոյն ի մէջ եռեալ քացախին, իսկոյն իւղն երեսն ելա. ասացի:

16p

<sup>48</sup> Որդան կարմիր:

մահտեսի, ապա ասում ես իւղ չունի. փոխանակ պարտարութիւնն իւր ճանաշելոյ ասաց. ամանն իւղոտ էլել. այ մահտեսի, ախեր, այդ չայի աման էր. թղայֆա էր եփել, նրա իւղը կը լինի. ու մահտես ասացի, զայֆային ուր է այնքան իւղ որ իրրե ճրագ դուրս ընկի երեսն. գարձեալ լուաց տաք շրով. և կրկի քացախն եռացուցեալ եփեաց. գարձեալ անկաւ իւղ երեսն չըոյն, բայց ոչ բաժանուեցաւ իսպառ. տակաւի մնայր իւղոտ զրմզն մեռուցեալ:

Այն խարերայ ծերն մնաց մին տարի աւելի Ղազարապատումն գրամանովն սրբազնին, որ նորն զուրգայ, իւր գիտեցածն անէ. երբ ժամանակն եղի որդ գուրս զալոյն՝ սրբազնն յղեաց մենախօս. Խարայ լուսահովույն, զնաց և երբեր մին լիտրն, խափին ծ շանով կամ մին արասով, որ առաջ 10 շանով էր առեւ, իւտր կամ լիորուկիս քացախի բերի ներէն՝ որ հրամա էր, այն ծերն լցոյց մէջն, մնաց շարեք ժամանակ ձեռքն տալիս էր առնում զունդ զունդ թէ՝ օխայ, օխա, մնուան. ես ասացի՝ չեմ մեռեալ. նա ինձ ծաղր առնելու ասաց, հարիֆի մէկն մին րօգ աւանակ ունէր ճանակարձին անկաւ սատակեց, կաշին քաշել ա ու ձգիլ ումպուզն. ճանապարհին զնալու ժամանակին ասաց մեր րօգ աւանակն զեռ սաղ է, չէ մեռեալ. հիմայ գուն է, ասաց, որդն մեռնալ է, դու սանում ես թէ զեռ չեմ սատակել, ես թէ՝ ես չէի արած, զդիտէի բնաւ, սակայ Ասպուած պատրաստեց զայն մեզ համար. մինչ բանցինք և տարեալ ի վերայ կտաւոյ սփեռեալ տարած ծեցար հանելիս արենմ, նա մնացեալն իցումն համապատասխան գունդ հոգախան աւազոյն, ձայնեցի թէ մահտեսի, արի՛, տե՛ս րօգ աւանակն սա՞ղ է, թէ՝ սատ կել ա. երբ եկաւ, տեսաւ, ամօթահար եղի, սկսար նորէն ծողովիկ և քացախն այն եռացուցեալ սաստիկ լցուցինք մէջն և մեռան. ապա փողցինք առ ի շրոցուց շանել. որթան դժուարամեռ է, այնքան զժուար շորա նալի է այն փողցիկ կենդանին:

<sup>49</sup> 200 զրամ. — <sup>50</sup> Խոնավություն:

(Եարունակելի)



## Մ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ

### ՀԱՅՈՑ ՇՈՎԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԻՍԸԸ

ԺԱ դարուն, հայկական թագավորություններու իրարու հետեւ կործանումն հետո, Հայոց Եկեղեցին բյուզանդացիներու և միջինասիական ժողովուրդներու հայածանքներուն առարկա եղած էր. Այս պատճառավ հայոց կաթողիկոսները աստանդական կյանք մը վարել սկսան: ԺԱ—ԺԲ դարերուն կաթողիկոսները կսահմակեին այնքան շատ և շուտ տեղ փոխեւ, որ այժմ կաթողիկոսանիստներու տեղը և կաթողիկոսներու բնակության տևողության թվականները ճշտելը բավական դժվար խնդիր կհանդիսանա:

Եգիպտոսի մեմլուկներու կողմէ 1292 թվականին Հռոմեայի գրավման միջոցին, արիստվային նյութերը բոլորովին փչացան, պատմության և բանասիրության պատճառելով անդարմաննելի կորուստ մը:

Բազմաթիվ կաթողիկոսանիստներու շարքին կարելի է հիշել Սեբաստիան, Սամնեավը, Մուսապատումը, Քեսումի Կարմիր վանքը, Թավրլուրը, Հոնին, Սովոր, Հռոմեան և քանի մը այլ վայրերու անունները:

Միջնադարյան հայոց Սովի կաթողիկոսանիստը, որ մեր Եկեղեցիի պատմության մեջ կարևոր և նշանակելի տեղ մը կգրավե, կհանդիպի Մերձավոր Արևելքի քաղաքական ալեկոծ ժամանակաշրջանի մը:

Եփոթություններու և անփությության պատճառով, դժբախտաբար Սովը մատնված է

կորուստի և մոռացության: Հետագային Սովը շփոթվեր է Խարբերդի մոտակա Սովք դղյակին հետ: Այս շփոթությունը ժողովուրդին մեջ այնքան խոր կերպով արմատացեր է, որ րուն Սովը բոլորովին մոռացության մատնըվեր է:

ԺԲ դարու հայոց կաթողիկոսանիստներին Սով դղյակի մասին բազմաթիվ ուսումնասիրություններ և մենագրություններ հրատարակված են: Այսուամենայնիվ, սակայն, մինչև այսօր ալ Սովք և Սով տեղանուններու պատմա-աշխարհագրական առեղծվածը լրիվ լուսաբանված չէ:

Միջնադարյան հայ մատենագիրներու վկայություններին հայտնի է, որ ԺԲ դարուն հայերը երկու տարրեր վայրեր Սովք և Սով անուններով դղյակ-վանքեր ունեին: Անոնցմեծ մեկը՝ Սովքը, հայոց Սովիք նահանգի Սովք լճի, այժմ Խարբերդ գյուղաքաղաքի մոտակա Կյուճյուք կոչված լճի ափին կգտնվեր, իսկ մյուսը՝ Սով դղյակը, կգտնվեր Եփրատացվոց Տիուք գավառին մեջ, այժմյան Կազի Անթեպի Հրուսիս-արևմտյան ուղղությամբ, Տիուք հին քաղաքի արևմտյան կողմը, Սոֆդաղ լեռան վրա:

Իրարմե տարրեր երկու վայրերու վրա գտնվող նմանաձայն անուններով այս դղյակները մատենագիրները և բանասերները կաթողիկոսանիստ կանվանեն:

Երբ մենք ձեռնարկեցինք ԺԱ—ԺԲ դարերուն հայոց թափառական կաթողիկոսության աթոռանիստներեն մեկը եղող Սով դուակի իրապես ո՞ւր գտնված ըլլալը ճշտելու դժվարին աշխատանքին, անհրաժեշտ եղավ հարակից բոլոր հանգամանքները նկատի առնել: Մովի մասցած այս խնդրի լուծման համար, անհրաժեշտ էր դիմել Սովքի մասին գրված միջնադարյան ժամանակագրություններու և ձեռագրերու հիշատակարաններու: Հարցի լուսաբանությունը հնարավոր դարձնելու համար, մենք կազմեցինք իր նստոցը Սով դոյակը հաստատող Գրիգորիս Գ Պահլավունի կաթողիկոսի և իր նախնիքներուն տոհմական ժառը և Սովքի ու շրջակայի հետ կապակցություն ունեցող ժամանակակից դեպքերու տրամարանական շարադրությունն ու ժամանակագրական ցուցակը:

Գրիգորիս Գ Պահլավունիի<sup>(1)</sup> (1113—1166) ժամանակ, Սովք կաթողիկոսության աթոռանիստը եղած է 1116 թվականնեն մինչև 1149 թվականը, շուրջ 33 տարի:

Քննարկվող հարցը ավելի կանոնոտի, սակայն, երբ նկատենք, որ այս թվականները տարբեր աղբյուրներու մեջ միևնույնը ցուց տրված չեն: Այս պատճառով, տարբեթվերու միջև անճշտություններ հառաջ եկած են:

Բազմաթիվ փաստերով անառարկելիրեն որոշ է և հստակ Գրիգորիս Գ Պահլավունի կաթողիկոսի և իր եղբոր՝ Ներսես Շնորհալիի տոհմական ժառի աճը: Հաջորդ էջի վրա կցետեղենք Կամսարական Վասակ Պահլավունի իշխանի որդի, Տարոնի, Միջագետքի, Վասպուրականի, Մանազկերտի, Արճեշի և Բերկրիի բյուզանդական կուսակալ Գրիգոր Մագիստրոսի իշխանի ծոռ Գրիգորիս Գ Պահլավունի կաթողիկոսի ժամանականության ասիմանը ցույց տվող Պահլավունիներու տոհմական ճյուղագրությունը:

Պահլավունիներու այս ճյուղագրութենին բացի, մենք այստեղ կրերենք նաև ԺԱ—ԺԲ դարերու կարգ մը դեպքերու ժամանակագրական ցուցակը, որ կապրունակե Պահլավունիներու, կաթողիկոսներու, Սովքի և հարակից դեպքերու հետ մոտեն առմաշություն ունեցող իրադրություններ:

1059 թվականին կվախճանի Տարոնի, Միջագետքի, Վասպուրականի, Մանազկերտի, Արճեշի և Բերկրիի կուսակալ Գրիգոր Մագիստրոս Պահլավունի իշխանը:

1058—1065 թվականներուն Խաչիկ Բ Անեցին կրազմի Կաթողիկոսական Գահի վրա: Վերջին 3 տարին կապրի Թավրլուր և այստեղ կվախճանի:

1065/6 թվականին Մամնդավի մեջ կաթողիկոս կրնարվի Գրիգոր Բ Վահայասեր:

1067 թվականին Գրիգոր Վահայասեր Մամնդավի կմամբորդի գետի Կոստանդնուպոլիսի նգաղատոս, Օրուսազնմ, Մև լեռան վանքուրը և 7 տարի շրջագայելե հետո կվերադառնա իր Աթոռը Մամնդավի:

1067—1072 թվականներուն Գրիգոր Վահայասերի փոխանորդ Գևորգ Լոռեցի եպիսկոպոսը, Մամնդավի մեջ, կգործակցի իր հայոց հայրապետ:

1072 թվականին Գրիգոր Վահայասեր Մամնդավին կանցնի Մուտառասուն և իր նստոցը հասատատե այստեղ:

1076 թվականին, Գրիգոր Վահայասերի թույլտվությամբ, Հռնիի մեջ Մարգիս կընտրվի կաթողիկոս և կապրի մեկ տարի:

1077 թվականին Թեոդորոս Ալախոսիկ կաթողիկոս կընտրվի Հռնիի մեջ: Մինույն ժամանակ Գրիգոր Վահայասեր կաթողիկոսը կապրեր Մուտառասուն:

1081 թվականին Գրիգոր Վահայասերի քեռորդին՝ Բարսեղ Ա Անեցի, Անիի մեջ կընտրվի աթոռակից կաթողիկոս: Կապագովկիոն հայ թագավորությունները բյուզանդացիներուն կողմե ջնջված ըլլալով պատճառով, Գրիգոր Վահայասեր կապաստանի Սև լեռան վանքերը և կղբաղի թարգմանություններով:

1085 թվականին Պողոս Վարագեցին կաթողիկոս կընտրվի Փիլարտոս իշխանի մոտ, Գերմանիկի (Մարաշի) մեջ:

1090 թվականին Անիի Բարսեղ Ա կաթողիկոսին կողմե Հռնիի և Մարաշի մեջ հաստատված հակաթոռ կաթողիկոսությունները կվերացվին:

1102 թվականին Գրիգոր Վահայասեր կաթողիկոս կգտնվեր Արեգինի վանքը և Շոազակի առթիվ, հայ ժողովուրդի հավատքի ամրության պահպանման համար, կդրե իր հայրապետական թուղթը:

1104 թվականին Գրիգոր Վահայասեր Քեսունի Կարմիր վանքը կգտնվեր: Այս մասին Միիթար Այրիվանեցին կգրե: Քեսունի Գող Վասիլին և այլ իշխանք Կիւլիկիոյ՝ տարանադաշտ առ ինքեանս զՏէր Գրիգոր կաթողիկոսնա:

1066—1105 թվականներուն Գրիգոր Վահայասեր կրազմի Կաթողիկոսական Գահի վրա: Քեսունի Կարմիր վանքին մեջ կվախճանի և կթաղվի այստեղ: Այս թվականնեն սկսյալ Քեսունի Կարմիր վանքը կճանացվի որպես կաթողիկոսանիստ: Կարմիր վանքը կգտնվեր Գող Վասիլի պաշտպանության տակ: Բարսեղ Ա Անեցին կհաստատվի Կարմիր վանքը:

1111 թվականին Գրիգորիս Գ Պահլավունի կաթողիկոսի հայր և Սովքի իշխան Ապիրատ

<sup>1</sup> Մինիրաց Այրիվանեցւայ «Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էշ 61.

ՊԱՀՆԱԿՈՒՆԻՆԵՐՈՒՄ ՏՈՂՄԱԿԱՆ ՃՅՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

964

Հ Հ Մ Ի Ա Շ Ա Խ Ի Ն

41

ՎԱՍԱԿ ԻՇԽԱՆ ՊԱՀԱՎՈՒՆ  
(Բջնո, Կայսոն, Կայծեն տեղ, +1020)

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՂ ՊԱԼԱՎՈՒՆ (+1059)

(Կամիրամ Պամբականի  
իշխանաց իշխանի կինը)

ՎԱՍԱԿ ՓՐԻՂԵՑ ԳՐԻԳՈՐ Բ ԴԱՍՏՐ  
(Աստիքի դուքս,  
+1076) ՎԱՀՐԱՄ ՎԱՅԱՅԱՍԵՐ  
Կարողիկոս  
(1065/6—1105)

ՎԱՍԱԿ	ԳՐԻԳՈՐ	ԳՐԻԳՈՐ Բ	ԴԱՍՏՐ	ՎԱՍԻԼ	ԴԱՍՏՐ	ԴԱՍՏՐ
(Աստիքի դուքս, +1076)	ՎԱՀՐԱՄ	ՎԱՅԱՅԱՍԵՐ	(Մովքի իշխանի կինը)		ՎԱՍԻԼ	(Վեսակ Պահլակունի իշխանի կինը)
	Կարողիկոս	Կարողիկոս			ԳՐԻԳՈՐ	ԳՐԻԳՈՐ
	(Մովքի իշխանի կինը)	(Մովքի իշխանի կինը)			ՊԱԼԱՎՈՒՆ	ՊԱԼԱՎՈՒՆ

ՎԱՍԱԿ	ԳՐԻԳՈՐ	ՎԱՍԻԼ	ԱՊԻՉՈՒՏ	ՀԱՍԱՆ	ԳՐԻԳՈՐ	ԳՐԻԳՈՐ
(Եղիպատոսի նպահութեան)	ՊԱՀԱՎՈՒՆԻ	ՎԱՀՐԱՄ	ՊԱՀԱՎՈՒՆԻ	ՊԱԼԱՎՈՒՆ	ՊԱԼԱՎՈՒՆ	ՊԱԼԱՎՈՒՆ
	(Եղիպատոսի փրակար և վազիր)	Վարդապետ,	ՊԱՀԱՎՈՒՆԻ	(Ամսիի իշխան և փրակար, +1177)	(Ամսիի իշխան և փրակար, +1111)	(Ամսիի իշխան)

ՎԱՍԻԼ	ԱՎՂԱՐԵ	ՎԱՍԻԼ	ԳՐԻԳՈՐ Գ	ՆԵՐԵՍ Գ	ՏԱԼԱՆ	ՏԱԼԱՆ
	(Մովքի և իշխան)	ՎԱՍԻԼ	ԳՐԻԳՈՐ ՊԱՀԱՎՈՒՆԻ	ՇՈՐՈՎԱՆԻ	(Վրովավր)	(Վրովավր)
			Կաթողիկոս	Կաթողիկոս		
			(1113—1166)	(1166—1173)	(1166—1173)	
ԳՐԻԳՈՐ Գ ՏԱՆ	ՎԱՍԱԿ	ՎԱՍԵՆԻ	ՎԱՍԻԼ	ՏԱԼԱՆ	ԳՐԻԳՈՐ Զ	ԳՐԻԳՈՐ Բ
Կաթողիկոս	(1173—1193)	(+1165)			ԿԱՊԻՏԱՆ	ՎԱՐԵՐԱՄԻ

Նշանք.— Պահմակունիմերու այս ճյուղագությունը կապմած է Հ. Մ. Զամշանի «Հայոց պամերթան» և Մատաքա արքականկարության համարականուների բառարանաշը ու ունի փոքր տարրերություններ։  
Մվլաներու հիման վեա: Հ. Անառամի «Հայոց ամենանուններ» բառարանաշը ունի փոքր տարրերություններ։

(Տարունի  
կաթողիկոս  
(1081—1118))

+1198)

(Տարունի  
կաթողիկոս  
(1194—1203))

Արքակառամ»-ի

(Տարունի  
կաթողիկոս  
(1194—1203))

Արքակառամ»-ի

զորավարը, Սովք դյլակի համար մղված կռիվին մեջ նետահար կմենի: Ապիրատ իշխանի տեղը անոր որդին՝ զորավար Վասիլ իշխանը Սովքի տեր կդառնա:

1112 թվականին կվախճանի Քեսունի Գող Վասիլ իշխանը:

1113 թվականին Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսը Քեսունի շրջակայքը նոր կառուցվող շենքի մը մեջ արկածամահ կըլլա: Բարսեղ Անեցին կհաջորդե Գրիգորիս Գ Պահապունին:

1115 թվականին Պաղտին Տպորկ կհափշտակե Քեսունի իշխանությունը Գող Վասիլի հաջորդ Վասիլ Տղային և բոլորովին կվերացնե Քեսունի իշխանությունը: Այսպիսով Քեսունի կաթողիկոսանիստ Կարմիր վանքը լատին իշխանության սահմաններուն մեջ կմնա:

1116 թվականին կաթողիկոսանիստ Կարմիր վանքեն կփոխադրվի նորակառուց Սով դղյակը: Այս դեպքը կպատահի Քեսունի գրավումեն քիչ հետո: Կերևի թե կարճ ժամանակի մեջ Տլուքի մոտակա Սով դղյակը կառուցվեցավ կամ վերակառուցվեցավ Գրիգորիս Գ-ի կողմէ: Այս մասին ներսես Շնորհալին կգրէ 1151. թվականներուն.

«Ի Սով անուն դղեկէն եկեալ,  
Զոր սեփհական ինքեան շինեալ,  
Ի յանառիկս ամրոց հասեալ,  
Հոռմայական կլայ յորջործեալ»<sup>2</sup>:

1120—1123 թվականներուն Խարբերդ, Սովք և շրջակայքը Հանձիթի Պալաք ամիրամի ձեռքը կանցնին:

1144 թվականին Եղեսիան կգրավվի Հալեպի Զենկի ամիրային կողմէ:

1148/9 թվականին Ճուղին կոմսը կպաշարվի Թլպաշարի բերդին մեջ: Գրիգոր Գ Պահապունի կաթողիկոսի եղրայրը՝ Կարկառի իշխան Վասիլը, պաշարված Թլպաշարին օգնության կհասնի և թշնամին փախուստի կմատնե: Բայց վերադարձին գերի կիյնա Հանձիթի ամիրա Գարարասանի ձեռքը և Կարկառը ու շրջակայքը կկրսնցնե:

1149 թվականին Սովի Կաթողիկոսությունը վերջնականացնե Հոռմկլա կփոխադրվի, մոտ 33 տարի տևել հետո: Վասիլ զորավարի ընտանիքը կապաստանի Հոռմկլա: Բանասերներեն ոմանք այս թվականները տարրեր ցույց կուտան և 33 տարվան ժամանակամիջոցը 27-ի կամ 25-ի կիցեցնեն: Համենալն դեպք Կաթողիկոսարանի Սով դղյակեն Հոռմկլա փոխադրվիլը կարգ մը փուկեր ունեցած է: Այս ժամանակամիջոցին, Սով դղյակը

<sup>2</sup> Տեսան ներսէսի Շնորհալոյ «Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 223—224»:

գտնվող թանկարժեք և սրբանվեր սպասները, ապահովության համար, կփոխադրվիլ Հոռմկլայի ամուր բերդը և կպահվին ճուղին կոմսի հայազգի տիկնոջ մոտ: Այս դեպքը Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան կրն 1120-ական թվականներուն<sup>3</sup>, մինչդեռ պետք է պատահած ըլլա 1140-ական թվականներուն: Հետո, Հոռմկլայի Կաթողիկոսության փոխանցման և գնման թվականներուն միջե Յ տարիի շափ ժամանակամիջոց մը կա: Ճուղին կոմսի կինը՝ Ռուբրինիան, պարոն Կոստանդինի աղջիկն էր, հայազգի:

1166 թվականին Գրիգոր Պահապունի կաթողիկոսը, Հոռմկլայի մեջ, իր ներսես Շնորհամի եղրայրը կաթողիկոս կօծե և նույն տարին, 53 տարի գահակալել հետո, կվախճանի ու կթաղվի Հոռմկլա:

Պահապունիներու տոհմական ծառեն և ժամանակագրական այս ցուցակն իրը եղրակացություն պարզ կդառնա, որ Գրիգոր Մագիստրոսի փեսան՝ Խարբերդի մոտակա Մովքի իշխանն էր և Գրիգոր Գ Պահապունի կաթողիկոսի, ներսես Դ Շնորհալի կաթողիկոսի, և Վասիլ իշխանի մեծ հայրը: Ուրեմն Խարբերդի կամ Արզնիի մոտակա Պահապունիներու կալվածը անոնց հայրենիքն էր և այնտեղ ծնած էին տոհմի նշանավոր անձնավորություններն շատերը: Այսպիսով, անհավանական կիվի Բարգեն աթոռակից կաթողիկոս Կյուզերերայնի այն կարծիքը, թե Կազի Անթեպի և Տլուքի մոտակա Սով դղյակը Գրիգոր Գ-ի և անոր եղրայրներուն ծննդավայրն է: Սով դղյակը կառուցեր է ինքը՝ Գրիգոր Գ Պահապունին:

1050 թվականին Գրիգոր Մագիստրոսի բյուզանդական կուսակալության սահմաններուն մեջ կգտնվեն Վանա լճի արևելյան (Վասպուրական), Հյուսիսային (Արճել, Բերկրի, Մանազկերտ), արևմտյան (Տարոն) գավառները և Միջագետքը<sup>4</sup>: Այդ թվականին Բյուզանդիոնի սահմաններուն մեջ, Միջագետքը Հյուսիսային մասեն, միայն փոքր հողամաս մը մնացած էր: Այս շրջանակին մեջ կմնային Հանձիթի, Խորձենքի, Սոփիի գավառները, որոնց մեջ կիյնային Արզնի, Խարբերդը և Սովքը լիճոն<sup>5</sup>: Սովոր լճի մոտ էին նաև Եփրատ գետի ափին գտնվող Կարկառ և Պետպու ամրոցները, որոնց ժամանակ մը տիրած էր Վասիլ Պահապունի իշխանը: Սովքը

<sup>3</sup> Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1358:

<sup>4</sup> Բ. Կյուզերեսյան, «Սովք-Տլուք և Հոռմկլա», Վիեննա, 1904:

<sup>5</sup> A. A. Vasiliev, „Byzance et les Arabes“, III. — Die ostgrenze des Bysantinischen Reiches, Bruxelles, 1935, քարտեզ IV:

կընդգործելու Գրիգոր Մագիստրոսի կուսակալության սահմաններուն մեջ և Մագիստրոսի Պահապանի փեսան ալ Սովորի իշխաններու Տլուքը իր շրջակալրով ժԱ. դարուն Գրիգոր Մագիստրոսի և Պահապանի ժառանգործներու սահմաններեն դուրս, Եփրատացվաց երկրին մեջ կգտնվեր:

1071 թվականին, Մանաղերտի ճակատամարտին մեջ, բյուզանդական կայսր Ռումանու Դ Դիոգենես ջախչախիլ Հարված կրեց Պարսկաստանի սելջուկներեն և պարտվեցավ: Այս դեպքին հետո, Գրիգոր Մագիստրոսի բյուզանդական կուսակալության արևմբայան գավառները Փիլարտոս իշխանի ձեռքը անցան: Այս գավառներուն մեջ էին նաև Խարբերդը և մոտակա Սովորը: Այսպիսով կարճ ժամանակ մը Սովորի Պահապանները Փիլարտոս իշխանի կիսանկախ հայ իշխանության կապվեցան:

Նկատի պետք է առնել նաև այս, որ 1120—1123 թվականներուն արդեն Խարբերդը և շրջակա գավառները թուրքերու ձեռքը անցած էին: Մատթեոս Ուոհայեցին կպատմե, թե Հայոց ՇՀԱ (1122) թվականին Ուոհայի ձուլին և Կալարան կոմսերը Տափթիլ գյուղի մոտ, Հանձիթի Պալաք ամիրային կողմե գերի բռնվելով, Խարբերդի բերդը բանտարկված էին: Ուոհայեցին կավելցնե, «... թուականութեանս Հայոց ՇՀԱ (1149)... Բարի և մեծահաւատ իշխանին Վասիլին, որ էր եղբայր կաթողիկոսին և տէր Կարկառայ, ..... ազգն Խամայէլացոց, որոյ անուն գլխաւորին Խարա-Արսլան կոչիր, որ էր տէր աշխարհին Յանձիթ և այլ բազում գաւառաց.... ըմբռնեալ և գՎասիլին զեղբայր կաթողիկոսին...»<sup>8</sup>: Կարկառ բերդը գրավելին հետո, Գարաարսլան «զիշխանն Վասիլ ընդ իւր տարեալ յերկիր իւր մեծաւ փառաւորութեամբ, երկիր տուեալ որպէս սիրելի եղօր իւր»: Հ. Մ. Զամշանը կորե, թե իշխան Վասիլին կալված տրվեցավ լիկառնիո մեջ, որ, ըստ երևութիւն, Խարբերդի մոտակա Սովորի և շրջակալրի հայ իշխանության փոխարքենն էր:

1120—1123 թվականներու ժամանակամիջոցին, Հանձիթի մեծ ամիրայության սահմաններուն մեջ մնացած Խարբերդի կամ Արդնիի մոտակա Սովորի տիրուլթին Վասիլ իշխանը զրկված էր և իր իշխանությունը վերացված: Այս պատճառով է, որ Թլպաշարի տեր լատին կոմսերը իրենց ժառայության մեջ մտնող Վասիլ Պահապանի զորավարին տված էին Կարկառ և Պեպու ամրոցները:

<sup>8</sup> Մատթեոս Ուոհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 351—353:

<sup>9</sup> Անդ, էջ 395—397:

Իսլամներու կողմե պաշարված Թլպաշարի օգնության հասնող Վասիլը 1148/9 թվականին միայն Կարկառի իշխանն էր և ոչ թե, ինչպես կկարծե Օրմանյան, «Սովորի և Կարկառի իշխանը»<sup>10</sup>:

Պատմա-աշխարհագրական մեծ շփոթություններու պատճառ հանդիսացած են միշնադրյան կարգ մը ձեռագիր հիշատակարանները: Այդ շփոթություններու թվին կպատկանի նաև Սովորի և Սովորի շուրջ ստեղծված անորոշությունը: Ստորև կրերենք այսպիսի հիշատակարաններ, որոնց գրիշները Սովորի և Սովորի տարրեր վայրեր ըլլալու մասին գաղափար չեն ունեցեր:

Այսպես, 1173 թվականնեն հետո գրված ձեռագիր մը մեջ, Սովորի կաթողիկոսանիսոր սխալմամբ Արդնի (այժմու էրկանի) կամ Խարբերդի մոտակա Սովոր լիճն է նշված: «Եւ յետ ամաց՝ զԱշն Սուրբ և զքօն գողացան յԱղթամարայ և տարան առ կաթողիկոսն Տէր Գրիգորիս ի Սովորն Արդնու եւ ապա յետոյ փոխեցան ի Հռոմելայն»<sup>11</sup>:

Նմանապես, ժԲ դարու առաջին քառորդին գրված ձեռագիր մը հիշատակարանին մեջ Սովոր դոյցակը Չորրորդ Հայքի մեջ ցուց տրված է, որ Խարբերդի մոտակա լիճի Սովոր դոյցակն է, ուր Բարսեղ Ա կաթողիկոսը այցելություն մը տված է. «... Տէր Բարսեղ կաթողիկոսն մեր, ի թվականին Հայոց ՇԾԵ. ի դառն և ի նեղ ժամանակին, յորում տարամերժեալ էր սուրբ Հայրապետն Տէր Բարսեղ ի բռն աշխարհէն և յԱթոռոյն իւրոյ սեպահականէ և իշեալ բնակէր ի սահմանս Չորրորդն Հայոց, ի դոեկին Սովոր անուն: Գնաց յաշխարհն Կիւլիկեցոց և եմուտ ի Սեաւ լեանն, ուր բազում գանորայր էին մերում ազգին, և այլոց ազգաց»<sup>12</sup>:

Կաթողիկոսանիսոր «Սովորն» անվանած են նաև Վարդան պատմիչը<sup>13</sup> և ժԷ գարու ժամանակադրի Դավիթ Բաղրամեցին. «Ի ժամանակ Գրիգորիսի մեծ կաթողիկոսի, որ փոխեաց զԱթոռ Հայրապետութեանն ի Սովոր անուն դոեկին ի կլայն Հռոմէական»<sup>14</sup>:

<sup>8</sup> «Աղբապատում», Ա, էջ 1374:

<sup>9</sup> Գարեգին Ա կարողիկոս, «Ցիշատակարանք ձեռագրաց», Անթիկիա, 1951, Ա, էջ 422:

<sup>10</sup> Անդ, էջ 303:

<sup>11</sup> Մեծին Վարդանայ Բագրերեղցոյ «Պատմութիւն Հայոց», Մասկա, 1861, էջ 167:

<sup>12</sup> Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ», II, Երևան, 1956, էջ 341:

որ ժեն դարուն Խարբերդի մոտակա լճի Սովք դղյակը կանգուն և գործոն վիճակ ունեցեր է:

1443 թվականին Խարբերդի շրջակա Խուլավանքը գրված. Ավետարանի մը հիշատակարանին մեջ Սովք դղյակը շփոթված է Սովի հետ. «Վասն երկիւղին Լավանկ-Թամուրին սեւրո գերեզմանին միաբանքն թագուցեալ են՝ ի Սով դղյակ, և վանս Խարտիշարի, և Ս. Կարապետին, և Կարմիր վանուց»<sup>13</sup>:

Մինչդեռ 1478 թվականին Խարբերդի մոտակա Սովք լնի Ս. Նշան եկեղեցին գրված ձեռագրի մը հիշատակարանին մեջ Սովքը ճիշտ նշված է. «...Գրեցաւ սուրո գանձարանս ի Սովքս, ի գուռն Սուլր Նշանիս, ի թուականիս....Ճիէ (1478), ձեռամբ լոքնամեղ և մատնդիդ (՝) Յովան սուտանուն էրիցուս»<sup>14</sup>:

Դժբախտաբար Տլուքի մոտակա Հայոց Սով կաթողիկոսանիստ դղյակի վախճանի մասին տեղեկություններ կպակսին: Հստ «Պատմութին սուրո Հայրապետին Ներսէսի և իւրոց նախնացն գրության, Գրիգորիս Գ Պահավունի կաթողիկոսը 1140-ական թվականներուն արդեն կանհանգտանար «ի կասկածանաց և յերկիւղէ շարաշշուկ բռնաւորացն»:

1149 թվականին, Սով դղյակի Կաթողիկոսարանին վերջնական պարպումն Քիլ Հետո, արդեն դղյակը սելզուկներու կողմէ գրավված կտեսնենք:

1151 թվականին Տլուքի մոտակա Սով դղյակի Ս. Աստվածածին և Ս. Նշան եկեղեցիներեն մեկուն մեջ գրված Ավետարանի մը հիշատակարանեն կկարդանք. «Յամի վեցհարիւրերորդի Արամեանս տումարի, ի հայրապետոթեան Տեան Գրիգորիսի՝ Հայոց Հեղինակի և եղրայր Նորս՝ Ներսիսի, և ի բռնակալութեան Միջերկրեալս Մելիք Մասուտին՝ յիսմայելէ և յիկոնիոն քաղաքէ, գրեցաւ Աւետարանս այս լոնդիր և ի ստոյգ աւրինակէ յամրոցիս՝ որ կոչի Սով, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնիս և Սրբոյ Նշանիս»<sup>15</sup>:

Այս հիշատակարանը անգամ մը ևս կփաստե, որ Տլուքի մոտակա Հայոց կաթողիկոսանիստը Սով դղյակն էր և ոչ թե Խարբերդի մոտակա Սովք դղյակը:

Եվ, վերջապես, 1151 թվականին «Միջերկրեալ Մելիք Մասուտ»-ը ցուց կուտա, որ Գրիգորիս Գ կաթողիկոսը ուղղակի սելզուկներու սպառնալիքներեն ազդված, Հոռմելայի

<sup>13</sup> և. Ս. Խաչիկյան, «Ժեն դարի հայրեն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, էջ 558; 1443 թվականը սիալ կրդի. Լենկ-Թիմուրը արդեն մեռած էր:

<sup>14</sup> Անդ, էջ 433.

<sup>15</sup> Գարեգին Ա կարողիկոս, հիշված աշխատությունը, Ա, էջ 361.

պես անառիկ բերդ մը ապաստանիլ պարտավորվեցավ:

Հստ երևույթին, սելզուկներու կողմէ Սով դղյակի գրավումը անաղմուկ եղած է, քանի որ ան կգունվեր «ի փոքր դղեակն» և ոչ ոք ակարող գուլ փրկել զնոսա»: Վասիլ իշխանի գերված էր և կիկառնիա տարված, Շահանիշխանն ալ մեծտեղը շկար: Երջակա լատիններու երկիրները գրավված կամ անոնց իշխանները գերի տարված էին: Այս պարագաներու տակ իսկապես Սով դղյակը ֆիզիկապես պաշտպանելը անհնար էր:

Կթվի, թե սելզուկները Սով դղյակին տիրուով գոնացան և խժդություններ շգրծեցին, որովհետև գրավումմեն քիլ հետո հայ գրի մը Ավետարանի մը ընդորինակությունը կավարտե և գրավդի հիշատակարանին մեջ հալածանքի, ավերումի մասին ոչ մեկ ակնարկություն շկա:

Կաթողիկոսարանին Սով դղյակը հաստավված ըլլալուն մասին թանկագին փաստ է 1151 թվականին Ներսես Շնորհալիի գրած «Բանք շափաւ»-ը, ուր նկարագրված են ժամանակակից դեպքերը:

«Մասուտ Սովան Յիկոնացւոց, ծկեալ յաշխարհ Գերմանացւոց<sup>16</sup>, Առեալ զաւանս քաղաքայնոց Մինչ ի կողմանս Եփրատացւոց, իսկ հայրապետ հանուրց Հայոց, Անուն զուարթուն Գրիգորիոս, Փառանդ նախնոյն Սուլր աթոռոց, Անուանակիր սեռ ազգայնոց, ի ծով անուն դղեկէն եկեալ, Զոր սեփական ինքեան շինեալ, ի յանառիկս ամրոց հասեալ, Հոռմայական կլայ յորդորչեալ»<sup>17</sup>,

Այլուր Շնորհալին Սով դղյակի մասին դարձյալ կգրե.

«Ի հինգ հարիւր թուականի, իննը տասին նոյն միակի, իսկ ի միւսում հասեալ տարի, Կրկին եհաս յայնմ աշխարհի, էառ զամուրն Պէէսնի, Տալով վատացն առանց մարտի:

<sup>16</sup> «Աշխարհ Գերմանացւոց կամ «Գերմանիկեցւոց», այսինքն Մարտ»:

<sup>17</sup> Տեսան Ներսէսի Շնորհալայ, «Բանք շափաւ», էջ 223—224,

Եւ զՔեսուն քաղաք բարի,  
Եւ զըմապան կարդ ըստ կարգի,  
Ի թըլպաշար հասեալ լինի...  
Մեր ի դղեկէն, որ Սով կոչի,  
Որ սեփական մեր էր տեղի....  
Անցեալք ի յայնկոյս Տօրոսի<sup>18</sup>,  
Թնակեալ հանդէպ ամրականի,  
Որ Այլասեռ քար<sup>19</sup> անուանի...»<sup>20</sup>,

Կարևոր է այստեղ ավելցնել «Սոփերք»-ի և «Պատմութիւն վարուց Սրբոյն ներսէսի Շնորհալույն»-ի մեկ համագրությունը եղող «Պատմութիւն սուրբ հայրապետին ներսէսի և իրոց նախնեց» ժողովական մեկ հատվածը, ուր կաթողիկոսանիստ Սով դղյակի ժամանակակից անունը ճիշտ նշված է. «Բայց զայնու ժամանակաւ զննեղեալ ունէին զկայանս բնակութեան Տեառն Գրիգորիսի տիեզերալոյս եղբարքն ներսէսի յերկրին Անտիոքիա՝ ի գաւառին Սղբոյ (Տլբոյ), ի փոքր գղեակն Սով կոչեցեալ, և աղաւթէին առ Տէր ապրեցուցանել զնոսսի շարաթոյն այլասեռիցն և ի մարգադէմ գաղանացն, որ և փրկեալք լինէին և ապրեալք որպէս ճնճղուկ յորոգայթէ որսողաց, քան զի Տէր ձեռնկալու էր նոցա ըստ մարգարէին Խոկ ապա տեսեալ զտկարութիւնն զաւրութեան մերասեռիցս, երկեան դադարել ի դղեակն Սով, քան զի ոչ ունէր այնքան ամրութիւն, որ եթէ կարաւզ գոլ փրկել զնոսս յաշխարհակործան բարկութենէն; Վասն որոյ դիմեալ կամէին իրբու ընդ մէջ ծովական ալեաց ճանապարհ առնել և անցանել յարեւելս, ակնկայեալ յանդ զաւրացեալ իշխանսն տանն Վրաց և թագաւորն Ափխազց: Այլ Տէրն գթած, որ միշտ ձեռնկալու է արդարոց և ոչ տայ թոյլ կործանիլ նոցա, տնալինաբար ներգործեալ ստուածայնապէս պարզեաց նոցա զանմատշելի ամրոցն Հռոմելայ՝ մերձ առ ափն ադինարուղիս գետոյն Եփրատայ, ի ձեռն աստուածասէր տիկնոց բարեբանեալ կոմսին Ճաւայնի, որոց նմա ազգայնաւք և ամենայն զարմիւք և սպասւորաւք և ամենայն լրմամբ Սրբոյն Աթոռոյն՝ խաղաղացան անդորրաբար ի կասկածանաց և յերկիւէ շարաշշուկ բռնաւորացն:

Եւ թէպէտ և այլ շուրջաբնակ գաւառքն առան յայլազգեաց մինչև ի մեծն Անտիոք,

<sup>18</sup> Հռոմելայի և Տլուքի միջև կրարձանան շարք մը լեռներ, որոնք բնական սահման կներկայացնեն Տլուք և Հռոմելայ զավառներու համար:

<sup>19</sup> «Այլասեռ քար» ըսելով կակնարկ Հռոմելայի:

<sup>20</sup> Տեառն ներսէսի Շնորհալոյ, «Բանք լափաւ»,

այլ նոքա անփորձ մնացին ամրութեան տեղւոյն աղազաւ...»<sup>21</sup>:

Մմբատ սպարապետի թանկարժեք ժամանակագրության՝ «Տարեգիրք»-ի մեջ ալ կաթողիկոսանիստը սխալմամբ Սովք ուղղագրությամբ գրված է: Դեպքերու ընթացքը բաղդատելու համար, այստեղ կրերենք այդ հատվածը. «Ի թուին Շնթ (1150) դարձեալ եկն սուլտանն յիկոնիոյ Մասուտն, և էտո զՊեհնիսի զոր առանց պատերազմի ետուն ի նա: Նոյնպէս էտո և զՔեսուն, զՄապան և զՓարզման. և անտի եկն ի թըլպաշար, և պատեաց զնա պատնիշօք, և ոչինչ կարաց առնել, քանզի որդի կոմսին անդ էր և ունէր արս պատերազմողս, և ապա զերկիրն կոտորեաց և աւարաւ զնաց: Զայս տեսեալ սուրբ հայրապետն Հայոց Տէր Գրիգորիս, զի այնքան տկարացաւ զօրութիւն քրիստոնէից, և ինքեանք ոչ ունէին ամրոց ապաստանի, և ի Սովք բերդն իւրեանց երկնչէին դադարել ապա խորհեցանց զնալ յարնել առ թագաւորն Վրաց, զի Անի ի ձեռն նորա էր, թերես անդ զտանիցն անդորրութիւն և տեղի պատանի անկասկած ի թշնամեաց: Եւ թողեալ զեղբայրն իւր զՏէր ներսէս անդ, մինչև ինքն զնացէ և դարձցի, և ապա ամենայն տոհմիւք և ընչելք զնացցեն: Խոկ ի զնալն Տէր Գրիգորի՝ պատահեաց զի զնաց ի թըլպաշար, և տիկինն ծօսնին անդ էր, և հարցանէր ընդ սուրբ հայրապետն զպատճառս զնալոյ նորայարելս, և նա պատմեաց նմա. և տիկինն այն արգել զնա ի ճանապարհէն՝ տալով նմա զանմատչելի բերդն Հռոմելայն ի բնակութիւն, ընդ որում յոյժ ուրախացաւ սուրբ հայրապետն, և դարձեալ եկն առ եղբայրն իւր Տէր ներսէս ի Սովքն, և պատմեաց նմա զպատճառս դառնալոյն, և զփոստումն տիկնոցն ծօսնին վասն Հռոմելային՝ զի տացէ Աթոռ Հայրապետացն Հայոց»<sup>22</sup>:

Մմբատ սպարապետի համար ներելի չէ Տլուք գավառի Սով դղյակի անունը Սովք ուղղագրությամբ գրելը, քանի որ իր աշքի առաջ ունեցած է ճիշտ ուղղագրությամս Մատթեոս Ուունայեցիի և Միքայել Ասորիի<sup>23</sup> ժամանակագրությունները: Այստեղ համեմատության համար մեղքերենք Մատթեոս Ուունայեցիի մեկ հատվածը, որմե Մմբատ սպարապետը արտագրած է աննշան փոփոխություններու:

<sup>21</sup> Գարեզին Ա կարողիկոս, հիշված աշխատությունը, Ա, էջ 428:

<sup>22</sup> Մմբատ սպարապետի «Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 168—169:

<sup>23</sup> Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորոց «Ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1870, էջ 429: Հայոց կաթողիկոսանիստի տեղանունը գրված է ճիշտ ուղղագրությամբ՝ «Ի Սովք»:

## Մատքես Ութնայեցի

«Ի թուականութեանն Հայոց Ոժ... Յայսմ ամի տէրն Անտիռքու, որ և բրինձ կոչի և անոն նորա Սիր Նաղտ (Սիր Ռնաղտ), եկն յաւուրս աշնանային և յանհոգս եղեալ իշանէր յերկիրն Տէրոյ. և ի բերդն կաթողիկոսի որ կոչի Ծով, և ասպասակս սփոքը ի շրջակայ երկիրն աւար առնելով և գերելով զթուրքիմանսն զոր գտանակ թուրքմանսն զոր գտանակն անունը<sup>24</sup>:

Ժամանակի ընթացքին Սով դղյակը, շրջակայքի քրիստոնյաներու և հատկապես հայերու նվազելով, հալածանքներու, գաղթի և տգիտության պատճառով մոռացության մատնվեր է: Տլուքը, Սովքը և շրջակա ավանները կործաներ և նույնիսկ կարգ մը նշանավոր վայրեր անհետ կորսվեր են: Միայն մացեր է անորոշ ավանդություն մը, որ հայերը Սով դղյակին մեջ ունեցեր են Կաթողիկոսություն մը:

Հետագային այս ավանդությունը աղավաղվելով, Խարբերդի շրջակա հայոց մեջ ստեղծվեր է այն տարածայնությունը, թե Սովքը, և հատկապես Սովք լճի Ս. Նշան ամուր վանքը կամ եկեղեցին եղեր է Կաթողիկոսի աթոռանիստը: Բայց այս սխալ է: Խարբերդի Սովքը եղեր է միայն Գրիգորիս Գ, Ներսես Դ Շնորհալի կաթողիկոսներու և անոնց տոհմի ծննդավայրը միայն և ոչ թե կաթողիկոսանիստ:

Սովք լճի Կաթողիկոսարանի գոյության հավատք ընծայած են նաև մեր հայտնի բանասերներն Գրիգորին վարդապետ Սրվանձտյանը («Թորոս աղքար»), Հ. Մ. Զամշյանը («Պատմութին Հայոց», Գ), Հ. Մ. Վ. Քաջունին («Աշխարհագրութին Հին և նոր Հայաստանեց»), Խրայանը («Սովք—Կյոլճյուք») և ուրիշներ:

Այսպես, Հ. Մ. Զամշյան հայոց կաթողիկոսնիստը սխալմամբ Խարբերդի մոտակա Սովք դղյակը ցուց կուտա իր աշխատության հետեւալ հատվածներուն մեջ, 1133 և 1147 թվականներուն դիմաց.

<sup>24</sup> Մատքես Ութնայեցի, «Ժամանակագրութիւն», էջ 427,

<sup>25</sup> Մարտա սպարապետի «Տարեգիրք», էջ 185, Հավանարար ընդորիսակողի սխալ է Սովք փոխարեն Սովք ձևով գոված ըլլալը:

## Մարտա սպարապետ

«Ի թուին Ոժ (1161) տէրն Անտիռքայ Ըոնաղս բրինձն, առեալ Ու այր ծիաւոր և հետեւակ և գայր նորօք ի գաւառն Տլոյ ի կաթողիկոսնեանց բերդն ի Սովքն, և ասպատակաւորս սփոքը շուրջ զգաւառոքն, գերեալ և աւար առնուու զիսորանարնակ թուրքմանսն զոր գտանակն անունը<sup>25</sup>:

«Եւ Մաղսուտ ամիրայն ևս յաջողակ գտեալ յամենայնի, առնէր մեծամեծ յաղթութիւնն գրեթէ յամենայն տեղիս: Եկն սա զօրօք բազմօք ի վերայ քաղաքին Մարաշոյ, որ էր ի ձեռս լատինացւոց, և պատերազմեալ ընդ նմա՝ էտ զայն փոքու աշխատանօք. և անտի ասպատակ սփուեալ յամենայն սահմանս երկրին Եփրատացւոց՝ արար բազում հարուածս, և գերեաց զանթիւ մարդիկ»: «...Զայսպասիս աղէտս թշուառութեանց տեսեալ Գրիգորի կաթողիկոսի՝ որ նստէր ի դղեկին իւրում Սովք կոչեցեալ, խորհեցաւ մեկնիւ անտի, և զնալ ի դղեակն Հռոմկայց<sup>27</sup>: Վենետիկի Մխիթարյան միաբաններին Հ. Մ. Վ. Քաջունին հավատայն ավանդության, թե Շնարբերդի մոտիկ կա ծովակ մը, որո մեջն է Սովք ըսված դղյակը, որ երկուտասաններորդ դարուն մեջ քիլ մը ատեն հայոց Կաթողիկոսարան եղավ»<sup>28</sup>:

Այլուր, դարձալ անդրադառնալով Սովքի մասին, Հ. Մ. Քաջունին կգրե. «Հռոմկայի բերդը ատեն մը Գող Վասիլին ձեռքն էր, ետքը 1116-ին լատինացվոց անցավ, ուր գնաց 1147-ին Գրիգոր կաթողիկոս, թողով Զորբորդ Հայոց Սովք կղզվուն մեջ եղած Կաթողիկոսարանը, և իրեք տարիեն ետև գնեց այս բերդը լատին ծուլին կոմսին զավկեն, որ բերդին տերն էր...»<sup>29</sup>,

Հայոց կաթողիկոսանիստներու մասին ժողեփ Ստրշիգովսկին հրատարակած է սխալ ժամանակացուցակ մը, ուր Սովքի Կաթողիկոսությունը 1113—1166 թվականներու միջն սխալ ձևով ցուց տված է<sup>30</sup>:

Կաթողիկոսանիստ Սովք դղյակի տեղադրական և պատմա-աշխարհագրական խնդրի լուսաբանման համար անհրաժեշտ են նաև լուցուցիչ տեղեկություններ:

Լնդոն առարկա Խարբերդի մոտակա Սովք լիճը կտոնվի Խարբերդ գյուղաբաղարի հարավ-արևելյան կողմը, 25 կմ. հեռու, և Արդնի

<sup>26</sup> Հ. Մ. Զամշյան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 52;

<sup>27</sup> Անդ, էջ 70,

<sup>28</sup> Հ. Մանվել Վ. Քաջունի, «Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեց», Վենետիկ, 1857, էջ 63:

<sup>29</sup> Անդ, էջ 214,

<sup>30</sup> Josef Strzygowski, «Die Bankunst der Armenier und Europa», II, Wien, 1918, էջ 598-599.

(այժմ էրկանի) գյուղաքաղաքին հյուսիսարևմտյան կողմը, 35 կմ. հեռու կիմ արևելքին արևմտյան ունի 20 կմ. երկարություն և 5 կմ. լայնություն մեջ կան երկու փոքր կղզիակներ, մեկը արևելյան ափի մոտ, իսկ մյուսը՝ հարավային ափին 1 կմ. հեռու երկարավուն լիճը հառաջ եկած է հայոց Սիմ լեռներուն մեջ մնացած փակ հովտի մը ջուրով լեցվելն: Լճի շուրջը կրածրանան լեռներ: Լճի ավազանը շարունակությունն է Արածանիի գետահովտին և Տիգրիսի վերին հոսանքներուն: Լճի կեդրոնական մասը ավելի նեղ է, ուր կատալի հարավի ափին մոտիկ եղող կղզին, որուն վրա մինչև այժմ կտեսնվին Սովորի Ս. Նշան հինավուրց և նշանավոր վանք-եկեղեցիի փլատակները: Ս. Նշանը եղած է Պահապանիներու տոհմական եկեղեցին, Սովոր դղյակի մոտ:

Սովորի Ս. Նշաննեն բազմաթիվ ձեռագրեր հասած են մինչև մեր օրերը: Ժե և հետագա դարերուն Սովորի Ս. Նշանը գործոն վիճակի մեջ էր:

Կիարծվի, թե ժե ժարու առաջին կեսին լճի ջուրերը բարձրացած են մինչև եկեղեցիի պատերը և շենքը կործանած է: Հին ժամանակները Սովոր անվանված գյուղը, որ եկեղեցիի ավերումն առաջ ջրամույն եղեր և բնակչությունը տեղափոխվեր է հարավային կողմը բարձրացող Հազարբարա լեռան կողի վրա, որ ջուրի բարձրացումով շուտով դարձեր է ծովափի: Նորակառուց գյուղը իր նախորդի հիշատակին անվանված էր Սովոր գյուղ:

Հայացինչ կոտորածներին հետո, Սովոր գյուղը հայեր շմանցին:

Սովոր գյուղը այժմ կողմի Կյոլճյուք (լճակ, ծովակ), ուրկե կանցնին Մալաթիա-Դիմարեքիր երկաթուղին և խճուղին:

Լճի հարավային կողմը բարձրացող Հազարբարա լեռան (2230 մ.) և ծովափի միջև մնացած նեղ հողաշերտի վրային կանցնին երկաթուղին և խճուղին: Լիճը ունի ստորերկրյա ակեր և անցքեր և կամ շրջակա լեռներու ձյունհակն և անձրևներն առյացած ջրերով: Արևելյան կողմեն ունի միակ ելք մը, ուրկե սկիզբ կառնե Տիգրիս գետը: Բացված է նաև ջրանցք, որ լճի ջուրի մակարդակը կամունավորե և կծառայե շրջակա հողերու ոռոգման:

Ժե և ի դարերու հայ բանասերներու մոտ հարց ծագած էր, թե Ս. Նշան եկեղեցիի վայրը ամրոց կառնվե՞ր թե ոչ: Այս կասկածը առաջացած էր այն պատճառով, որ կղզիի մեջ բերդի պարիսպներու, աշտարակներու հետքեր չէին երևար: Պետք է նկատի ունենալ, որ Սովոր լճի մակարդակը, դարերով գտնվելով երկարանական փոփոխություններու ազդեցության տակ, ունեցեր է տեսական բարձրա-

ցում մը: Այս իրողությունը ապացուցված է պատմական փաստերով:

Սովոր գյուղուն ուներ իբր լիճ և դղյակ նույն անվան տակ և նշված էր է դարու «Աշխարհացոյց»-ին մեջ. «... Սովոր, և Անձիտ գաւառ՝ ի հարավ, յորում Սովոր [լիճ] և Հոռէ բերդ, և ի մտից նոցա Դէգիթ գաւառ...»<sup>31</sup>:

Ժե դարուն կհիշվի Պահավունիներու տոհմական կալված Սովոր դղյակի անունը: Դղյակը կանուն մնացեր է մինչև ժե դարը և հետագա թվականները: Վերջին դարերու ընթացքին, երբ դղյակը և շրջակա գյուղը շրամույն են եղեր, գյուղը տեղափոխվեր է բլուրի գագաթին գտնվող Ս. Նշան եկեղեցվոր շուրջը: Ապա ջուրի բարձրացումը շարունակեր է և ժե դարու առաջին կեսերուն գյուղը երկրորդ անգամ սեղափոխվեր է այժմյան «Կյոլճյուք անվանված գյուղի վայրը: Ջուրի մակարդակի բարձրացումով, լիճը դեպի արևմուտք և ավելի արևելք երկարեր է: Այժմ լճի ափեն 1 կմ. հեռու մնացած էին Սովոր գյուղը նախակին կառնվեր և ուրկե կարճ ճամբով մը լճի հյուսիսային կողմերը կարելի էր երթալ ջուրի բարձրանալով այս ճամբան ջրամույն եղեր է: Այժմու ճամբան, որ հինին հետ համեմատած ավելի երկար է, լճի հարավային եկեղեցը շրջելով կանցնի: Այս հանգամանքը կարծել կուտա, թե է—ժե դարերուն և հետագա թվականներուն Սովոր լիճը բարձրացած է եղեր երկու մասերե: Սովոր տեղանվան հոգնակի ձեն ալ արդեն այլապես կիսատե այս ենթադրությունը: Լճի երկու մասերը հավանաբար վտակով մը միացած էին իրարու: Միացման այս վայրին վրա կառնվեր Սովորի դղյակը: Միջին դարերուն դղյակները ընդհանրապես առավել բնական պաշտպանություններով և ամրություններով օժտված տեղեր կառուցվեին:

Ժամանակակից մեր բանասերները Սովոր լիճը միայն մեկ մասի բաղկացած կնկատեն: Ս. Նշան վանք-եկեղեցիին գտնված բլուրի ցցվածքը, որ այժմ կղզի է եղած, հին ժամանակ լճի երկու մասերու միացման կետին վրա արգելիչ պատվար մը կհանդիսանար: Տեղի բնակիչ հայերը երկու լիճերուն առանձին անուններ տված էին՝ «Ներքին ծով»:

Սովոր դղյակին վայրը պետք է փնտուել Ս.

Նշանի գտնված բլուրին ստորոտը:  
Ներքին ծովի մասին Սրվանձտյանց նշում մը կառնեն Ս. Նշան եկեղեցվոր ձեռագիր Ավետարանի մը մեջ. «... Խոճա Սովոր ի ներքին Սովուցն, նուաստ Ցովհաննէս եպիսկոպոսէս գիտութիւն լիդի ձեղ բահանակացդ և տանուտէրացդ... մեծի և փոքրու որ ի ներքին

<sup>31</sup> Ս. Տերեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ին, Երևան, 1963, էջ 107:

Սովուցն թօ ավթմանի է»<sup>32</sup>, Այս հիշատակարանը որոշապես ենթագրել կուտա, որ չին ժամանակ Սովետ գյուղը և բաղկացեր է երկու մասերեց Վերին Սովուց գյուղ և Ներքին Սովուց գյուղ, սակայն ավելի հավանական է կարծել, որ ոչ թե գյուղերն էին Վերին և Ներքին, այլ լճերը, ծովերը:

Սովուց անվան շուրջ հիշատակելի է ուրիշ Հանգամանք մը ևս, որ մեր նյութին հետ սերտ առնչություն ունի:

Անթեպի մոտակա Տլուք գավառի Սով դլյակը կկոչվի նաև Սովուց դղյակի: Այս մասին Կիլիկիո պատմիշը ունի հիշատակություն, ուր Գրիգոր Տղա կաթողիկոսի համար կգրե. «Այս Տէր Գրիգորիս արկանէ հիմն ի Կլայն և շինէ Հոյակապ եկեղեցի ի նմանութիւն արևելից տաճարացն, պատրաստեալ նմա զգիրս երկու լուսաւորչացն գօրեղբարց իւրոց՝ Տէր Գրիգորիսի և Ներսեսի. Հանէ և ի Սովուցն (այսինքն՝ ի Սով գլեկէն) զնշխարս Մեծին Գրիգորիսի, զքեռույն Ապիրատայ հաւուն իւրոյ զՏէր Վահրամայ (Վկայասիրի), և զնէ ընդ երկուց լուսաւորչացն (Հոռմկլայ)<sup>33</sup>, Պետք է նկատի ունենաւ, որ Գրիգոր Վկայաւեր նախ Քեսունի մոտակա Կարմիր վանքը թաղված էր, ապա Գրիգորիս Գ Պահլավունի կաթողիկոսի կողմէ անոր աճյունները Տլուք գավառի նորակառուց Սով դղյակը փոխադրվեցան: Վերոհիշեալ հիշատակագրութենին կերևա, որ վերջին անգամ մըն ալ Գրիգոր Տղա կաթողիկոսին կողմէ Վկայասիրի աճյունները տարկեցան Հոռմկլայ:

Կա նաև Սովուց վանքը, որ Սով դղյակավանքն է և նշված է 1144 թվականին գրված ձեռագրի մը հիշատակարանին մեջ. «...սպասաւորի Սրբոյ Նշանին, որ է ի Սովուց վանսն, մերձ ի սահմանս ամրոցին, որ կոչի Հոռմկլայ»<sup>34</sup>:

Սովետ լճի ջուրերու մակարդակին բարձրանալուն պատճանները եղած են առատ ձյունալու և երկրաշարժները, աիդմի կուտակումներ հառաջ եկած ելքի խցումը. Սիմ լեռները (Արևելյան Տալրուսներ) հարթաշային կազմվածք ունին և գեռ բոլորովին հանգած շեն: Խարբերդը և շրջակայթը ունեցած են զօրավոր երկրաշարժներ:

<sup>32</sup> Գարեգին վարդապետ Մրգանեալյանց, «Թորոս աղբար», Բ, Կոտասանդուպուլիս, 1879, էջ 355.—Մ. Գ. Ճիզմենյան, «Խարբերդ և իր զավակները», Ֆրեզոն—Կալիֆոնիա, 1955, էջ 40:

<sup>33</sup> Բարզեն վարդապետ Կյուլեսերյան, «Սովետ-Տլուք և Հոռմկլայ», Վիեննա, 1904, էջ 72.—Հ. Մ. Զամշան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 395:

<sup>34</sup> Գարեգին Ա. Կարողիկոս, «հիշած աշխատությունը, Ա, էջ 357.

Գրիգորիս Գ Պահլավունի կաթողիկոսի 1115—1116-ին կառուցած Սով դղյակի անունը սերտորեն կապ ունի Պահլավունիներու հորենական Սովք դղյակի անվան հետ: Նմանապես Սով դղյակի Ս. Նշան վանք-եկեղեցիի անունը կապ ունի Սովք դղյակի Ս. Նշան եկեղեցիի անվան հետ: Կաթողիկոսը այս ձևով հորենական ստացվածքներու անունները ուղեր է հավերժացնել: Ան կարող էր այժմյան Սովդաղ լեռան վրայի Սով դղյակն ալ Սովք կոչել, բայց ավելի հարմար էր հորենակի ձևով կոչել հարբերդի Սովք լիճը, որ բնականորեն կազմված էր երկու մասերի, իսկ Տլուքի մոտակա լեռան Սով դղյակը՝ եղակի ձևով, որովհետև լեռան հյուսիսային ստորոտը կար միայն մեկ լճացած ճահճին:

Տլուք գավառի Սով դղյակի և շրջակայթի մասին Բարգեն վարդապետի (ապա աթոռակից կաթողիկոս Կիլիկիո) գրած տողերը գնահատելի են. «Այսինքանի հյուսիսային-արեմբույան կողմը. Սև լեռան շղթային վրա՝ կրարձրանան շատ մը սարեր, որ երկու խումբի բաժնված են, Պյոյուք Սոփ և Թյուչյուք Սոփ անուններով:

Մեր հետազոտության տեղագրական բուն կետը Մեծ-Սոփն է, իր այդ գեղեցիկ հովիտով կամ դաշտագետինով, որուն կից, հյուսիս-արևելյան կողմին վրա, կրարձրանա բրգածն բլուր մը կամ սար մը: Այդ բլուրը կամ սարը, որու գագաթին տրամագիծն է 5—6 մետր, հիմա կըսվի «Գալա» (կլա, բերդ, դղյակ):

Եվ իրավի, բլուրի կիսուն վրա, այսինքն մեջտեղերը, պարսպի հետքեր կան. ո՞ գիտեքաներորդ պարսպի, վասնզի գեց կերպով բանդված է բերդը.— Սովէ թի, Կաթողիկոսին բերդին, Փոքրագույն դղյակի ամրություններին մնացած պարիսպներու հետքեր են ատոնք»<sup>35</sup>:

Հիշենք նաև, որ այդ բլուրին վրա գանձ որոնողներու համար անարժեք համարված երկաթի խալ մը գտնվեր է, որ հավանաբար Սով դղյակի Ս. Աստվածածին կամ Ս. Նշան եկեղեցիներեն մեկուն կպատկաների:

Բարգեն վարդապետ Կյուլեսերյանը լճի նմանող Սով մը չէր տեսած Սովդաղ այցելած ժամանակ, որովհետև 1889—1890 թվականներուն Սովդաղ լեռան հյուսիսակողմը տարածվող դաշտագետնի վրա երկրաբանական փոփոխության մը հետեւանքով ճահճիճը ցամքած էր: Մինչև այժմ այս դաշտագետնին վրա ընդարձակ ճահճախուստներ գոյություն ունին: Բնության այս փոփոխության մասին

<sup>35</sup> Բարզեն վարդապետ Կյուլեսերյան, հիշած աղբար տարբյունը, էջ 33:

կյուկեսերյան կնշե, «Բայց 12—13 տարի հառաջ Սոֆի գյուղացիք մեծ զարմանքով կդիտեն, որ ծովացած ջուրը ինքնին կբաշվի, կցամքի, կանչետանա բոլորովին (1889—1890):»

Դաշտագետնին արևմտյան հյուսիսային կողմը, մեջտեղեն, բնական ծակ մը, խառնարան մը բացված է մոտավորապես 10—15 մետր տրամագծով, անշուշտ տեղի տալով իր վրա ժանրացող ջուրի դարավոր ճնշումներուն»<sup>36</sup>:

Սովոր լճի և Սով (Սոֆոր) դղյակի գտնված լեռան ստորոտի ճահճի ջուրերու դարավոր հարափոխի գործունեության պատճառով, այսօր բոլորովին փոխված վիճակով կներկայանա ժե դարու բնության պատկերու:

Այս լեռը, որուն վրա կդտնվի Սով կաթողիկոսանիստ դղյակը, թուրքերը կանխանեն Սոֆոր, որ Սով անվան առավագումն է՝ Սով > Սով > Սոֆ հնչյունափոխությամբ: Հայտնի չէ, թե Սով դղյակի կառուցումն առաջ ի՞նչ անուն ուներ լեռու:

Խսկ հարուերդի մոտակա Սով դղյակի իբրև չին անուն Ստորաբոն (ԺԲ 1) կհիշե Կիրիստրա ձեր: Շփոթության առաջը առնելու համար, չին ժամանակ նույնանուն Կիրիստրա կոչված այժմյան Գոնիայի էրեւին կանխանվեր Կիրիստրա Հերակլիս (*Cybistria Heraclea*)<sup>37</sup>:

Կաթողիկոսանիստ Սով դղյակը ընդամենը կես դարու շրջանի պատմություն մը ունի: Այսուհեն դիմագի իր անունը Սոֆոր լեռան տալու չափ կարենություն ստեղծեր է: ԺԲ դարու երկրորդ կեսեն մինչև մեր օրերը, լեռան Սոֆ անունը պահպանված է:

Հետաքրքրական է զիտնալ, թե ի՞նչ եղավ Տլուրի մոտակա Սով դղյակի վախճանը:

1161 թվականին Մատթեոս Ուտքայեցին և Սմբատ սպարապետի մեր մերը բերած հիշշատկություններեն հետո, Սով դղյակի մասին գրավոր տեղեկություններ չեն հասած մեզ: Միայն ժե դարու սկզբին (Հիշրեթի 803 թ.), էլ-Ասնթապի ժամանակագործ մեայության համաձայն, Սով դղյակի լեռու Սոֆդաղ կամ Սաֆոր կոռ.մեռ Դղյակի երկու եկեղեցիներեն Սովուց Ս. նշանը երկար ժամանակ իր գուությունը առած ըլլարու է, որովհետեւ Ժ դարու հիշատակառան մը կրուե. «Եիշատակ սուրբ ճեղնառութեան դիր ի Սովուց Ս. նշան եկեղեցին»<sup>38</sup>: Ս. նշանի մասին Ժ դարեն հետո որևէ տեղեկություն չունինք:

<sup>36</sup> Թարգեն վարդապետ Կյուկեսերյան, հիշված աշխատություններին գլխավորները միայն. — Գաւեզին վարդապետ Մրգանձայաց, մթորու ազքար», Ա, Կ. Պոլիս, 1879, էջ Ա—Զ և 95—101: Թարգեն վարդապետ Կյուկեսերյան, «Սովք-Տլուր և Հռոմելայ», Վիեննա, 1904: Հ. Նիխա վարդապետ Եփրիկյան, «Բնաշխարհիկ բառարան», Վիեննաիկ, 1907, էջ 429—431: «Հայ խոսնակ», 1927, էջ 156: Խրայան, «Սովք-Կյուլճյուք», էջ 32, 42 և շար.: Գոկտ. Տեր-Գայացյան, «Սովք և Սով դղյակ», «Բազմավեպ», 1949, էջ 105—117: Թախտիկյան, «Հայրենիք ամսագիր», 1952, Գ, էջ 61—71: Մ. Ճիզմենյան, «Խարբերդ և իր վավակները», էջ 39—45, 78: «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1960, էջ 202: Վահե-Հայկ, «Խարբերդ», էջ 586—587, 759:

<sup>37</sup> Արշակ Աղպայանյան, «Պատմություն Հայ Կեսարիո», Ա, Կահիքի, 1927, էջ 428: Ա Պողոս վարդապետ Համբյան, «Խարբերդ և իր վավակները», էջ 45:

Պետրոս Գետաղարձի և մյուս կաթողիկոսներու կուտակած անհամար հարստությունները և սրբությունները պահպանելու համար կառուցված Սով դղյակի շենքերը ԺԶ—ԺԹ դարերու միջև հիմնահատակ կործանած են: Խսկ Սովք լճի Սովք դղյակը և Ս. նշան եկեղեցին 1443 թվականնեն հետո ջրամույն եղած են:

Սելջուկներու Արաքողին Քեյրուրատ սուլթանը (1219—1237) իր գահակալության առաջին տարիներուն զրավից Սովք բերդու ԺԳ դարուն հավանաբար Սովք դղյակը դեռ լճափին կդառնվեր, իսկ Լենկ-Թիմուրի արշավանքներու ժամանակ դղյակը կղզիացած վիճակով կներկայանա ժե դարու բնության պատկերու:

Մեր օրերեն շուրջ 150 տարի առաջ, Սովքի Ս. նշան եկեղեցին գտնված բուրքը պարանցով ցամաքոին միացած էր և թերակղզի ձևացած գամազարք բրածումով, թերակղզին վերածված է կղզիի:

Պետք է հիշել, որ կաթողիկոսանիստ Սովի և Սովք դղյակի առեօծվածի լուծման խնդիրը սկիզբ առավ Գաղեղին վարդապետ Մրգանձատանոսի Սովք լիճ կատարած ճամրորութեննեն հետո: Ապա հարցը հատուկ ուստումնասիրության առարկա դառնուց Բարսեն վարդապետ Կյուլեսերյան, Սով և Հռոմենա հատարած գամազարք կեռպողելով այդ մայրերու: Հետաքանակ սանասերներու կողմեր ռադմաթիկ հռովաճներ և մենագրություններ հրատարակվեցնան<sup>39</sup>:

Սովքաղ լեռան եաթողիկոսանիստ Սով դղյակի և Գրիգորիս Գ Պահավունի ու նիրսես Շնոռնալի կաթողիկոսներու ծննդամայր Սովք լճի և դղյակի մասին Հ. Պողոս վարդապետ Համբեաւանի եատարած ճիշտ վերլուծումը գնահատելի է<sup>40</sup>:

<sup>39</sup> Այստեղ կթվենք այդ աշխատություններին զիսավորները միայն. — Գաւեզին վարդապետ Մրգանձայաց, «Մատթեոս Ուտքայեցին և Սովք դղյակ» Վիեննա, 1904: Ա Պոլիս, 1879, էջ Ա—Զ և 95—101: Թարգեն վարդապետ Կյուկեսերյան, «Սովք-Տլուր և Հռոմելայ», Վիեննա, 1904: Հ. Նիխա վարդապետ Եփրիկյան, «Բնաշխարհիկ բառարան», Վիեննաիկ, 1907, էջ 429—431: «Հայ խոսնակ», 1927, էջ 156: Խրայան, «Սովք-Կյուլճյուք», էջ 32, 42 և շար.: Գոկտ. Տեր-Գայացյան, «Սովք և Սով դղյակ», «Բազմավեպ», 1949, էջ 105—117: Թախտիկյան, «Հայրենիք ամսագիր», 1952, Գ, էջ 61—71: Մ. Ճիզմենյան, «Խարբերդ և իր վավակները», էջ 39—45, 78: «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1960, էջ 202: Վահե-Հայկ, «Խարբերդ», էջ 586—587, 759:


<sup>40</sup> Մանուկ Գ. Ճիզմենյան, «Խարբերդ և իր վավակները», էջ 39—45:

\* \* \*

**Ամփոփելով՝ մեր ուսումնասիրությունը,**  
կրնանք վերջնականապես և անվիճելի կերպով եղողակացնել, թե ներսեն Շնորհալի և Գրիգորիս Գ Պահլավոսնի կաթողիկոսներու ժննդավայրը՝ այժմյան Կյոլճյուք կոշված լճի կղզյակի ստորոտը գտնվող ջրամույն Սովք դղյակը եղած է: Ներսեն Շնորհալիի կլայեցի կոչվիլը այն սխալ կարծիքը ստեղծած է, թե ան ծնած է Հռոմեա: Սովք դղյակը, լճի ջուրերու բարձրանալու պատճառով, ջրամույն դարձած է և անտեսանելի եղած: Լիճը այժմ ունի մոտավորապես 150 մետր խորություն:

Սովքի Պահլավունիներու իշխանական տիրութիւնները իսլամներու կողմե գրավվելե հետո, Պահլավունիները Եղեսիո լատին կոմսերու երկիրը ապաստանեցան և անոնց ծառայության մեջ մտան:

Գրիգորիս Գ Պահլավունի կաթողիկոսը, Աթոռի ապահովության համար, Անթեպի մոտակա Սոֆդաղ լեռան վրա Սովք դղյակը կառուցանել տվավ, բայց հկոնիայի սելցուկներու սպանալիքներու վրա, Հռոմեայի ամուր բերդը տեղափոխվեցավ: Գրիգորիս Գ, ի հիշատակ հայրենի Սովք դղյակի և Ս. Նշան վանք-եկեղեցիի, անոնց անունները նորակառուց դղյակին և երկու եկեղեցիներեն մեկուն տված էր:



## ՀԱՆԳԻՍ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆԻ  
(1914—1963)

1963 թվականի նոյեմբերի 22-ին Թեյրում և կղերական մահով վախճանվեց գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը:

Հանդուցյալը, աշխարհական անոնավ Հայկ, ծնվել է 1914 թվականի Հունվարին, Քիսարում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծիսական դպրոցում, իսկ Հայեափի ամերիկյան կոլեջում՝ իր միջնակարգ կրթությունը, 1924—1932 թվականներին:

Մի տարի իր ծննդավայրում ուսուցչությամբ զրադվելուց հետո, 1933 թվականին ընդունվել է Անթիլիասի դպրեվանքը և 1935 թվականին փայլում Հաջողությամբ ավարտելով դպրեվանքի եկեղեցագիտական և հայագիտական դասընթացը, հունիսին կուսակրոն քահանա է ձեռնադրվել, վերանվանվելով Տ. Դերենիկ արքա, ձեռամբ վերատեսուչ գերաշնորհ Տ. Շահե եպիսկոպոս Գասպարյանի:

Այնուհետև խոստումնալից և պատրաստված, երիտասարդ Հոգևորականի առաջ բացվում է Հովվական, վարչական, կրթական գործունեության լայն ասպարեզ:

1936 թվականին, երջանկահշատակ Տ. Բարդեն աթոռակից կաթողիկոսից ստացել է մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն: Վարդապետական իր ավարտանոր նյութին էր «Ճոթը կաթողիկե թուղթերու մեկնությունը»:

1938 թվականին, իր ուսումը շարունակելու համար մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգները: 1941 թվականին ստացել է աստվածաբանության մագիստրոսի աստիճան, 1942 թվականին վկայվել է Կոլումբիա համալսարանից մանկավարժության մագիստրոսի աստիճանով:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ուսանողության տարիներին ակտիվ մասնակցություն է բերել թեմի ազգային-եկեղեցական կյանքին՝ ծավալելով քայլողական, հրական պարականական բեղուն գործունեություն:



1945 թվականին ուսումը ավարտած, Կիլիկյան Աթոռի նորընտիր կաթողիկոս լուսահոգի Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցի որպես քարտուղար և գավազանակիր, վերադարձել է Աթոռ՝ նվիրվելու ուսուցչական, վանական և վարչական գործունեության:

1946 թվականին նշանակվել է Անթիլիասի դպրեվանքի վերատեսուչ, ուր ծավալել է արդյունաշատ գործունեություն մինչև 1956 թվականը:

1947 թվականի փետրվարին, երջանկահշատակ Տ. Գարեգին լաթողիկոսից ստացել է ծայրագույն վարդապետական իշխանություն և նույն ամսվա 16-ին եպիսկոպոս է ձեռնադրվել Տ. Փառեն, Տ. Զարեհ, Տ. Խորեն և Տ. Ղևոնդ ծայրագույն վարդապետների հետ, Անթիլիասում:

Ամեն աեղ, ուր կոչման ձայնը և ժառայության ոգին նրան առաջնարդել են, Հանգուցյալը եղել է անսպառ եռանդի, անխոնջ աշխատասիրության մարդը՝ Վանական և կրթական ծանր, հոգնեցուցիչ աշխատանքների մեջ, ողբացյալ սրբազնը զարմանալի ջանասիրությամբ ժամանակ է գտել զբաղվելու նաև գրական, մատենագրական աշխատանքներով: Նրա բեղուն գրչին են պատկանում բազմաթիվ հրատարակված արժեքավոր ուսումնասիրություններ, հայերեն և անգլերեն լեզուներով, որոնցից կարելի է հիշել Բարգեն կաթողիկոսի «Հայոց Եկեղեցի» գրքույի անգերեն թարգմանությունն ու հրատարակությունը, «Հայոց Եկեղեցի» հավատուխոսովանությունը ըստ Ներսես Շնորհավոյ, «Քաղկեդոնական բանավեճերը հայկական առբյուրներու՝ Գիրք թիթոցի համաձաւն», «Հայաստանյաւաղ Եկեղեցին դաստիարակչական դերը», «Մաղկաքաղաքական մատուցած աշխատանքները»:

Ժամագրաց և ի պատարագամատոյց մատենք, «Հոգիներուն համար», «Թուղթ հերքման», «Հերկիր հայրենին» և այլ արժեքավոր պատմական, աստվածաբանական, բանափրական երկասիրություններ:

Վերջին տարիներին հանգուցյալ սրբազնը ձեռնասորեն վարել է Արդիս-Արեգայում եթովպական աստվածաբանական վարժարանի վերատեսությունը:

Դերենիկ սրբազնը համակ աշխատանք էր, շարժում, կյանք և գործ:

Նա իր աշքերը փակում է իր ուժերի ժաղկման, գործունեության և հասունության շրջանում:

Նրա ողբերգական մահը կրուստ է Հայատանլայց Եկեղեցու համար:

Նրա ավելի քան 25 տարիների եկեղեցական, կրթական և գրական բեղուն գործունեությունը գեղեցիկ և անթառամ լուսապսակ են կազմել նրա անվան և կյանքի շուրջ:

«Երանի մեռելոցն որք ի Տէր ննջեցին..., քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործը իւրեանց շուրջ զհետ նոցա» (Յայտնթ. ԺԴ 13),

Մեռավ գործի մարդը, բայց մնաց գործը:

Դերենիկ սրբազնի հիշառակը անթառամ կմնա իր բազմաթիվ աշակերտների, բարեկամների և երախտագետ հայ ժողովրդի սրտում:

Կողմանկ և աղոթք նրա անթառամ հիշատակին:



Հ Ա Ն Գ Ի Ս

Հ. ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԿԻՆՅԱՆԻ  
(1883—1963)


1963 թվականի հոկտեմբերի 28-ին Վիեննայում մահացավ Վիեննայի Մխիթարյան միաբանության ավագագույն անդամ և ժամանակակից հայագիտության մեծագույն մշակներից մեկը՝ Հայր Ներսես վարդապետ Ակինյանը:

Մայր Աթոռում նոյեմբերի 11-ին ստացվեց մահաղդ՝ մեծ հայագետի մահը գումարող նույն օրը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, Վիեննայի Մխիթարյան միաբանության արքահայր գերապետառ Սեսրոպ արքեպիսկոպոսության հայողական անվամբ, ուղարկեց հետևյալ ցավակցական հեռագիրը.

«Այսօր ստացանք միաբանությանդ ուղարկած մահաղդը: Հանուն Վեհափառ Հայրապետի, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Ս. Էջմիածնի միաբանության, Հայտնում ենք մեր խորին վշտակցությունը վաստակավոր վանականի և հայ մշակույթի անխոնջ մշակի՝ Հայր Ներսես Ակինյանի մահվան տիտուր առիթով: Իր մահը անփոխարինելի կորուստ է մեր ազգային մշակույթի համար և իր անունը պիտի անշնչելի մնա հայ մշակույթի պատմության ոսկյա մատյանում: Թող Տերը լուսավորի իր արդար հոգին և արժանացնի երկնային արքայության: «Ճիշտառակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

\* \* \*

Հ. Ն. Ակինյանը, աշխարհական անունով Գարրիել, ծնվել է Վրաստանի Արդվին քաղաքում 1883 թվականի սեպտեմբերի 10-ին: Նախնական կրթությունը իր ծննդավայրում ստանալուց հետո, 1895 թվականին անցնում է Վիեննայի Մխիթարյան հայկական վարժարանը, ուր հետևում է աստվածաբանության, փիլիսոփայության, բանասիրության, հին ու նոր լեզուների դասերին: Սակայն ապագա մեծանուն հայագետը ինքնօգնությամբ էր որ տիրացավ իր բանասիրական խոր հմտու-



թյանը: Այդ գործին մեծագիս նպաստեցին նաև աբբահայր Հ. Արսեն Այտընյանի, Հ. Գրիգորիս Գալեմբյարյանի, Հ. Գաբրիել Մենեկիշյանի և Հ. Հակոբոս Տաշյանի նման բազմաբեղում գիտնականների կողմից միարանության ներսում ստեղծված գիտական բարձր միջավայրը, որի շնչով էլ դաստիարակվեց ու մեծացավ դեռատի Գաբրիելը: Իր վրա խոր ազդեցություն թողեցին նաև օտար նշանավոր հայագետների գործերը և հատկապես հայ ճարտարապետության անվանի ուսումնասիրող Հովսեփ Ստրչիգովսկու մոտ ունկնդրած դասերը:

1907 թվականին նա ձեռնադրվում է քահանա և զառնում է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ: Հ. Ակինյանը շուտով նշանակվում է ուսուցիչ կղերանոցի, որից հետո դառնում է փոխ-տնօրին (1908—1911) և ապա տնօրին (1916—1920) ու մատենադարանապետ: Նա լինում է նաև ընդհանուր վարչության անդամ 1931 թվականից ի վեր, Մայր վանքի մեծավոր (1931—1937), հյուրընկալ և այլն:

Դեռևս 1903 թվականին սկսվում է Հ. Ն. Ակինյանի աշխատակցությունը Վիեննայի Մխիթարյան միաբանության պաշտոնաթերթ «Հանդես Ամսորյա» պարբերականին, իսկ 1909 թվականին դառնում է նրա խմբագիրը և շուրջ կես դար վարում է այդ պաշտոնը մեծ ձեռնաստությամբ: Հ. Ակինյանի օրոք է, որ «բարոյական, ուսումնական, արկեստագիտական» այդ հանդեսը, որը նախապես բովանդակում էր նաև հայագիտության հետ ու մի կապ չունեցող բազմաթիվ նյութեր, ստացավ իր դիմագիծը և դարձավ «Հայագիտական ուսումնաթերթ» և նրա շնորհիվ էլ նա մնաց այդպիսին մինչև այսօր և իրավամբ համարվեց հայագիտության ամենակարևոր պարբերականը բովանդակ Եվրոպայում:

Հ. Ակինյանը եղել է նաև մանկավարժ: Նա հանդիսացել է հայ մշակույթի շերմեռանդ քարոզիչներից մեկը, հայագիտական բազմաթիվ ելույթներ է ունեցել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և մինչև Նեղոսի հովտում գտնվող հայ գաղթավայրում:

Սակայն հիմնականում Հ. Ն. Ակինյանի տաղանդը փայլեց պատմա-բանասիրական գործերում: Նա համար ու տքնաշան աշխատանքների շնորհիվ դարձավ Հ. Հակոբոս Տաշյանից հետո Վիեննայի Մխիթարյանների ամենահայտնի գիտական ու ներկա հայագիտության սյուներից մեկը: Դեռ վաղ հասակում Հ. Ակինյանը սկսեց կազմել իր հայագիտական հետագա ուսումնասիրությունների համար օժանդակ մի հովակապ գիտական ապարատ, որի նմանը մեր շատ քիչ հայագիտներին վիճակվեց ունենալու նա անհուն շանասիրությամբ պրատելով հայ բովանդակ մամուչի էջերն ու հնատիպ և նոր գրականությունը և օտար հայագիտական գործերը, իրեն համար պատրաստեց քարտարաններ՝ այնտեղ նշելով հայ բանասիրության հետ այս կամ այն կերպ առնվլող բոլոր նյութերը: Նույն ձևով նա վերաբերվեց մեր ժողովրդի հոգմոր գանձերի՝ ձեռագրերի նկատմամբ: Պետք է նշել, որ Հ. Ն. Ակինյանը, Գարեգին Ակինյանը և առաջնային գործականության հայագիտական պատմականության հայ գրախոսական, վարքարանական, ձեռագրագիտական, լեզվաբանական, արկեստի, հնագրության, հայ իրավունքի, թարգմանական, հայ գաղութների պատմության և հայագիտության հետ առընչ-

յաստանում 1912 թվականին, սակայն ժամանակ չունեցավ ուսումնասիրելու էջմիածնի ձեռագրերը: Այդ պատճառով էլ, «Այնուհետև սրտի մեջ կրող որդ մ'եղած էր այս ցանկությունը», — գրում էր Հ. Ակինյանը. և նա 1924—1928 թվականներին բախտը ունեցավ հայրենի կառավարության կողմից հրավիրվելու և երկար ժամանակ պրատուաներ կատարելու այդ Մատենադարանում: Նա այդ տարիներին, գիշերը ցերեկին խառնելով, էջմիածնուում, Երևանում, Մոսկվայում և առանձին անձանց մոտ ուսումնասիրում է 5000 ձեռագրեր: Նա ձեռագրական որոնումներ է կատարում նաև Թեոդինի, Մյոմիսինի, Տյուրինգենի, Փարիզի, Լեհաստանի, Հռոմի և կայունության մատենադարաններում: 1939 թվականին Հ. Ակինյանը սկսում է ուսումնասիրել Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի հայերեն ձեռագրերի ցուցաները, Զմմառում ցուցակագրում է նախապես Անտոնյան միաբանության մոտ պահպատճեն ձեռագրերը, ուսումնասիրում է Հայեապի գրագրերը, ապա անցնում Կիպրոս, Կահիրե, Թեյրութ և Անթիլիաս, ցուցակագրելով նաև այդ վայրերի ձեռագրերը: Այսպիսով, տարիների ընթացքում Հ. Ակինյանը ուսումնասիրել է ավելի քան 8000 ձեռագրեր: Մրանց մեջ չեն մտնում հազարավոր այն ձեռագրերը, որոնց նա ծանոթացել է անտիպ ցուցաներից և «Հավաքումն հիշատակարան» ձեռագրերի հայոցակարանների հարուստ ժողովածուն, որի կազմման աշխատանքները սկսել էր դեռևս 1907—1908 թվականներից:

Իրու հայագիտության բազմավաստակ մշակներից մեկը, Հ. Ակինյանը հեղինակել է 500-ից ավելի գիտական աշխատություններ, այդ թվում 50-ից ավելի ծավալուն մենագրություններ, որոնցից յուրաքանչյուրը հարյուրավոր էցեր է բովանդակում: Նոր գրչին են պատկանում նաև ավելի քան հարյուր գրախոսություններ և անվանի հայագետների մահախոսականներ և մատենագիտությունների, որոնք ուսումնասիրությունների արժեքը ունեն:

Նա հեղինակ է պատմական, բանասիրական, մատենագիտական, միջնադարյան հայ գրականության, հայրախոսական, վարքարանական, ձեռագրագիտական, լեզվաբանական, արկեստի, հնագրության, հայ իրավունքի, թարգմանական, հայ գաղութների պատմության և հայագիտության հետ առընչ-

վող բազմապիսի գործերի:

Հ. Ակինյանի գիտական ժառանգության վերնագրերի թվարկումն իսկ անհնարին է այս ամփոփ մահախոսականում, ուստի բականանում ենք միայն նրա մի շարք առա-

վել աշքի ընկնող գործերի մասին նշումներ ասելով՝ կարևոր են Հ. Ակինյանի կողմից կատարված հայտարերությունները հին հայկական թարգմանությունների շարքում։ Նա գտավ ասորերեն կրկնագիր մի ձեռագրում Հովհաննես Խոկերերանի Սալմոսաց մեկնության հայերեն թարգմանությունը կատարված ե դարրում, Ս. Եփրեմի Գործք Առաքելոցի մեկնության հայերեն թարգմանությունը՝ Վիճակի Սխիթարյան Մատենադարանում, Ս. Եփրեմի Կցուրդի Ա-ժե կցուրդները՝ Կիպրոսի մի ձեռագրում, Թեովունի «Վասն ճարտասանական կրթութեանց» գործը թարգմանված Զ-է գարերին՝ Երևանի ձեռագրերից, Դիոնիսիոս Աղեքսանդրացու «Թուղթ վասն ապաշխարտվեան առ Մելրուժան Հայոց եպիսկոպոս» գրված 250—257 թվականներին, «Մակար Բ Երուսաղմացու թաղթն առ Վրթանէս Սիմեաց եպիսկոպոս», և այլն։ Հ. Ակինյանի կողմից հայ հեղինակների գործերի հայտարերություններից են Հովհաննեսու Բանին մարմնագրության մասին մի գրվածքը, Սիմեոն Լեհացու «Ուղեգործիմա»-ը, որը թանկագին ականատեսի տեղեկություններ է բովանդակում բազմաթիվ հայ գաղղթավայրերի մասին, և այլն։

Արժեքավոր են Հ. Ակինյանի մատենագրական գործերը, Սյա առումով առաջին հերթին աշքի են ընկնում նրա «Մատենագրական հետազոտություններ» խորագրով 5 ստվար հատորները, ուր ի մի են բերված մինչ այդ հաճախ սիայն իրենց անոններով հայտնի մի շարք հայ մատենագիրների կյանքի որ նաև ուղղության ուսումնասիրումը և նրան մատենագրության հրատարակումը։ Ակինյանի նպատակն է եղել նման աշխատություններով գլուխ հանել իր երկար տարիների մտասնեռումը եղող հայ մատենագրության քննական պատմությունը։ Կարևոր են նաև նրա «Ներսես Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի, կենսագրությունն ու գրական վաստակը», «Երեմիա Զելերի Քյոյմյուրճյան, կյանքն ու գրական գործունեությունը», «Սիմեոն Պղնձահաննեցի և իր թարգմանությունները վրացերենե» և այլն։ Շատ կարևոր են նաև Հ. Ակինյանի աշխատությունները նվիրված միջնադարյան հայ տաղասացների կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությանը, Այդ շարքից են՝ «Գրիգորիս Աղթամարցի (+1540) և իր տաղերը, բնագիր և քննություն», «Հինգ պանդուստ տաղասացներ» (Վրթանէս Սրնկեցի, Մինաս Թոխաթեցի, Մտեփանոս Թոխաթեցի, Յակոբ Թոխաթեցի, Ղաղար Թոխաթեցի), «Հովհանթան նաղաշ և նաղաշ Հովհանթանյանք և իրենց բանաստեղծական և նկարչական աշխատությունք և այլն։

Նրա պատմագիտական գործերից են՝ «Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոս Հայոց հեղմածին և յուր ժամանակը (1577—1633)։ Նպաստ մը Հայոց Եկեղեցվո պատմության», «Կյուրին կաթողիկոս Վրաց. պատմության հայ վրական հարաբերությանց», «Գավազանագիրք կաթողիկոսաց Աղթամարա. պատմական ուսումնասիրություն», «Բաղեշի դպրոցը (1500—1704). նպաստ մը Հայոց Եկեղեցական պատմության և մատենագրության» և այլն։ Ակինյանի պատմագիտական մատենագրական բնույթի մի քանի ուսումնասիրությունները իր ժամանակին հայագիտության մեջ մեծ վիճաբանությունների տեղիք են տվել, քանի որ նա առանց հաստատ կովանների փորձել էր իրենց ընդունված ժամանակաշրջանից հեռացնել և ավելի նոր ժամանակների վերագրել ինչպես Մովսես Խորենացու, այնպես էլ Եղիշեի պատմությունները։

Ակինյանի ձեռագրագիտական գործերից են՝ Լովովի համալսարանի և Ստանիսլավովի, Կիպրոսի Նիգոդիա քաղաքի, Հռոմի հայոց Ս. Վլաս Հյուրանոցի և գարձյալ Հռոմի Լևոնյան հայկական վարժարանի ձեռագրական գործերից կիտական ցուցակների հրատարակումը։

Լեզվաբանական գործերից են Հ. Ակինյանի «Դասական հայերէնը և վիեննական Միթթարյան դպրոցը» և այլ աշխատություններ։ Նա գրադիւն է նաև հայ արվեստի, հնագրության և մանրանկարչության վերաբերյալ նյութերի ուսումնասիրությամբ, այդ գործերից է, օրինակ, «Վկնուայի Ավետարանը 1197 թուրականներ լովովի հայ արքեպիսկոպոսարանի գրադարանին մեջը գործը, և այլն։

Ինչքան պատկանելի է Հ. Ակինյանի տպագիր աշխատությունների թիվն ու արժեքը, մոտավորապես նույնքան մեծ է նաև նրա անտիպ գործերի նշանակությունը։ Այդ առումով նրա կոթողական գործն էր լինելու հայ մատենագրության քննական պատմությունը, որն ընդգրկելու էր Ե դարից մինչև 1800 թվականը ընկած ժամանակաշրջանի մեր գրականության համապատկերը։ Շուրջ կես դար Հ. Ակինյանը տքնում էր իր այդ մեծ գործի վրա, որը բաղկացած էր լինելու երեք ստվար հատորներից։ Իր գործը խարսխելով ձեռագրական հարուստ նյութերի վրա, նա բազմաթիվ նոր գիմեքեր ու նոր գործեր էր ի հայտ բերելու Հ. Ակինյանի անտիպ մնացած գործերից են նաև Գավագանագիրք հայ կաթողիկոսների 220 թվականից մինչև մեր օրերը եկեղեցապատմական և ժամանակագրական ուսումնասիրությունը, Պատմություն հայ թարգմանության օտարալեզու քնագրերի (408—1800), մեկ հատոր, Հ. Գրիգորիս Գալմբյառյանի հետ կազմած հայերեն հնատիպ

գրականության 300 տարիներին (1512—1812) նվիրված մեկ հատորանոց գործը, ինչպես նաև՝ Կրիմի հայ գաղթականության ժամանակագրությունը (1300—1700), և բազմաթիվ բնագրագիտական աշխատությունները:

Հիշյալ գործերը, եթե նույնիսկ չեն ավարտվել, անհրաժեշտ է հանձնել տպագրության՝ ի հավերժացումն անվանի գիտնականի հիշատակի և, ինչպես սիրում էր գրել Հ. Ակինյանը, «Ամենայն ինչ հօգուտ և ի պայծառություն տոհմային մատենագրության»:

Հ. Ակինյանի ուսումնասիրությունների մի կարևոր մասը ցըված է ինչպես սփյուռքահայ, այնպես էլ օտար պարբերականներում. նրանց ի մի հավաքումը «Մատենագրական հետազոտություններ»-ի մեկ կամ երկու նոր հատորներում, մեծապես կհեշտացներ հայագիտությամբ զրադվոյների աշխատանքը:

Մեծանուն հայագետը գնահատված էր նաև օտար գիտական հասարակայնությունների կողմից: Պետք է նշել, որ բազմաթիվ գիտական պարբերականների խմբագրություններ հաճախ նրան էին դիմում և խնդրում իր աշխատակցությունը: Նույնպես իր գիտական գործունեության 50-ամյա հորելյանի առթիվ, Վիեննայի համալսարանի ակադեմական ծերակույտը, շատ բարձր գնահատելով Հ. Ն. Ակինյանի արևելագիտական-հայագիտական բազմաբեղուն աշխատությունները, 1954 թվականի դեկտեմբերի 1-ին հատուկ նիս-

տում շնորհեց նրան փիլիսոփայության պատվավոր դոկտորի կոչում:


Չնայած, որ բազում տարիների տքնաջան աշխատանքի արդյունք էին հանդիսանում իր գործերը, Հ. Ակինյանը ամենայն համեստությամբ գտնում էր, որ իր արագ գործը լոկ սկիզբն է այդ աշխատանքի: «Հավակնություն չունիմ պարծելու թե կատարյալ գործ մը հրապարակ կդնեմ, բայց հավատացած եմ, որ այս աշխատությունս հիմք պիտի ըլլա կատարելագույնի մը».— այսպես էր գորում նա ներսես Լամբրոնացու կյանքին ու գործունեության նվիրած իր ծավալուն գործի առաջարանում. և կամ,— «Ինչ որ ինձ հաջողեցավ վեր հանել, կմաղթեմ որ հաջողեր ուրիշներում, միշտ ի պարծանս հայ մշակույթին»,— գորում էր դարձյալ Հ. Ակինյանը Բաղեշի գպրոցին նվիրած կարևոր գործում:

Հայր ներսես Ակինյանը իր վերջին տարիներին, չնայած իր խոր ծերությանն ու վատթարացող առողջական վիճակին, «Հանդես Ամսօրյա»-յում գրած իր զրախոսականներով մեծ հրձվանք էր ապրում Մայր Հայրենիքում լույս տեսնող հայագիտական գործերի համար և ոգևորում երիտասարդ հայագետների աշխատանքը:

Բազմավաստակ գիտնական Հ. Ներսես Ակինյանի հիշատակը միշտ վառ կմնա և նրա գիտական վաստակը իր արժանի տեղը կգրավի մեր մշակույթի պատմության էջերում:

Ս. Ք.





## Ս Փ Յ Շ Ո Ւ Ռ Ո Ւ Մ

### ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿՑԱՆՔ

ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՑ  
ՍՈՒՐ ԱՍՏՎԱԾԱԽԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՕԸԼԻՄԸ

1963 թվականի նոյեմբերի 10-ի կիրակին եղել է անոռանակի և հիշատակելի օր Ամերիկայի հայոց թեմի և մասնավորապես Վաշինգտոնի հայերի համար: Առաջին անգամը լինելով, Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաքում Հայաստանայց Առաքելական Եկեղեցին ունենում էր իր գալերու աղոթատունը և ապահին սրահը:

Չարաբ, նոյեմբերի 9-ին, թեմակալ առաջնորդ գերաշնորհ S. Սիլոն արքեպիսկոպոս Մանուկյանը Վաշինգտոն է ժամանել, ընկերակցությամբ առաջնորդական փոխանորդ Բոգեզչորհ S. Եղիշե վարդապետ Կիրիլյանի և արքանապատիկ S. Լուր քահանա Առաքելական և նախագահել նորակառուց Եկեղեցու նավակատյաց և կիրակամտի արարողութանց:

Հաջորդ օրը, կիրակի, նոյեմբերի 10-ին, առաջնորդ սրբազն հայոց, իր շորջն ունենալով հոգևորական հասուն, կատարել է նորակառուց Եկեղեցու օծումը և օծման կնքահայր պր. Նշան Հինդլանի ու նրա տիկնոց փափագին ընդառաջնորդ, Եկեղեցին կոչել U. Աստվածածին:

Տաճարը լին է եղել խուռներամ հավատացյալներով: Սուրբ պատարագի ներդաշնակ Երգեցողությունը կատարել է տեղի երգախումբը, զեկավարությամբ պր. Երվանդ Սուրյանի: «Հայր մեր»-ից առաջ առաջնորդ սրբազնը իր քարոզում վեր է առել Հայաստանայց Առաքելական Եկեղեցու դեր պատմության ընթացքում և նրա կարևորությունը Ամերիկայի հայության համար և մանավանդ երկիր մայրաքաղաքում, որտեղ մի խումբ հայեր ցանկացի են վաս պահել U. Գրիգոր Լուսավորչի կանթեղը:

Հավարտ սուրբ պատարագի, Եկեղեցու ներքնասրանում տեղի է ունեցել ճաշկերությ նորմակառուց Եկեղեցու օծման առթիվ: Ճաշկերութիւն մասնակցել են բազմաթիվ հավատացյալներ: ճաշկերութիւնը ընթացքում խոսողները վեր են առել կատարված գեղեցիկ գործի արժեքը և ժողովողի զոհողության բաժինը:

Թո՞յ Տերը օրինի հիշատակը և ողորմի «Եկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուից և ախոցիկ որք ընդհանուր սրբոյ Եկեղեցու են հանգուցեալ»:

ՍՓՅՇՇՈՒՌՈՒՑԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ  
ՀԱՄԲԱՐԱԿՈՒՄ ԲԵՐԲԵՐՅԱՆԻ  
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԵՐԴԱԲՈՒՄ

1963 թվականի հոկտեմբերի 27-ին, կիրակի, սփյուռքահայ անվանի կոմպոզիտոր Համբարձում Բերբերյանը, Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդարանի օժանդակ միության նախաձեռնությամբ և թեմական առաջնորդ գերաշնորհ S. Սիլոն արքեպիսկոպոս Մանուկյանի նախագահությամբ, Նյու-Յորքի Հունտեր կոլեջի հանդիսարանում, առաջնորդարանի «Կոմիտաս» և Նյու-Ինգլենդի երգչախմբերի և 25 հոգուց բաղկացած նվազախմբի մասնակցությամբ տվել է հեղինակային ծոխ համերգ, որին ներկա է եղել ավելի քան հազար հոգի:

Համերգն սկսվել է Սիլվա Կապուտիլյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծության վրա հորինված խմբերգով, որը ողջունվել է բուռն ծափակարություններով:

Ֆլորա Մարտիկյանը երգել է «Ուրախ Եր» շարականը և «Աչքեր» մեներգը, դաշնամուրի ընկերակցությամբ Մարգարիտ Ջյուրծյանի, որից հետո երգայինումը և նվազախմբը կատարել են «Սարերի աղջիկ»-ը:

Մարգարիտ Պապիկյանը երգել է Կահան Թերեյանի «Կանծնեն, տղա» բանաստեղծության վրա դաշնավորված մեներգը:

Հայտագիր առաջին մասի վերջում, երգախմբի և նվազախմբի կատարմամբ, մնչել է «Խորիուր Վարդանանց» կանտատան, որի մեջ մեներգի բաժիններ են վեցրու Դորիս Անարունյանը (սոպրանո), Ֆլորա Մարտիկյանը (մեցցո-սոպրանո), Վարուժան Արսլանյանը (տենոր) և Զորշ Հարությունյանը (բաս):

Համերգի երկրորդ մասն սկսվել է Ազնես Հակոբյանի կատարմամբ «Ենք մը զաղտին» մեներգով, որից հետո հանդես են եկել Մերի Մելիքինյանը և Վարուժան Արսլանյանը «Ուկի երավ» կուգերգով:

Կոմպոզիտորի որդի Վահե Բերբերյանը թամշութակի վրա վարպետորն կատարել է «Աղաջո քանթարին» և ըն սպիրիտու կոնցերտը:

Ապա նվազախմբի ընկերակցությամբ կատարվել է Եղիշե Չարենցի «Գովել Հայաստան» բանաստեղծության վրա հորինված խմբերգը, որը բուռն ծափակարին ներբեր կրկնվել է:

«Թեզուկ քու քաշըն մարդիտ տան» և «Զմրովիտ սարերից հովեր կուզան» մենագրերից հետո երգչախումբը կատարել է մի հատված «Արեգնապան» օպերայից՝ «Դառնում է կավից իշխան թաթուլը», որից հետո կատարել է «Հայոց Համբարձումը». խմբերգը («Հոյնար»):

Նույն օրը, ժամը 7-ին, Նյու-Յորքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հանդիսասրահում, ի պատիվ կոմպուտորի և խմբավար Հ. Բերբերյանի և երգչախմբի անդամների, տրվել է ճաշկերություն, որին ներկա է եղել շուրջ 300 հոգի: Նախագամիել է առաջնորդ սրբազն հայոր: Ճաշկերությունը ընթացքում խոր են առել եկեղեցու նովիլ Տ. Կարեն քահանա Կոտայշյանը և թեմական խորհրդի առենապետ Տ. Առնակ քահանա Գասպարյանը: Հովու-

մով խոսել է կոմպուտոր Հ. Բերբերյանը, որն անդրադարձել է առանարակ հայ մշակույթի և մասնավորապես հայ երգի և երաժշտության ունեցած դերի մասին հայ ժողովի կյանքում: Նա խոսել է Երևանում տված իր ինդինակային համերգի մասին և վերջում հաղորդել, թե Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինհատրության պատվերով, արդեն իսկ ծեսնարկել է հորինելու «Վարդանանք» օպերան:

Առաջնորդ սրբազն հայոր շնորհավորը է կոմպուտորին և երգչախմբի անդամներին հաջող համերգի համար և օրինել բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են բերել հայ մշակույթի փառատոնի աթիվ տրված այս համերգին:

## ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԿՑԱՆՔ

### ԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵՇՆՈՐԾ Տ. ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԻԱՊԵՏԻ ԱՅՅԵԼՈԹՅՈՒՆԸ

Ուսմանահայ և բուլղարահայ թեմերու բարեխնամ առաջնորդ հոգեշնորդ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյան 1963 թվականի սեպտեմբեր 23-ին Սոֆիա ժամանեց Ինուսեն, ուր պատարագած էր օր մը առաջ Բուլղարիան գալով:

Առաջնորդ հայր սուրբը օդանավակայանին մեջ ընդունվեցավ թեմական խորհուրդի և եկեղեցական վարչության ներկայացուցիչներու կողմեն: Նույն օրը առաջնորդ հայր սուրբը նախագամիեց թեմական խորհուրդի նիստին, ուր թեմական կարևոր հարցեր:

Ընդառաջնորդ Պոլվիդի եկեղեցական վարչության խնդրանքին, Տ. Տիրայր վարդապետ սեպտեմբեր 28-ին նույն քաղաքը այցելեց ու հաջորդ օրը՝ 29 սեպտեմբեր կիակի, պատարագեց ու քարոզեց տեղիուն եկեղեցին մեջ Տ. Գևորգի տոնին առիվի, որ եկեղեցը անվան տոնն է: Առաջնորդ հայր սուրբը իր կուռ քարոզով միշտ-թարց եկեղեցին ու բակը լեցնող խուսներամ հավատացրաներու ո օրինեց մասուղը:

Նույն երեկո, Սոֆիայի ճամբար Բուլղարիա վերադարձավ հայր սուրբը, կալարանին մեջ ողջեր մաղորդ պաշտոնական մարմիններու ներկայացուցիչներեն հրաժեշտ առնելով:

### ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴՑԱՆ 250-ԱՄՅԱԿԸ ՍՈՅԻԱՅԻ ՄԵԶ

Խաղաղության բուլղարական պագային կոմիտեի, Բուլղար-սովորական բարեկամության համաժողովրդական կոմիտեի, բուլղար գրուներու միության և բուլղարահայ «Երևան» մշակութային միության նախաձեռնությամբ, 1963 նոյեմբեր 2-ին, Սոֆիայի բուլղար-սովորական բարեկամության տան մեջ, տոնվեցավ հայ հանճարեղ բանաստեղծ-երգիչ, մեծ մարդասեր Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը:

Բեմին վրա զետեղված էր հայ ժողովուրդի անմահ զավակի գոմազեղ մեծադիր նկարը:

Նախագամիության սեղանի շուրջը տեղ գրաված էին նախաձեռնող պաշտոնական մարմիններու ներկայացուցիչները, ինչպես նաև Խաղաղության սովորական կոմիտեի պատասխանատու քարտուղար Մ. Կոտովը և Սոֆիայի սովորական դեսպանատան քարտուղար Ա. Բիրյուկովը:

Խախագամիության հայտնի գրող Մ. Խաչի բացման խոսքերն նետու, Սայաթ-Նովայի կյանքը ու գործունեությունը վերը մեծ հայտնի բանաստեղծ Լամար (Լայու Մարինը):

Գեղարվեստական հայտագրին մեջ տեղ գտած էին անմահ երգչի ստեղծագործական կտորները, որոնք արտասանվեցան ու երգեցան հաջող կերպով: Արտասանվեցավ նովյան Սայաթ-Նովայի «Քամանչա» բանաստեղծության ոռուերն թարգմանությունը (Վ. Բրյուսով), վաստակավոր արտիստունի Տանյա Մասայիտինովայի կողմեն: Բոլոր կատարողները գնահատվեցան բուռն ծափարարություններով, լեցուն սրամի հուկելով:

Խոսնակ Մ. Պողոսյան մեծ ծեսնասությամբ տվալ հայերն յուրաքանչյուր արտասանության և երգի բովածություն ամփոփումը, մեծ գործունակություն պատճառելով բազմաթիվ բոված հանդիսականներուն:

## ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ «ԵՐԵՎԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՒՈՒԹՅԱՆ ԿՈԼԱՐՈՎԳՐԱԿԱՆ ԵՐԳԻ ԵՎ ՊԱՐԻ ԱՆՍԱՄԲԼԻ ԱՅՅԵԼՈԹՅՈՒՆԸ

Բուլղարահայ «Երևան» մշակութային միության Կոլարովգրակի մասնաճյուղի երգի և պարի անսամբլը իր գեղարվեստական բարձր մակարդակով գրաված է ամբողջ հայ գաղութի համակրանքը: Եվ ոչ միայն հայ գաղութի:

Հավակի 500 հոգի համրոդ հայ գաղութի բուլղարանչյուր ընտանիքը հավաքված երկսեռ երգիչներով, պարուներով ու նվագուներով կազմված անսամբլը ունի շուրջ ութուուն երկսեռ անդամներ: Անսամբլին մեջ կարենի է տեսնել երկու երգայիներ, բուլղար, ծնողներ և զավակներ, որոնք անձնվեր աշխատանքով խոմբը կապահն բարձր մակարդակի վրա: Կոլարովգրակի շրջանի հայ, բոված:

թուրք բնակչությունը աշքի լուսի պես կգուրգուրա հայկան անսամբլին վլու, որու հայտագրին մեջ տեղ գտած են առավելապես հայկական, բուլղարական, ուսկան և ադրբեջանական երգեր ու պարեր:

Անսամբլը արժանացած է ռեսպոնդիկական ֆեստիվալի առաջնության ու կրկնակի մելանակիր է:

Անա այս անսամբլը 1963 տարվան նոյեմբեր 10-ին Պյովիդիի և հաջորդ օրը, նոյեմբեր 11-ին, Սոֆիայի պետական երաժշտական թատրոնի սրահին մեջ փայլուն հաջողությամբ համերգ տվավ:

Խնչվեն Պյովիդիվ 700, նույնական և Սոֆիայի 1 100 տոմսերը օրեր առաջ սպասեցան ու շատեր ուժի մացին:

Անպատմելի խանդառության մթնոլորտի մեջ անսամբլի համարներն շատեր կրկնվեցան ներկաներու բուռն փափառք:

Անսամբլի բարձր դրակին գլխավոր ղեկավարն է պարի մասնագետ Սիրիկարդ Զիջինկիրյան, շքանշանակիր, որ ներկայիս Երևան կատավի իր գիտելիքները թարմացնելու և ճոխացնելու համար:

Համերգի խոր տպագրության տակ, հայ և բուլղար հանդիսականներ անհամբեր կսպասեն անսամբլի հաջորդ այցելության:

ԹՂԹԱԿԻՑ

## ՌՈՒՄԻՆԱՀԱՅԱՅ ԿՅԱՆՔ

### ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՇՆՍԴՅԱՆ 250-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՄԵԶ

1963 թվականի նոյեմբերի 14-ին, Բուխարեստ քաղաքի պատմության թանգարանի համեստարանում, տեղի ունեցավ հայ ժողովորդի հանճարեղ զավակ, բանաստեղծերից Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի տոնակատարությունը, Նախաձեռնությամբ Ռումինիայի պատմա-քանակական ուսումնասիրությանց ընկերության արևելագիտական բաժանմունքի:

Հանդիսության ներկա էին ոռմեն արվեստի և գրականության բազմաթիվ ներկայացուցիչներ և հայ հասարակությունը:

Արևելագիտական բաժանմունքի նախագահ Միհրայիլ Գուբրուլու կատարեց բացման խոսք: Նախագահի հրավերով, հոտնկայս լուսիքամբ հարզվեց ոռմեն անվանի հայագետ ողբացյալ պրոֆ. Վլադ Բընըցեանովի հիշատակը, որ առաջին նախագահն էր բաժանմունքի: Կարդացվեցին պրոֆ. Վ. Բընըցեանովի մահվան առիթիվ բաժանմունքին ուղղված ցավակցական հեռագերերը:

Միհրայիլ Գուբրուլու խոսք «Սայաթ-Նովայի իդրը ժողովուրդներու եղբայրության շաղախման մեջ» նյութի շուրջ:


Բաժանմունքի անդամ տիկին Էջենիու Պոպեսկու-Ժուզեպը խոսեց «Ժողովրդական երգիչները Արևելքի մեջ, հայ երգիչներ Գոյքան գուսաններն մինչև մեր օրերու աշուղները, նվազարանները, որ գործածած են անոնք, բանաստեղծական ծևերը, որոնցմով նորինած են իրենց երգերը, եղանակները, որոնցմով այլ երգերը կատարված են և հայ ժողովրդական երաժշտության նետքերը Սայաթ-Նովայի երգերուն մեջ» շանեկան նյութի շուրջ:

Բաժանմունքի հայկական ճյուղի վարիչ Հ. Զ. Սիրումյան խոսք «Սայաթ-Նովայի կանքն ու գործը, Սայաթ-Նովայի լեզուն, ոճը և արվեստը, Սայաթ-Նովայի իրեն սիրուերից, բնությունը Սայաթ-Նովայի երգերուն մեջ, հասարակական տարրերը Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ, Սայաթ-Նովայի իրեն Կովկասյան ժողովրդիներու երգիչ, համամարդկային լարը Սայաթ-Նովայի երգերուն մեջ» հետաքրքրական նյութի շուրջ, որը լսվեց մեծ ուշդրությամբ:

Հանդիսության վերջում տեղի ունեցավ գեղարվեստական բաժին, որին իր մասնակցությունը բերեց օպերայի մեներգչունի Արաքս Սվաճյանը, երգելով Սայաթ-Նովայի երեք երգերը՝ ընկերակցությամբ Արալանյան երայիների արևելյան երաժշտական գործիքների:

ԹՂԹԱԿԻՑ





## ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ՔՈՒՄ

### ՀՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ՔՈՒՄ

Արած Խաչատրյանի հորեւանի նշումը Երևանում.— Անցյալ նոյնմբեր ամսին Երևանը նշեց մի նոր երաժշտական տոն՝ հայ ժողովոյի տաղանդավոր զավակ, հօշակավոր կոմնուկտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 60-ամյա հորեցանը։ Հորեցանի առթիվ իր հայրենի ժողովոյին այցի էր եկել Արամ Խաչատրյանը։ Նա մեջին սկայական համերգներ տվեց Երևանում, Լենինականում, Կիրովականում։ Երևանում հենիսակի համերգները տեղի ունեցան Հայֆիլմարմոնիայի համերգային մեծ դահլիճում, կառչուկի գործարանի և ապումինի գործարանի ակումբներում։ Հորեցանը հանդիպումներ ունեցավ Երևանի պետական համալսարանի և կոնսերվատորիայի ուսանողության, երաժշտական ուսումնարանների աշակերտների հետ։ Ամենուրեք անվանի կոմպուտորին ցուց տրվեց բացառիկ խանդակական ընդունելություն։ Այդպիս միայն ժողովորդը կարող է մեծարել իր հանճարեղ զավակին։

Այդ բոլոր հանդիսությունների պահը հանդիսացավ հորեցանական հանդիսավոր երեկոն, որը տեղի ունեցավ Հայֆիլմարմոնիայի համերգային մեծ դահլիճում, Երևանի ընտիր հասարականության ներկայացուցիչների, պետական գործիչների և հոգ բազմության ներկայությամբ։ Եղան բազմաթիվ ողջուններ ուղղված հորեցանին։ Արամ Խաչատրյան ստացավ արժեքավոր նվերներ։ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը նրան ընտիր է ակտունիայի խոկական անդամ։ Հորեւանական հանդիսության վերջում Արամ Խաչատրյանը շնորհ շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամբողջ հայ ժողովոյին, իր նկատմամբ ցուցաբերված հարգանքի ու մեծարանքի համար և նշեց, որ ինքը երաժշտապարտ է հարազատ ժողովորդին իր երաժշտական հաջողությունների համար։

Հանդիսավոր երեկոյից հետո տեղի ունեցավ բացառիկ ճոյն համերգ Ա. Խաչատրյանի ստեղծագործություններից՝ Երևանի երաժշտական հաստատությունների կոլեկտիվների կատարմամբ։

Դիրիժոր Օհան Դուրյանի հաջաղությունները։— Հայաստանի պետական միմֆոնիկ նվազախմբի դիրիժոր Օհան Դուրյանը անցյալ աշխան կրկին նրավիրած էր Դեմոկրատական Գերմանիա՝ մի շաբաթ համերգների։ Լայպցիգում նրան պատիվ տրվեց բացելու համերգայի սեւնը։ Տաղանդավոր դիրիժորը զեկավարում էր Լայպցիգի հօչակավոր «Գևորգիանուս» նվազախմբը։ Համերգի ծրագրի մեջ մտցված էին արևմտավլորպական կոմպուտորների ստեղծագործությունները, այդ թվում նաև գերմանական հայտնի կոմպուտոր Ա. Բրուկների յոթրորդ միմֆոնիան, որի կատարումը, Օ. Դուրյանի մեկնաբանությամբ, ամենամեծ տպավորությունն է թողել ունկնդիրների վրա և համերգների բացառիկ հաջողության գլխավոր առթիվ հանդիսացել։

Լայպցիգի և Ֆեռմինի թերթերը մեծ գովասանքով են խոսել հայ դիրիժորի վարպետության մասին և քարձ գնահատական տվել նրա արվեստին։ Մի շաբաթ թերթը համերգների մասին տպագրված հոդվածները վերնագրել են՝ «Օհան Դուրյան նորից է տոնում հայտանակը», «Արտիստական նրաշը», «Կախարդող Դուրյանը» և այլն։

Համերգներից հետո Լայպցիգի օպերային թատրոնը Օ. Դուրյանին առաջարկել է հանձն առնել իրենց թատրոնում որևէ բեմադրության երաժշտական մեավորումը և դիրիժորը տվել է իր համաձայնությունը։

Ավետիք Խասիակյանի տուե-թանգարանը։— Երևանը հարստացավ մի նոր տեսարժան վայրով։ Դա մեծահամբավ բանաստեղծ, ժողովոյի միջնի վարած Ավետիք Խասիակյանի տուե-թանգարանն է։ Իր կյանքի վերջին 10—12 տարիներին այս տանը ապրել է Վարպետը, իսկ վերջերս, Հայաստանի կառավարության որոշմամբ, այն վերջվեց թանգարանի։ Տուե-թանգարանի տնօրին է նշանակված բանաստեղծ Սուլեն Վահունին։

Բավմաթիվ լուսանկարներ, կարասիներ, ձեռագրեր, նկարներ և այլ առարկաներ պատկերում են համբավավոր բանաստեղծի կյանքը և գրական-հասարակական գործունեությունը, սկսած վաղ պատանեկությունից մինչև կյան-

թի վերջին տարիները: Բանաստեղծի աշխատասենյակը, ընդունարանը և ննջասենյակը պահպանվել են նույնությամբ, ինչպես կենդանության օրոք: Այստեղ պահպանվում են նաև Խանակյալի հարուստ արիմիլը և գրադարանը: Թանգարանի պատերը զարդարված են Մարտիրոս Սարյանի, Հովհաննես Զարդարյանի, Եղուարդ Խաքելյանի, Գրիգոր Խանջյանի և այլ նկարիչների կտամբերով, որոնք նվիրված են Վարպետի կանքին: Պահպանված է «Արու-լաց-Մահարի» հոչակավոր պոեմի ամբողջական ձեռագիրը: Կան նաև նետարքքարական ուրիշ ծեռագրեր, որոնք վկայում են, թե Խանակյալանը ծեռամուլու է եղել գրելու այլ բանաստեղծություններ և պոեմներ: Ամեն օր տուն-թանգարանը ունենում է բազմաթիվ այցելուներ:

**«Սովետական կոմպուտորները».**—Այս ընդհանուր խորագործ Հայաստիրատը լուս է ընծայելու մի շարք գրքեր, նվիրված ժամանակակից սովորակայ կոմպուտորների կանքին և երաժշտական զործունությանը: Լուս է տեսել՝ այդ սերիայի առաջին գիրքը՝ նվիրված կոմպուտոր Եղուարդ Միրզուանին: Գրի նեղինակն է երաժշտության տեսարան Թերեկա Արաւալան:

Եղուարդ Միրզուանը, որ ներկանում է Հայաստանի կոմպուտորների միության նախագահն է, պատկանում է տոմերտակայ երիտասարդ տաղանդավոր կոմպուտորների խնդիրն, որի մեջ մտնում են ամսահիմ համաժանոր դեմքեր, ինսախիք են Արտօն Բարաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Արամ Խուդոյանը, Ղաւարոս Սաղյանը և ուրիշներ: Նրանք բոլորն էլ իրենց եռաժողովական նոռությունը տառացել են Երևանում՝ սկսրում երաժշտական միջնակարգ հյորդում, ապա Կոմիտասի անվան կոնսերվատորիաում, իսկ այնուհետև կատարելագործվել են Մուսիկայում:

Եղուարդ Միրզուանն նեղինակ է մի ամբողջ շարք երգերի, որմանների, սիմֆոնիկ ստեմների և այլ ժանրի ստեղծագործությունների: Նա գույն է «Սովետական Հայաստան» հանրածանության կատարած կատարած կատարած:

Գիր հայ գրամմեների մասին.—Համատերատը լուս է ընծայել հայտնի բանասեր, արքմանաքետ Գարեգին Ալեքսանի եռերի ժողովածուն: Գ. Լեռնանու անուայի մեջ նախակը բանասեներից է, մեծ հմտություն և բագմենումնի բարգաժան տես: Շուրջ ևես ուս առ նա իրեն նիրել է հայ մամուչի և տասարութան, հայոց մին ու նոր գրականութան, հայ բանահուսութան, Անառության, ճարտարանաստության ու երաժշտության ուսումնահոության ընթացակը գործին ու տանի մի առ արքմանաքետության մասին: Մոյ սինիոն մասին և հոսուահան սրբությունը գոյին են սատունում անսիսի արժեքալոր ուսումնասիրություններ, ինչպիսի են «Հայոց սարեօնական մամուն», «Հայ միրոր և տասարութան արմեսուն» և շատ ուրիշներ: Դեռևս 1908 թվականին նա հիմնադրել ու հրատարակել է «Գեղարվեստ» հանդեսը:

Սերվելով գուսանական հայտնի ընտանիքց (նրա հայրը ականավոր գուսան Զիվանին էր), Գ. Լեռնանը բացառիկ սեր ու նետարքքություն է հանուն ենուի դեսի գուսանական արկեստն ու գրականությունը: Այդ ուղղությամբ նրա կատարած արժեքամոր ուսումնասիրությունները լուս են տեսել դեռևս 1890-ական թվականներին:

Ներկա հատորի մեջ գետեղված են Գ. Լեռնանի ուսումնասիրությունները գուսան Զիվանու, Եերամի, Սայաթ-Նովայի և Պաղդասար Դափիրի մասին: Կան առանձին ուսումնասիրություններ առնասարակ գուսանական արվեստի և նաև ժողովրդական երգերի մասին: Հատորը բաղկացած է 500 էջերից: Գիրը ունի Գ. Լեռնանի կլանքին ու գրական գրունենությանը նվիրված ընդարձակ առաջարան և մանակրկիտ ծանրություններ:

Համերգ Մակար Եկմալյանի ստեղծագործություններից.—Վերջերս Հայֆիմարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված Մակար Եկմալյանի ստեղծագործություններին: Ականավոր հայ երաժշտագետի ստեղծագործությունների երկրորդ համերգն էր սա անցյալ աշնանից: Ինչպես և առաջին համերգի ժամանակ, դահլիճը լիփ-լեցուն էր: Համերգին մասնակցում էին Հայֆիմարմոնիայի մենակատարները և պետական երգեցիկ խումբը՝ Հովհաննես Զիրիջյանի ղեկավարությամբ, ինչպես նաև Հայֆիմարմոնիայի վաստակավոր կոլեկտիվ պետական սիմֆոնիկ նվազախումբը: Կատարվեց «Վարդ» կանտատից մի մեծ հատված: Հանդիսականները բացահայտ ցիրությամբ ընդունեցին «Կիրիկիա», «Օելթունցիններ», «Հայաստան» երգերը, որոնք ժողովրդի խնդրանուզ կրկնվեցին, հանրաաեսության ժողովրդական արտիստ Շարա Տալանի կատարմամբ:

Երևանի թժկանան ինստիտուտի 40 տարին.—Լրացավ Երևանի թժկանան ինստիտուտի 40-ամանկը: Եր գոյություն առաջին տարիներին ինստիտուտը հանդիսանում էր Երևանի պետական Համալսարանի հակուստեններից մեկը: Հետագան միամին ան առանձնամեծ և վեռականմենց որսես ինքնուրուսն ինստիւտը: Նեռևախի ինստիտուտը ունի շուրջ 1200 երկսեռ ուսունող: Ան ոչ միան ուսումնական, արև խորոր գիտական հասառություն է, որի ուրքը համախմած են Հայաստանի թժկանան ամառանության ամառանություն ուժերու: Եր առութան 40 տարիների ընթացում ինստիտուտը տվել է մի ռանի հայկա ուսունական թժկանան երևներից:

**Սիրիների տեռումներ.**—Երևանի ու նեռու, ասաւածեան Ալենինուում ամառության 1963 թվականի ծովագունդ առաջանաւած առողութեանու: Պետման աշխատանքներն ասաւեն տառնում են 1950 թվականին սկսած: Խեցւի հաստին է, այս ամեռու ուսուություն շրանին նախանու խողութեանու: Մինչևաեռու եածուութ է Ը ուսուու թթառությունիս առաջ: Անուան տառիների տեռումների ժամանակ հայտնաենութեան է եղեւ ամեռու մինչաեթու իս նուր արթսաներու, առաջանան պալատների ու հեթանոսական տաճարների հետքերով:

1963 թվականի աեղումների ժամանակ հայտնակ հայտնակ բերքավեցին ուրարտական Արգիշտի թագավորի ապաստին կից կառուցման հարակի սրաները, որոնք իրենց մեծությամբ և շրեղությամբ տես սիրում բուն պալատին: Այդ սրաներից կենտրոնական ունի 500 բառականի մետր տարածություն: Սրանի պատերը շրեղորեն զարդարված են եղեւ որմանկարներով: Պալատի մյուս մասերում հայտնա-

թերվեցին նաև պահեստների և արտադրական շենքերի մետքը: Արտադրական շենքերից մեկը ներկայացնում է մետաղածուլաքարան: Հին ուրարտացիներն այստեղ, հավանաբար, պատրաստել են զենքեր և աշխատանքի գործիքներ: Հայտնաբերված են գործիքների, նետերի և զարդեռնի նմուշներ, որոնք պատրաստված են եղել պալատական արթևստանոցներում: Մեծ զարգացում է ունեցել կերամիկ արտադրությունը, որի մասին են վկայում միջնաբերդի գանձավան մասերում հայտնաբերված մեծաքանակ կերամիկ առարկաները:

**Հետաքրքրական բվեր.**— Ներկայում Հայաստանում տարածվում են (բաժանորդագրությամբ և հատավաճառ) ավելի քան 900 000 օրինակ զանազան թերթեր և ամսագրեր (միութենական, հանրապետական և դեմոկրատական երկների): Խոշոր տեղ են գրավում հանրապետական թերթերն ու ամսագրերը, որոնք կազմում են շուրջ 650 000 օրինակ:

Հայաստանում այժմ հրատարակվում են 30 անուն թերթ, ավելի քան 500 000 տպաքանակով և 41 անուն զանազան բնույթի ամսագրեր ու հանդեսներ, շուրջ 130 000 օրինակ տպաքանակով: Հայերն լեզվով հրատարակվող թերթերն ու ամսագրերը տարածվում են նաև Սովորական Միության հայաշատ վայրերում և արտասահմանան երկներում: 1963 թվականին արտասահմանան երկներն են ուղարկվել պարերաբար 6000 օրինակ հայերն թերթեր և ամսագրեր: Հայաստանի ընթերցներն իրենց հեթին արտասահմանից ստանում են ինչպես հայերներ, այնպէս էլ օտար լեզուներով հրատարակվող թերթեր ու ամսագրեր: Միայն դեմոկրատական երկների 92 պարբերական հրատարակություններ ստացմում և վաճառվում են հանրապետության քաղաքներում: 1964 թվականի համար Հայաստանից 150 000 հոգի բաժանորդագրիվ են միութենական թերթերին և ամսագրերին:

**«Հայֆիլմ»** կինոստուդիայի նոր կինոժապավենները.—**«Հայֆիլմ»** կինոստուդիան վերջին քա է Թողել մի քանի կինոժապավեններ: Դրանցից մեկն է «Ճանապարհ դեպի արենա», որը դիտվում է մեծ հետաքրքրությամբ: Կինոժապավենը պատկերում է Երևանի պետական կրկեսի, մասնավորաբետ այդ կրկեսի ծաղրածու Լեռնիդ Ենգիբարյանի արվեստը: Ժապավենը գոլանվոր է և լայնէկրան: Այն նկարահանման են ուժիշխորներ Աւոն Խաչակիանց և Հենրիկ Մալայանց, երաժշտությունը գրել է Կոնստանտին Օքբեյանը: Կինոժապավենը նկարահանված է հայերն և ռուսերն և հաջողությամբ ցուցադրվում է Հայաստանի և Սովորական Միության մոտ հանրապետությունների կինոթարորներում: Ներկայի կինոժապավենը կրկնօրինակվում է անգերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իտալերեն լեզվուներով:

Մոռ ապագային պատրաստ կինին «Երգում է Գոհար Գասպարյանը» գեղարվեստական կինոժապավենը, որն ամբողջովին նվիրված է ականավոր երգչություն ստեղծագործությանը: Նկարի մեջ առնված են հատվածներ՝ «Անուշ» և «Ալբակ Ծըլորոյ» օպերաներից՝ Գոհար Գասպարյանի կատարմամբ, ինչպես նաև երգչություն երգացանի մեջ մտնող բոլոր նշանավոր երգերը:

Կինոստուդիան պատրաստ է նաև մեկ ուրիշ կինոժապավեն, որը կոչվում է «Շմիկարին անցում»: Այն պատկերում

է Բաբու—Երևան գավամուշի շինարարության ընթացքը: Ինչպես նայանի է, այս գավամուշի, որի երկարությունը հավասար է շուրջ 850 կիլոմետրի, շնորհիլ է, որ Հայաստանի խոշոր քաղաքները՝ Երևանը, Լենինականը, Կիրովականը և Ալավերդին ստացան Աղբերեցանի զավը:

Նկարահանվում է և շուտով պատրաստ կինին «Արտիստը գեղարվեստական կինոժապավենը», ըստ Շիրվանցիի համանուն վիպակի: Կինոժապավենի սեմիստրոն է Արման Մանարյանը: Նկարահանումները կատարվել են Երևանում և Օդեսայում:

**Հայաստանի բնական հարստությունները.**— Հանրանայտ են մեր երկիր բնական հարստությունները՝ պղինձ, մոլիբդեն, ամենատարբեր տեսակի շինարարական քարեր, մարմարներ, պեմզա, կրաքար, կավահողեր, հանքային ջրեր և այլն: Այս ամենը լավ է չափերով արդյունահանվում են, ծառայեցվում երկրի արդյունաբերության վարչական գործառնությունների համար:

Հրագրանի շրջանում հայտնաբերված նեֆելինային սիհանիտների (լեռնա-հանքային պատաման) անսամբան պաշարները պատճառ դարձան, որ Հրագրանում կկավի հանքա-բիմիական խոշոր գործարանների կառուցումը: Մի քանի տարուց հետո այլ գործարանները երկրին կուան միինունավոր տոննաներով կավահող (այլումինի և այլ տեսակի արդյունաբերական ծենարկությունների համար), պորտլանդ ցեմենտ, նատրի և կալիումի մետասիլիկատ, բյուենապակի և շատ ու շատ բիմիական այլ նյութեր:

Սևանի հարավ-արևելյան ափին, Բասարգեցարի շրջանի Զոդ գյուղի շրջանում, հայտնաբերված են ոսկու հանքեր: Ներկայիս ամստեղ կառուցվում է գործարան՝ հանքերի շահագրդման համար:

Ավելի քան երեք միջիարդ տոննա են հաշվվում Երևանի և Կոտայքի շրջաններում հայտնաբերված աղի հանքերի պաշարները, որոնք արդյունաբերությամբ համար:

Ալավերդու շրջանում շուրջ 15 տարի է ինչ գործում է հրակայուն աղյուսի գործարան, որի արտադրանքը խիստ կարևոր և անբրածեց է մետաղածուլական արդյունաբերության համար: Սակայն Սևանի հիուսիս-արևելյան ափերին գտնվել են այնպիսի հանքերի շահողությամբ կարելի է պատրաստել հրակայուն աղյուս և այլ հրակայուն առարկաներ: Այդ հանքերի միման վրա նախագծված է կառուցել հրակայուն իրերի նոր գործարան:

Երկրաբանները Հրագրանի, Արովյանի (Կոտայք) և Սիսիանի շրջաններում հայտնաբերել են երկարի հանքերի պաշարներ և պացուցել, որանց արդյունաբերական շահագրծման նշանակությունը: Առաջիկային նախատեսվում է սկսել այլ հանքերի շահագրծմանը: Եղենաձարի շրջանում հայտնաբերվել են նաև նոր հանքավայրեր: Նույն շրջանում, Ձերմուկի մոտ, հայտնաբերված են կվարցի հանքեր, որոնք կոչվում են «Ձերմուկ»: Կարագային շրջանում շորի համար շշեր պատրաստելու:

Հարուսակվում են Երկրաբանական-հետազոտական աշխատանքները՝ նաֆթ և գազ հայտնաբերելու ուղղությամբ: Երկրաբանները համոզված են, որ Հայաստանում անպայման պետք է նաֆթ ու գազ լինեն: Ստացված են հորատման նոր տեսակի մերենաներ, որոնց միջոցով կարելի է փորել հանքահորեր մինչև 4000 մետր խորությամբ, մինչդեռ մինչև այժմ փորված հորերը 2000 մետրից չեն անցել:

Տուժի պաշարները Հայաստանում:— Ինչպես հայտնի է, Հայաստանը հարուստ է բազմապիսի շինարարական քարերով և մարմարներով: Դրանցից ամենատարածվածը տուժ քարն է, որի հետազոտված պաշարները հաշվվում են ավելի քան Երկու միլիարդ խորանարդ մետր: Հայաստանն ունի 12 տարերե գույնի և երանգի տուժեր՝ սպիտակ, կարմիր, վարդագույն, դարչնագույն և այլն: Տուժի հանքերը գերազանցապես գտնվում են Արագածի ստորոտներում, Փամբակ գետի հովտում և Երևանի շրջակալրում: Հայտնաբերված բոլոր քարահանքերը շահագործվում են: Հանքերից ամենախոշորը և մերենայացվածը Արտիկի քարահանքերն են, որոնք տարեկան տակին են 4–500 000 խորանարդ մետր շինարար:

Հայաստանի տուժ քարերը, բացի հանքածուության ներին պահնջները բավարարելուց, մեծ քանակությամբ արտահանվում են Վրաստան և Ադրբեյչան:

**Հանքային ջրերի նոր գործարան.**— Հայաստանը հարուստ է բազմապիսի արժեքավոր հանքային ջրերով, որոնք բուժական հաստկություններ ունեն: Հանքապետրայան մեջ և նրա սահմաններից դուրս մեծ համբավ ունեն «Ջերմովկ», «Արվնի», «Հանքավան» և «Դիլիջան» հանքային ջրերը, որոնք տարեկան տասնյակ միլիոնավոր շջերով արտահանվում են Սովետական Միության տարբեր վայրերը: Վերջին 1—2 տարում լայն տարածում է գտել նաև «Սևան» կոչված հանքային կապուրիչ ջուրը, որի աղբյուրները գտնվում են Կամո (Նոր Բայազե) քաղաքի շրջակայրում: Հիշյալ աղբյուրների ջուրը լայնորեն օգտագործելու համար, ներկայիս կառուցվում է հանքային ջրերի խոշոր գործարան, որը տարեկան կտա 40 000 000 շիշ ջուր: Գործարանը պատրաստ կլինի 1965 թվականին:

**Պահածոների նոր գործարան.**— Ավարտվել և շահագործման է հանճնվել Վեդու պահածոների գործարանի առաջին հերթը: Մյուս հերթը պատրաստ կլինի 1964 թվականի ամառնը: Այս գործարանը թվով լոթերորդն է Հայաստանում մրգից և բանջարեղենից պահածոներ արտադրող: Աշխատանքի բոլոր գործողությունները կատարվում են մերենաների օգնությամբ: Գործարանը օրական կարող է արտադրել մինչև 120 000 տուփ զանազան պահածոներ:

